


ԲԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄՈՏ



ՀԱՅԱՍՏԱՆ



ԲԱՐԿԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

891.99

Կ-29

Ապրիլի 1 1961 թ.

ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄՈՏ

(ԱԿՏԱՐԱԿԵՐ)

11 28222 / 2946
11



ՀԱՅՊԵՏՌԱՍ

ԵՐԵՎԱՆ

1948

БАБКЕН КАРАПЕТЯН
У ГЕРОЕВ
(Очерки)
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1948

ՎԵՐԱԴՐՅԱՆ

Նա քայլում էր դանդաղ և մտազբազ: Այն ճամփան, որով քայլել էր նա շորս տարի առաջ, արդեն լայնացել էր և ասֆալտապատվել:

Շուրջը կարծես ամեն բան փոխվել էր, գեղեցկացել: Փոխվել էին նաև մարդիկ, որոնց նա ճանաշում էր պատերազմից առաջ: Նրանք էլ դարձել էին ավելի գործնական ու սիրալիր:

Կողքից սլանում էին մեքենաները, անցնում էին մարդիկ՝ ոտքով, հեծանիվով, կառքով, — այդ բոլորին նա անտարբեր էր: Նրան դեռ կայարանից կլանել էր այն փոփոխությունը, որ կատարվել էր իր բացակայության տարիներին:

Քաղաքը փոխել էր իր դեմքը — լայն սողուտաներ՝ բարձրահարկ վարդագույն շենքերով ու ծառուղիներով, կանաչազարդ պարկեր՝ նոր պուրակներով, էլեկտրական կաթնագույն լապտերները՝ գլխավոր պողոտաներում՝ ծայրից ծայր...

Զկան այլես կավաշեն միահարկ շենքերի մնացորդները բաղաքի կենտրոնում...

— Այո, մեծ փոփոխություններ են կատարվել, — ասաց նա ինքն իրեն, շինելը մի թեկո մյուսը փոխադրելով...

Տարված իր մտքերով՝ նա չնկատեց, թե ինչպես հասավ բարձունքին: Նա խոր շոմա քաշեց՝ ներքեւ դնելով զինվորական պայուսակն ու շինելը:

Նրա առջև բացվեցին հայոց բարձր լեռները. — Ահա, — բացագանչեց նա, — Ալագյաղը՝ «ադամանդյա թաղը գլխին», Հրեն և Արա Գեղեցիկի սարը:

Նա մանկան հրճվանքով պարզեց ձեռքերը, ասես ուզում էր գրկել այն, և սեղմել իր մեծ կրծքին... Նա շնչեց լեռնային մաքուր, թարմ օդը, որը ասես զովացրեց նրա սիրատուրը, կարոտակեղ սիրտը...

Չորս տարի նա երազել էր նորից տեսնել իր հարազատ Հայաստանը և ահա, հազարամյա հավերժական հմայքներով նա փոխած է իր առաջ:

Սուավութը դեռ նոր էր բացվել, սուր աշքը կարող էր նկատել լուսնի արծաթե եղջյուրը երկնքի անհուն լազուրում...

Երեանը կապույտ մշուշի մեջ, Արարատյան անափ դաշտավայրում, ասես հավերժության մեջ լիներ տարածված:

Այդ բարձունքից ո՞ւմ հոգին չի զմայլվել նվիրական բաղաքի տեսարաններով՝ տարիվ բոլոր եղանակներին ուժամերին...

Հարությունը նայեց քաղաքին: Ի՞նչ սքանչելիք...

Լայնատարած քաղաքի կենտրոնական մասում արևի շողերի ներք կարմիր գույնով շողզողում էր անմահ կենինի բրոնզե հսկայական արձանը...

Կենին—անմահություն:

Հարությունը նայեց արևին, որ շողում էր ինչպես հաղթանակի մարտական դրոշ հայոց մայրաքաղաքի վրա, հիշեց պատերազմի առաջին մոայլ օրերը, երբ ինքը ընկերների հետ կենինի արձանի մոտ երդում տվեց՝ շվերազառնալ հայրենի օջախ, մինչև շահախախմբի մերջին թշնամին...

Հիշեց ընկերներին, որոնք իր հետ երդվեցին: Շատերն այլևս շվերազարձան կամի գաշտից, իրենց մատաղ կյանքը գրին հայրենիքի համար մղած սկայբարի սուրբ գոհասեղանին...

Հարությունի խաչոր, ու աշքերը մշուշվեցին. նա հիշեց

մարտերը կովկասյան լեռներում, Ղրիմի թերակղզում, Օդի-
րի մոտ...

Եվ նրա աշքի առջևով անցնուամ էին ինչպես կինոժապա-
վինը, մարտերը, իր մարտական ընկերները՝ կովի բոցերի
մեջ նետվելիս...

Հարությունը գուցե երկար թև կտար իր մտքերին ու
բաղձալի երազանքներին, եթե մեքենայի սուլոցը չսթափեց-
ներ նրան:

— Ընկե՛ր, շգիտեմ ինչպես կոշեմ, զինվորական թև քա-
ղաքացի, — դուրս գալով մեքենայից, ժպտադեմ մի շինելա-
վոր մարդ դիմեց Հարությունին:

— Ի՞նչ կա, հիմա արդեն ո՛չ զինվորական, զորացրվել:
տուն եմ զնում:

— Այդպես էլ կա, տեսնում եմ, ճակատից ես գալիս և
արժանավոր մարդ ես, ո՞ւմ ես սպասում, թե այս ճանա-
պարհով ես գալիս, զնանք միասին, մեքենայում տեղ կա...

— Շնորհակալ եմ: Խնձ հաճելի է այսպես, ոտքավ...
երևանի զինկոմիսարիատում առաջարկեցին տրանսպորտ,
հրաժարվեցի...

— Կարուաել ես, երևում է, հալրենի հողին...

— Այո, շատ...

Բայց անծանոթ մարդու մտերիմ և սիրալիր վերաբեր-
մունքը կոտրեց Հարությունի համառությունը, նա բարձրա-
ցավ մեքենան, և այն շարժվեց:

— Երևում է, հեռվից ես գալիս. — ասաց անծանոթը:

— Ի՞նչ գիտեք.

— Գիտեմ, որ Թամանյան դիվիզիայից ես, չավ ես
կովել, մասնակցել ես Բեռլինի գրավմանը, հիմա էլ բայց
ճակատով գնում ես տուն: Ապրե՛ս

— Դուք կատակում եք, դուք այդպիսի մանրամասնու-
թյուններ իմանալ չեիք կարող...

— Գիտե՞ք ինչ, ընկեր Հարություն (այստեղ արդեն Հար-
ությունի գարմանքը հասավ գագաթնակետին, երբ խոսա-
կիցը տվեց իր անունը), գիտե՞ք ինչ կա, — կրկնեց նա, — այն,

ինչ ես տսի, կարող է ասել ամեն մի քաղաքացի, երբ մի անգամ նայի ձեր կրծքին: Շքանշանը խոսում է լավ կովելու մասին, իսկ մեղալները՝ ձեր անցած մարտական ուղու... «Կովկասի համար», «Բեռլինի գրավման», հետո էլ թերթ կարդում ենք... և փոքր դադարից հետո Հարությունին պարզեց օրվա թարմ թերթը, ուր տպված էր Հարությունի նկարը...

Հարությունը դո՞ւ ժպտաց:

Մեքենան կանգ առավ շրջկենարունում, պարտիական շրջկոմի դռան առաջ: Անձանոթն իջավ՝ մնաս բարեկ և հաջողություն մաղթելով զորացրվածին, ապա դարձավ շոփի-րին.

— Ընկերոջը կտանես մինչև տուն և կվերադառնաս:

Շոփերը նայեց բենդինի բակին, բայց վճռական կարդարությունը սահմանը նրան հուալ տալ աջ ոտքը, և մեքենան սլացավ առաջ:

Հարությունի համար այս դեպքն անսպասելի էր և նա հետաքրքրվեց ով էր այդ անծանոթ սիրալիր մարդը; Չատհավանական է, ճակատում է եղել, դրա համար էլ դիտե ճակատայիններին գնահատել:

Անձանոթ մարդը շրջանի պատասխանատու աշխատող էր...



Լեռների գրկում ծվարած գյուղը շատ էր փոխվել: Նա դուրս էր եկել իր հին սահմաններից: Նրա շենքերը, որոնք կառուցվել էին պատերազմի տարիններին, բազմել էին արգեն սարերի հարթության վրա, ճանապարհին:

Հարությունը տեսավ երկհարկանի շենքեր, ծառուղիներ, դպրոցի նոր շենքը, լայն մաքուր փողոցներ...

Մեքենան կանգ առավ կոլխոզի վարչության գրասենյակի առաջ:

Համագյուղացիներն անմիջապես շրջապատեցին մեքենային:

— Մեր Հարությունը, — բացագանչեց երեխաներից մեզ և կայծակի արագությամբ երեխաները՝ ինչպես կենդանի ռադիո, աղդարարնեցին Հարությունի վերադարձը...

— Ո՞վ է վերադարձել, — հարցնում էին մայրերն ու պառավները սրտատրով:

— Ո՞վ է եկել, — հարցնում էին դեռ իրենց սիրելիներին սպասող աղջիկներն ու ջահել հարսները...

— Մեր Հարությունը, քեզի Հարութը...

Մի քանի րոպե անց՝ կոլխոզի վարչության գրասենյակը լիքն էր մարդկանցով: Ամեն մեկը ծերից մինչև պատանին պարտք էր համարում մոտենալ, գրկել և համբուրել Հարությունին, ապա կարուտած հայացքը հառելով հերոսի դեմքին՝ շշնչալ.

— Բա մեր տուն չե՞ս գալու...

Հարությունը սիրալիր պատասխանելով յուրաքանչյուրին, շտապում էր րոպե առաջ մտնել տուն, տեսնել մորը, երեխաներին, կնոջը...

Բայց տնեցիք. նրան կանխեցին. դեռ տան բակին շնասած կինը ընդառաջ վագելով «Հարություն ջան» ասելով ընկավ ամուսնու վզովը: Հարությունը գրկեց երեխաներին, համբուրեց, ապա երկուսին էլ գիրկն առնելով, համագյուղացիներով շրջապատված՝ դիմեց դեպի տուն. նա քայլում էր գոհ ու հպարտ: Զեռքերի վրա ծլվլում էին իր երեխաները:

— Բա, Հարութ, չես ասիլ ի՞նչ. անցյալ տարի մի բացբերան ասաց, — թե ինքը իբր տեսել է, լեզուս չի բռնում ասեմ, որ դու ընկել ես թշնամու գնդակով, — դիմեց համագյուղացի ալեհեր Խեցոն:

— Բա դու ի՞նչ ասիր, — ժպտալով հարցրեց Հարությունը:

— Իսկ պիտի ասեմ: Մտածմունքի մեջ ընկա: Դե ես գիտեմ քո ուժն ու դվաթը, քո ճարպկությունը, սիրտս վկայում էր, որ քեզ բան չէր լինի...

— Շնորհակալ եմ, քեզի Խեցո:

Հարությունը դարբասի դմից ներս մանելով՝ կանգ տռավ. նրա աշքի առջև կանգնած էր իր նոր տռւնը:

Կոլխոզը իր միջոցներով այդպիսի 25 տռւն էր կառուցել և վերանորոգել ռազմաճական մեկնած իր հերոսների համար:

Շրջապատճերը համկացան, թե ինչու Հարությունը կանգ տռավ: Նրանց հայացքներն առում էին, «Դու հերոս ես, հայրենիքիդ սուրբ գործի համար շորս տարի արյուն ես թափել, կյանքդ շնո խնայել, և քեզ համար այդ մենք ենք պատրաստել»:

Հարությունի ուրախ գեմքը արտահայտում էր շնորհակալություն և իրախտապարտություն: Նա երկխաներին կնոջը հանձնելով մի քանի հաստատ քայլ արավ դիպի տան դուռը, շոքեց, համրուրեց տան շեմքը և ներս մտավ: Ներս մտան և մյոււները:

Լուսավոր սենյակները ասես ավելի լուսավորվեցին հերոսի մուտքով:

Հյուրերն անմիջապես տեղավորվեցին: Ոչ մի ժամանակ ամքան մարդ չէր հավաքվել Հարությունենց տանը: Ասեղ կցելու տեղ չկար: Հարությունի կինն անմիջապես սկսեց հաշի պատրաստությունը տեսնել:

Անվերջ հարցեր էին տալիս Հարությունին և ուշադրությամբ լսում հերոսի հպմեստ պատմությունները կույի դաշտից: Մինչդեռ դրսում արդին վառվում էր խարուվկը: Խաչն մորթեց այն աշխարթ, որ նախատեսել էր Հարությունի վերադարձի համար:

Իիքը պղինձները քլքլում էին... Սպիտակ սփոռոցը ձյուն նման փայլում էր երկար սեղանին: Բաժակների մեջ փրփրաց կարմիր, արարատյան նռնանուշ գինին:

Այստեղ աճապարեցին նաև սազանդարները և աշուղները: Զլեց զուռնան: Թամադան բաժակ տռնելով՝ բարձրացավ տեղից:

— Թանկագին ընկերներ, վերադարձավ հակառակ մի հերոս ևս, Մենք համփա դրինք շորս տարի առաջ կոլխոզնիկ

Հարությունին, էսօր նա վերադարձավ իր պարտքը կատարած Տղամարդու նման, թշնամուն ծնկի բերած... ես շատ էի կարոտել Հարությին...—Այստեղ ծեր թամագուն չկարդացավ զսպել իր, ուրախության արցունքները, փաթաթվեց Հարությունին ու ջերմ համբուրեց:

Ուրախությունից լալիս էին նաև Հարությունի և մյուս ների մայրերը, բայց այդ լացը ընդհանուր մեծ ցնծության մեջ շեր էլ նկատվում: Աշուղները տեղն ու տեղը երգեր հորինեցին հերոսի վերադարձի առթիվ.

Մեր լայն դաշտերը նորից ազատ են,
Մեր վառ վարդերը նորից բացվում են,
Մեր ծաղիկները ձեր ոտքի տակ են,
Դուք բարով եկամ, խիզախ ներոսներ...

Զուգնան. ծորաց հայկական քաղցրանուշ սրտահույզ մեղեդին. բոլորը մի պահ տիսրեցին. երգի հոգեզմայլ թոթիունների միջից բարախում էր ժողովրդի նրբազդաց ու բազմահույզ սիրար. Ապա երգի տրամադրությունը քիչ-քիչ բացվեց և միանգամից փոխվեց աշխույժ շուրջպարի: Դուքս նետվեցին ջահել տղաներն ու աղջիկները: Վերջիններս հագել էին իրենց տոնական գույնզգույն խաս շորերը, որ սնդուկներից հանել էին Հաղթանակի օրը...

Երգն ու պարը մի պահ դադարել էին, և թամադան ուղարկում էր իր խոսքն ասել, երբ դրան մեջտեղում երեաց լայնաթիկունք, խանդավառ մի տղամարդ...

— Երվա՛նդ...

— Հա՛րութ...—բացագանշելով իրար զրկեցին ժանկության ընկերները... Նրանք ուաղմի դաշտում հիշում էին իրենց գյուղը, սարերը, պաղ աղբյուրները, հայոց կապաշտ երկինքը, Արարատը, հայրական օջախը, և հիմա հանգիպելով իրար՝ մռացան շրջպատը:

Նրանք միասին կնինի հրապարակում երգում տվին և

միասին Կովկասյան լեռներից կռվելով թշնամու դեմ՝ հասան թեռվին, ապա անսպասելի իրարից բաժանվեցին և հիմա հրկին հանդիպում էին հին, մարտական ընկերները:

Եվ ի՞նչ պիտի խոսեն մարտական ընկերները, անգամ յուսավոր պալատներում կամ նրբին երաժշտական համերգի պահին, վայելլության ամենաերջանիկ րոպեներին,—այն, թե ինչպես միասին նայում էին մահվան սև աշքերին։ Նրանք հիշում էին զրկանքները, խոտե ցեխոտ անկողինը, ոմբակոծությունը, ցուրտ ու մոռայլ վայրկյանները գրոհից առաջ... նահանջի ցավը ու հարձակման, հաղթանակի սիրտ թնդացնող ուրախությունը...

— Է, բա հիշո՞ւմ ես մեր գեներալ Սաֆարյանին, որ եկավ մեր դիրքերը, հարազատի պես խոսեց մեզ հետ, ասաց, որ Կոփվը պրծակվ, լավ քեֆ պիտի անենք։

— Ես վաղը պիտի հրավիրեմ նրան մեր տուն, —կտրեց Հարությունի խոսքը Երվանդը...

Եվ այսպես քեֆը տաքանում էր, իսկ մարտական ընկերները, ինչպես անմեղ պարզասիրու մանուկներ, պատմում եւ ուրախանում էին, և հպարտ էին, որ քաջ են կռվել...

Արևի ոսկե ճառագայթները փայլվիլում էին քեֆ անողների ուրախի ու երջանիկ գեմքերին...

Կինը զբաղված էր թանկագին հյուրերին նոր ուտեսուներ հրամցնելով։ Մայրը ասում էր.

— Բե՛ր, հարս ջան, մեր Հարութի մեծ տոնն է էսօր...

Երվանդն ու Հարությունը ներողություն խնդրելով թամադայից, դուրս ելան ոմի րոպե մաքուր օդ շնչելուա...

Ոսկի էր հագել դաշտ, լեռ ու արոտ... Բարի առավոտ, իսկ լավ առավոտը լավ օրվա նշան է...

Դուրս գալով Հարությունը նկատեց գյուղամիջում սպիտակ բազալտից կառուցած աղբյուր-հուշարձանը...

Առանց Հարությունի հարցին սպասելով՝ Երվանդը, որ երկու ամիս շուտ էր վերադարձել գյուղ, աշխատում էր ժերեկ բրիգադիր և տեղյակ էր ամեն բանին, պատմեց ընկե-

շնոջը աղբյուրի մասին.—Մեր ժողովուրդը բոլոր հայկական գյուղերում կառուցում է այդպիսի աղբյուրներ—անմահության աղբյուրներ՝ Հայրենական Պատերազմի հերոսների հիշատակը հավերժացնելու համար...

Երախտապարտ է մեր ժողովուրդը և նա չի կարող շպատվել իր զավակների հիշատակը. նա սիրում և հավատում է իր հերոսներին, Այստեղ Հարությունը այլևս շդիմացավ, պատմեց, թե ինչպես զորամասից դուրս գալով ամեն տեղ իրեն դիմավորում և ընդունում էին ջերմ, ուշադիր, ինչպես հարազատ որդուն:

Երվանդը պատմում էր, թե կոլխոզը ինչպիսի հաջողությամբ ավարտեց աշնանացանը և կազմ ու պատրաստ դիմավորում է գարնանը: Խոկ Հարությունը հոգու աշքերով տեսնում էր կյանքի գարունը: Այս գարունը կյանքի գարուն է լինելու:

— Բերքառատ ու լի...—ասացին միասին:

Եվ սրտերը կծիծաղեն սրտառուշ ու բերկրալի:

Բացվում է կյանքի գարունը:

Այդ գարունը մարտերի բոցերում կոփեցին բազմաթիվ սովետական մարդկանց, որոնք վերադառնում են տուն՝ ստեղծարար աշխատանքի...

Հայրենիքը նրանց ընդունում է գրկաբաց: Տոն է այսօր ամեն մի հարկի տակ, ամեն մի գյուղում, քաղաքում, Ռեպարտիկայում, Մեծ Սովետական Միությունում: Այդ խընդություննը անվերջ է, դա հաղթանակի պանծալի խնդությունն է...

Հողը շնչում է ազատ, նրա ցելերը ժպտում են, վերադարձել է տերը.—ամուր, ջլապինդ ձեռքը: Տոնական է ֆաբրիկաներում, դրմաներում—վերադարձել է կառուցող, ստեղծարար ձեռքը:

Վերադարձել է Հայրենական Պատերազմի հերոսը,—մեր Հայրենիքի պաշտպանն ու պատվարը:

Հաղթողն է վերադարձել: Նրան փառքի նրան են ժպտուք
վառ ծաղիկները, հովասում ծաղկավառ դաշտերը, բաղցրիկ
ու արգավանդ այդիները: Նրանց գրկաբաց ընդունում է
մայրերի մայրը, մեր մեծ, սքանչելի Հայրենիքը:

1915 թ. Կապուտան, Եղեան

Գ Ա Ր Ն Ե Ս Ն Ե Ս Մ Ո Ւ Տ

Նրան, այդ սեահեր ու սեաշյա աշխույժ պատանուն եռ
միշտ հիշում եմ գարնանամուտին։ Հիմա, երբ ձյան խոշոր
փաթիլներն են սպիտակ թիթեռների նման իջնում Երևանի
վրա, ծանծկում փողոց ու տուն, ես մտաքերում եմ անցած
մի արևոտ գարնանամուտ՝ իմ մանկության անմոռաց օրե-
րից։



Մեր քաղաքն այն ժամանակ շարունակում էր կրել իր
նահապետական հին անունը՝ Գյումրի, չնայած նրան կոչել
էին Ալեքսանդր արքայի անունով։ Աշխնչ այնքան համահըն-
չուն չէր այդ քաղաքի նիստ ու կացին, քարերին, որքան
Գյումրի անունը։ Մի հարկանի նեղ խանութիւնների ու խորտ-
կարանների շարքերը, ձիակառքերի ու սայլերի խմբերը, յոթ
բարձրաշեն եկեղեցիները։

Քաղաքն ամիելի նման էր գյուղի, որովհետեւ նրա հյու-
սիսային մասի բնակչությունն զբաղվում էր գյուղատնտե-
սությամբ, ուներ իր բոստանները, անասունները, կալն ու
ախոռը։ Նա քաղաք էր այնքանով, որ կոչվում էր քաղաք (Ալեքսանդրոպոլ) և... այնտեղ մուտք էր գործել մեքենան...

Շիրակի շինականը հաճախ լքելով իր ծագման ու հոգնա-
աանց աշխատանքը՝ գիմում էր պանդիստության՝ Բաքու,
Թիֆլիսի, Երևան... Այդպես էլ, երբ Թոփառպի գյուղի Դի-

լանյանների ընտանիքը ծայրահեղ թշվառությունից քայլաբար վեց, որբացած պատանի Մինասը երկու գարեհաց խուրջինե մեջ դրած՝ բռնեց Գյումրու ճամփան...

Դեմից նրան նայում էր միահարկ տների գորշ միօրինակությունը, Միակ թովիչ լույսը դեպոն էր, անվերջ ժամացող իր շոգեքարշերով։ Դուրս գալով գյուղից (իսկ գյուղը գտնվում էր լեռների բարձր գրկում, որտեղից պարզ երևում էր քաղաքը), երկաթգծերի ճանապարհով, ձմռան մի խստաշունչ օր Մինասը մտավ դեպո։

Այդ 1917 թվականին էր։



Դեպոն առողջ ու ուժեղ աշխատողների կարիք ուներ, իսկ Մինասը վտիտ էր ու թույլ, նրան շընդունեցին։ Բայց նա հաստատ որոշել էր դառնալ երկաթուղային։ Երկաթուղայինները պահեցին նրան, այդ գեղեցիկ, սրամիտ ու աշքաբաց պատանուն և սովորեցրին վագոնները զննելու աշխատանքը։ Նա դարձավ վագոնների զննիչ, ապա տեխնիկական գրագիր, կայարանի հերթապահ։

Համեստ բնավորությունը, համառ աշխատասիրությունն ու հարգանքը դեպի շրջապատի բանվորությունը՝ ստեղծեցին Մինաս Դիլանյանի համար մեծ վստահություն...

1920 թվի պատմական օրերն էին. ակնկալիքներով. վտանգներով հղի թվականը, երբ ես առաջին անգամ տեսանրան։

Թե ի՞նչ էր անում նա զրահագնացքի վրա, ինձ համար պարզ չէր։ Նա բանվոր էր, աշխատում էր վագոնում, բայց գենք ուներ։ Ուրեմն զինվոր է, —մտածում էի ես, շիմանալով, որ այդ ժամանակ ըանվորն ու զինվորը մի մարդ են դարձել...

Մտորումների մեջ ցեխոտ փողոցներով վերադառնում էի տուն, երբ մի հաստատ ձեռք քնքանքով գրկելով ինձ, սթափեցրեց։ Շրջվում էմ։ Այն երիտասարդն է, Մինաս Դիլանյանը։

— Հը՝, ի՞նչ էիր անում մեր կողմերում:

Ասես հանցանքի մեջ բռնված՝ կարմրեցի և մի պահ՝ պատասխանի խոսք շգտա:

— Ինչո՞ւ դպրոց չես գնացել, գնա, լավ սովորիր:

— Իսկ ո՞ւմ տղան ես,—շարունակեց հարցնել նա և զրույցն ստացավ մտերմական բնույթ, դարձավ ավագ ու կրտսեր եղբայրների խոսակցություն:

— Գարնանամուտ է, տեսնո՞ւմ ես, ձյունը հալվում է: Շուտով ուրիշ ձներ էլ կհաջեն, կբացվի իսկական գարում, պայծառ գարում... Եվ նայելով իմ հնամաշ շապկին՝ ավելացրեց, —որ դու ձմռանը առանց վերարկուի լինես...

1931 թվին, ձմեռային մի օր, իրերի բերումով ես մտակենինական քաղաքի երկաթուղու վարչությունը:

— Ո՞րտեղ է Դիլանյանը:

Ինձ առաջնորդեցին նրա աշխատանոցը: Լայն ու լուսավոր սենյակը կահավորված էր կապի գանրազան բարդ սարքավորումներով: Մեջտեղում դրված մեծ սեղանի վրա փոված քարտեղի դեմ, խոսափողի առաջ նստած, մեջքը մեր կողմը դարձրած լինելով՝ նա չնկատեց մեզ, բայց շերմությամբ պատասխանեց մեր բարեկին՝ շարունակելով իր կարգադրությունները, որպես հրամանատար ռազմի դաշտում: Ուզեկիցս նկատեց իմ հետաքրքրությունը և առանց հապաղելու բացատրեց.

— Սա երկաթուղու սիրտն է, հրամանատարական բլինդաժը, այստեղից՝ դիսպեշտերական կայանից կարդադրությունները գնում են բոլոր կայարանները:

Տվյալ դեպքում ընկեր Դիլանյանը, համապատասխան բաժանմունքի պետի հրամանի, կարգավորում է ողջ երթևելությունը հարավային գծերում:

— Սանահին, և գնացքը Ալավերդուց ընդունել երկրորդ գծի վրա և սպասել իմ կարգադրությանը..., ապա քարտեղի վրա ինչ-որ նշում անելով՝ նա դառնում է մեզ...

Աղջագուրվում ենք որպես եղայլուներ...

— Արարատ, Ն Ն վագոններն շատավ դատարկել և կցել
Ն գնացքին.

— Կիրովական, զնացքը պատրաստէ, ժեզլը կարող եք
հանձնել...

Հրամանատարը իր տարերքի մեջ է և մենք ժամադրվե-
լով բաժանվում ենք...

Անցնում են տարիներ, կրկին առիթ եղավ նրան հան-
դիպելու...

— Սա չէ՝ Դիլանյանենց տունը, — հարցնում եմ ընկե-
րոցս...

Ստուգելով հասցեն՝ բարձրանում ենք աստիճաններով
վեր...

Անժիկը, որ Կոմիտասի հոգեզմայլ եղանակներից մեկն
էր նվագում գաշնամուրի վրա, մեզ տեսնելով ընդհատում է
նվագը, ժպտում ամաչկոտ:

Հայրն արդարացնում է աղջկա վարմումքը — դե, հայ
աղջիկը միշտ էլ ամոթիւած է եղել... Այ, Մարտունիկը ուրիշ
է, նա ամաշել շփիտե... ցույց է տալիս փոքր տղային, որ
դառն է սերտում:

Ներկայացնում եմ ընկերոջս, կենտրոնական մամուլի
ներկայացուցիչներից մեկին, որին հետաքրքրում է Հայկա-
կան ՍՍԾ Գերագույն Սովետի դեպուտատության թեկնածու-
առաջադրված Մինաս Դիլանյանի կյանքը:

Խոռակցությունը չի կայանի: Մինասի լակոնիկ պառաս-
խանները «այո»-ն կամ «ոչ»-ը չեն բավարարում բնկերոջաւ:

Միամիտը զփառէ, որ ամեն մի վաստակած մարդ հա-
մեստ ու սակավախոս է՝ մանավանդ իր նկատմամբ: Եր-
կուսն էլ իմ կողմն են նայում, ասես օգնություն խնդրելով:

— Պատմեք ձեր շքանշաների պատմությունը, որն ին-
չի համար եք ստացել, — փորձում եմ օդնած լինել հա:

— Կարմիր Առաջի շքանշանը ստացել եք 1935 թվին՝

աշնան-ձմեռային փոխադրումները լավ կազմակերպելու համար, իենինի շքանշանը՝ Հայաստանի երկաթուղիների (5-րդ բաժանմունքի) աշխատանքները հմուտ ղեկավարելու, պետական առաջադրանքները ժամանակին կատարելու համար, Հայրենական Պատերազմի շքանշանը, «Կովկասի պաշտպանության համար», «Աշխատանքի արիության համար» մեդալներն ու պատվավոր երկաթուղայինի կրծքանշաններն ստացել եմ պատերազմի տարիներին կատարած աշխատանքներիս համար...

Նույն ժևատ խոսքը, որ չի կարող բավարարել լրագրութին:

Նա դժգոհության ակնհայտ նշաններ է անում.

Այն ժամանակ ես ընկերոջս եմ հանձնում տեղական օրաթերթերից մեկը, ուր տպված է Մինաս Դիլանյանի մասին:

«Մինաս Դիլանյանը հին վաստակավոր երկաթուղայիններից մեկն է, արդին տասը տարի է նա գլխավորում է Անդրկովկասյան երկաթուղիների Հայաստանի բաժանմունքի շահագործման աշխատանքները: Ենելով ժողովովի, բանվորների ծոցից՝ իր ազնիվ աշխատանքով ու ընդունակություններով նա այսօր երկաթուղայինների ավագն ու նրանց տաղանդավոր ղեկավար-կազմակերպիչն է: Որքա՞ն աշխատանք, որքա՞ն անքուն գիշերներ է լուսացրել նա, որքա՞ն եռանդ ու կարողություն դրել Հայաստանի երկաթուղային շահագործման անխափան աշխատանքն ապահովելու գործում:

Երկաթուղայինը պետք է աշխատի ժամացույցի մեխանիզմի նման,—այս է նրա հարցերի հարցը, որի համար նա իր կյանքն ու եռանդը չի խնայել և չի խնայում:

Նա աշխատանքի էնտուղիաստ է: Աշխատանքում նա մոռանում է ամեն ինչ: Բոպե թերացումը կարող է բացասարար ազդել, անգամ աղետների տեղիք տալ տրանսպորտում—այդ մասին լավ գիտե բաժանմունքի պետ, նախկին բանվոր ու դիսպետչեր Մինաս Դիլանյանը, երկաթուղային-



ների կողմից հարգված ու սիրված մարդը, նա՝ մեր նախկին դեպուտատը, առաջադրված 1937 թվին, որ պատվով կատարեց իր պարտականությունները ժողովրդի առաջ և այսօրվա դեպուտատության մեր սիրելի թեկնածուն՝ Հայաստանի Պետության Գերագույն օրդանում...»:

Մինչ ընկերս կվերջացներ ընթերցումը՝ ես դիմում հմ Մինասին.

— Հիշո՞ւմ ես, Մինաս, գարնանամուտը...

Նա պայծառանում է:

— Ի՞նարկե հիշում եմ, շէ՞ որ այն մեզ նմանների կյանքի գարնան առավոտն էր, նոր կյանքի զարթոնքը:

Դրսում ժպտում են լույսերը, լսվում է երջանիկ երիտասարդության աշխույժ երթևեկն ու խոսակցությունը: Խոսում էր Մոսկվան—ռազիոն հաղորդում է մայրաքաղաքի շերմ շունչը:

Երկիրն իր արժանավոր զավակներին ընտրելու տոնական օրվան է պատրաստվում...

1 Փետրվարի 1947 թ.

Երկան

Ք Ա Զ Ա Ր Ա Ն

Առավոտը գնացքին դիմավորում է արշալույսի ոսկե շողերով...

Հետեւ թողած մրգառատ այգիներով Արարատյան դաշտավայրը, վսեմ Մասիսների ձյունագար, նվիրական հասակները՝ գնացքը վերջին անգամ թեքվում է ասես թրի հարվածով կիսված գորշագույն լեռան միջով, և դուրս է գալիո կանաչավնտ մի բացատ...

Ռելսերի արծաթի ժապավենը ձգվում է առաջ ու առաջ: Վեհորեն երկնքին են նայում ամենի ժայռերը:

Արծիվը թեին տալով ճախրում է Սյունյաց հպարտ լեռնաշխարհի վրա: Արևի շողերը փայփայում են նրա հզոր թևերը. ներքեւում հանդարտ հոսում է լայնահուն ու գորշ Արաքսը, Մայր Արաքսը...

Նա ասես Արարատների կրծքից է բխում...

Արաքսը հոսում է մեր գնացքին զուգընթաց, բայց նրա անխռով հայացքը չի արտահայտում մրցման ոչ մի նշան...

Ո՞րքան վեճ, ո՞րքան խորհրդավոր է նա: Ասես գալիս է դարերից, բերելով իր հետ մեր ազգի անհուն վշտերը, եղեռնական ու արյունալի գեպերով հարուստ պատմությունը... Գուցե մեծ բանաստեղծ Գամառ-Քաթիպայի բանաստեղծության մանկութ օրերին ստացած խոր տպավորության արդյունքն են այս իմ խոհերը: Գուցե:

Գնացքը սլանում է Մայր Արաքսի ափերով, ու անվերջ իմ լուսամուտի տակ ինձ է նայում նվիրական գետը:

Նա մեկ հեռանում է, մեկ մոտենում, բայց միշտ մոտ ու հարազատ։ Հոսում է ծանր ու հանդիսավոր... Նա հեղա-սահ անցնում է իր կանաչ ափերը համբուրելով, իսկ եթք հանդիպում է պղնձափայլ, կարծր ժայռերին՝ մի անապո-րույն ուժով մարտի մեջ մտնում նրանց հետ...

Նա մեկ ժպտում է մանկան պես, իր արկից օծված ոսկե կոհակներով, մեկ դառնում է մռայլ, մտասույզ ու ցասում-նալի...

Ի՞նչ է ասում նա, շգիտեմ...

Ճարտարապետ Գրիգոր Մելիքյանը, մեկը նրեանի վա-յելլակազմ երիտասարդներից, ուշադրություն չի դարձնում Արաքսին, նա մատիտով ինչ-որ նշումներ է անում իր բլոկ-նոտում...

Նրան ծանոթ է այս ճանապարհը, Հայկյան դարավոր գետի բազմախորհուրդ հայացքը, դրա համար էլ նա ան-տարբեր է դեպի իմ ուշադրության առարկան...

— Երբ Արաքսի աջ ափն էլ կծաղկի մեր ուժից, այն ժամանակ միայն ես իմ հիացմունքի խոսքը կասեմ,—ընդ-հատում է իմ մտածմունքների թելը երիտասարդ ճարտարա-պետը...

Ես վերստին նայում եմ Մայր Արաքսի հայացքին. Նա հարազատ, բարի մոր նման ժպտում է, կարծես լսել է հար-տարապետի խոսքը: Իսկ հարկան կուպիում այդ պահին արտասվում էր մի կին...

Ինչո՞ւ, շգիտեմ...

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Երեան—Բաքու զնացքը կանդ առավ Մինչևան կայարա-նում:

Ղափան տանող հատուկ գնացքը սպասում էր իր ուղե-վորներին: Գարնան արևմ իրեն զգալ էր տալիս:

Մաքուր, կիսսարար օդը, թարմ, խիտ կանաչով ծածկ-ված լեռնալանջերն ու հովիտները, նորաբողբոշ ծառերը բնության գիրկն էին հրավիրում աշխատանքի մարդուն:

Վագոնները լեփ լեցուի են մարդկանցով...

Զինվորականներ, որոնք արձակուրդ ստացած գալիս էին տուն, տեսնելու իրենց հարազատներին, իսկ շատերը՝ զորացրվել և պատվով ու փառքով, իրենց պարտքը հայրենիքի հանդեպ կատարելուց հետո, կրծքերը զարդարած մարտական շքանշաններով ու մեղալներով գալիս էին առմիջաւ:

Բոլորն էլ Զանգեղուրի լեռնաշխարհի խիզախ զավակներ...

Կոլտնտեսականները, շինարար ու լեռնադործ բանվորները տարբերվում են զինվորականներից ոչ միայն իրենց զգեստներով, այլ և իրենց խոսակցության նյութով...

— Սեպտեմբերին երկիրը կստանա առաջին մոլիրդնը; — ասում է մեկը:

— Դժվար թե սեպտեմբերին հասցնենք ֆլուտացիոն ֆաբրիկայի կառուցումը, — պատասխանում է թիկնեղ, սեպտեմբերիստասարդը:

— Իսկ պաշարը հարուստ է, — դիմեց անկյունում նստած լեյտենանտը, որին շատ էր հուզում սկսված խոռակցությունը, և նա իր անվերջ հարցերով հերթ շեր տալիս իր դիմացը նստած զինվորներին ու սպաններին...

— Ինչքան որ քեֆդ տար, — պատասխանեց երրորդը, որի արտաքինից գատելով՝ պետք է ինժեներ կամ տեխնիկ լիներ...

Պատասխանը ոչ միայն շբավարարեց լեյտենանտին, այլև թվաց, թե կատակ է,

— Քեփիս որ հարցնես, ես կուղենայի, որ այս Զանգեղուրի բոլոր լեռները ոսկու հանքեր դառնային...

— Ի՞նչ է, կարծում ես ոսկին ավելի արժեքավոր է բան մոլիրդնը, — կրկին լեյտենանտի խոսքը կտրեց նա...

Այստեղ էր ահա, որ զինվորականների հետաքրքրությունը փոխվեց հուզմունքի, իսկ մի քանիսը, այդ թվում նաև լեյտենանտը, կարծելով, որ իրենց հասկացողի տեղ դնելով անլուրջ պատասխաններ են տալիս, սկսեց սրել...

— Գրպանումդ սկի էդ ոսկուց շկա՝, — հարցրեց լեյտենանտը շարժվելով իր տեղում...

Բոլորը սրտաբաց ծիծաղեցին:

Ճարտարապետ Նիկոլայ Պողոսյանը իրեն շկորցրեց: Նա դիմի ընկավ, որ իր անրավարար և կարճ պատասխաններից նրանք կարող էին այդ թյուր եզրակացությանը գալ: Մի քանի քառակի լուսուց հետո, երբ երիտասարդները խաղաղվել էին, սկսեց հանգիստ տոնով.

— Ես կատակ չեմ անում, երբ ասացի, որ այնքան մոլիբդեն կա, որքան քեֆներդ ուզի, իսկ որ նա ուսկուց ավելի թանկ է մեր երկրի կարիքների համար, դրանում միք կասկածի...

— Քեֆներս մի կողմ մնա, իսկապես ինչքա՞ն կլինի, — հարցրեց առանց ուսաղիրների սպայի համազգեստով մի այլ երիտասարդ:

— Երբ կլինեք մեզ մոտ, կասեմ, թե որ լեռը ինչ հարստություն ունի, իսկ հիմա այնքան իմացեք, որ Սովորական Միության մոլիբդենի պահանջի մի զգալի մասը Քաջարանն է տալու...

— Զեր գյուղը, — կատակեց կապիտանը՝ նայելով լեյտենանտին:

— Մի քիչ էլ գուցե ձեր գյուղը, — ասաց լեյտենանտը ոչ թե պատասխանած լինելու համար, այլ հիշեցնելու, որ Օխչի գյուղն էլ իրենց գյուղից հեռու չէ:

Բանվորները նոր հասկացան, թե ինչու լեյտենանտը այդպիսի եռանդով հետաքրքրվում էր Քաջարանի կառուցման աշխատանքներով...

— Զեղ շվատացնեմ, բայց պետք է ասեմ, — շարունակեց ճարտարապետը, — Քաջարանի շինարարությունն այնպիսի մեծ հեռանկարներ ունի, որ հնգամյակի վերջում թե՛ Քաջարանը և թե՛ Օխչին իրենց տեղը կդիմեն այդ գիգանտին:

— Ինչպե՞ս, — հանկարծակի եկածի նման հարցրեց մի զինվորական, որ լուր լսում էր ընկերների մեկ խաղաղ, մեկ աշխառված խոսակցությունը:

— Դուք ո՞րտեղացի եք, — պատասխանելու փոխարեն հարցով դիմեց ճարտարապետը...

— Օխչեցի:

— Հենց ձեր գյուղում, գերեզմանոցի մոտ, սարալանջին կառուցվելու է ֆլուտացիոն հարստացուցիչ մեծ ֆաբրիկան: Ֆլուտացիոն ֆաբրիկաներից մեկը հիմա կառուցվում է Հանքավանում, իսկ խոշորագույնը, որը ժամում տասնյակ տոննաներով քարհանք է մշակելու, ձեր գյուղումն է կառուցվում: Զեր գյուղի մոտ է հիմնադրված նաև աղյուսի գործարանը:

— Էդ իլելու բան չի, — մեջ մտավ ինքնավստահ մի ծեր գյուղացի...

— Ինչո՞ւ, հայրիկ, — հետաքրքրվեցին զինվորականները ավելի շատ, քան ճարտարապետը:

— Գործարանները կկառուցվեն, բայց ո՛չ մեր գեղերի տեղը: Հանքը որտե՞ղ, մեր գեղը որտեղ...

— Ներողություն, այդ հանքերը Սուլր Դավթի սարերը շե՞ն, — մեջ մտավ նորից սևաշա հարցասեր լեյտենանտը...

— Հենց էդ է, որ կա:

— Ճիշտ է ասում հայրիկը, ու մեր գեղը՝ Քաջարանը և ու էլ Օխչին իրենց տեղից չեն շարժվի:

Գնացքը կանգ առավ, ընդհատելով հետաքրքիր խոսակցությունը, բայց որովհետեւ բոլոր խոսակիցների մարզրուտը հայտնի էր, նորից հանդիպելու վատահությամբ վերցնելով իրերը՝ իշան վագոնից:

Դափանում տիրում էր անսպասելի անդորրություն:

Կայարանը գրեթե դատարկ էր, քաղաքի դատախազն էր եկել ուիլլիսով՝ Երևանից ժամանող մարդուն դիմավորելու:

— Ո՞ւր է ժողովուրդը, — ինքնարուխ թռավ ընկերոշմ քերանից, որին քաջ ծանոթ էր այս արդյունաբերական կենտրոնի փառքն ու պատմությունը:

Դատախազը անխոս, ներողամտաբար նայեց ընկերոջս, այդ լոռության մեջ ամփոփելով իր ողջ լոջությունը:

— Հանքերում աշխատում են, — ասաց Հարցասեր լեյ-
տետանտը, որ իշնելով վագոնից՝ իր իրերը ցած դրած երևի
սպասում էր դիմավորողի:

Որքան երջանիկ էր իշխան Գրիգորյանը (այդպես էր
հարցասեր լեյտենանտի անունը): Նա հինգ տարվա բացա-
կայությունից հետո վերադառնում էր հայրենիք...

Նա այստեղ սպասում էր իր սիրած աղջկան, որը և
եկավ...



Հարթ, ասֆալտապատ խճուղին դուրս դալով Ղափանից՝
ժառախիտ, գեղեցիկ ուղիով, Օխչի դետին հակընթաց,
սկսում է բարձրանալ լեռն իվեր:

Գետն անցնելով՝ ճանապարհը դառնում է խորդ ու
բորդ, ցեխոտ, նեղ ու անանցանելի:

Այստեղ ճանապարհը դեռ խճապատ չէ, և մեքենայի ա-
նիվները հաճախ մինչև կեսը թաղվելով ցեխի մեջ՝ հաղիկ են
հոնդալով դուրս գալիս ճանապարհ:

Ամպամած երկնքից անձրե է սկսում կաթիթել:

Մեքենավար Արամայիս Հայրապետյանը մեծ ճարպկու-
թյամբ փոխելով «Փողերը», իր գործին լավ տիրապետող
վարպետի վատահությամբ հսկայական բեռնատար մեքենան
կեռման ճանապարհներով տանում է առաջ:

Մեքենան բարձրանում է վեր ու վեր: Ճանապարհն
անցնում է երկնքի. կուրծքը խրված բարձր լեռների գոտիով,
պարանոցով... Հմուտ ձեռքը կարծր ժայռերի կողքից բացել
է ճանապարհ, որը լեռների վրա գալարվելով սլանում է ա-
ռաջ: Վերից ճանապարհի վրա կիսով շափ գորշ ժայռեր են
կախված, ասես հսկելու շինանյութերով բեռնավորված մե-
քենաների երթը:

— Սա էլ մեր Զանգեզուրի լեռները, — ասում է խան-
դավառ Արամայիսը, երբ մեքենան շրջապտույտ կատարե-
լով հասավ «Առգի Կապ» կոչված ահոելի լեռնաժայռի դրեթե
պագաթին:

Մեքենան հազիվ է անցնում, դեմս միայն ձյունածածկ, լեռնագագաթներն են, իսկ երբ նայում եմ ձախ, անհատակ անդունդն է, ուր հիդրոկայանը թվում է մի սպիտակ կետ:

Թվում է, թե ինքնաթիսի մեջ ես գտնվում:

Արամայիսը կանգնեցնում է մեքենան: Մենք իշխում ենք: «Սուրբ-կապ», շշնջում եմ ինքս ինձ:

Սրտատրոփի և զգույշ մոտենում ենք ճեղքված ժայռերի եղբին ու նայում ներքեւ, այդտեղ ոչ ոք չի կարող սարսափ շղգալ տեսնելով լայներախ անդունդը...

— Հրեն, տեսնո՞ւմ եք,—ասում է Արամայիսը,—է՞ս Զրախորդէսն է: Զանգեղուրի բոլոր հանքերը, քաղաքը այստեղից են էներգիա ստանում: Դիմացի կանաչապատ լեռան վերից մինչև հիդրոկայանի սպիտակ շենքը ուղիղ գծով իշնում է սպիտակ գիծը՝ տուրբինը, իսկ ներքենում տեղ-տեղ հաղիվ նշանաբլում է Օխչի գետը:

— Ասում են հազար տարի առաջ այստեղ քաղաք է եղել, և կոշվելիս է եղել Կապան,—շարունակում է Արամայիսը իր բացատրությունները եռանդուն էքսկուրսավարի նման:

— Այ, տեսնո՞ւմ եք այն բացատը, այնտեղ է եղել քաղաքը, որն իր անունը ժառանգել է մեր քաղաքին (Արամայիսը զափանցի է): Կապան-Ղափան:

Արծիվը ճախրում է ուղիղ մեր գլխավերենում:

Ո՞ւր ենք մենք, անցնում է իմ մտքով և հիշում եմ իմ ընկերներից մեկի՝ պատմածները՝ այս վտանգավոր ճանապարհորդության մասին...

— Ո՞վ է այն հերոսը, որ բացել է այս դժվար ճանապարհը: Այստեղ խիստ անտառ է, դարավոր կաղնիներով ու կեշիներով: Այս ծերպերին նրանք դարերով բողբոջել, ծաղկել են, բայց հզոր, շինարար ճեռքը, պայթեցված ժայռերի բեկորները նրանց շատերին արմատահան, ոմանց ձղակոտոր են արել... Նրանք կանգնած են ծերպերին որբերի նման ցնցոտիների մեջ, ծեծված, անտերև ու վշտահայց...

— Իսկ այդ դժվար՝ Սատանի կապը, ո՞վ է կառոցել, — կատակով հարցնում եմ մեքենավարին...

— Գնանք, ցույց կտամ...

— Ժայռի գագաթներից, այս էնտեղից, որտեղ արծիվն է նստած, ճանապարհորդները պարաններով ցած են իշխցըն Հորատողին, որը լեռան այս կարծր մասերում անցքեր է բացել, ապա դրվել է պայմուցիկ նյութը... Լեռները դողացել են ու իրենց կրծքի վրա ճանապարհ տվել երկաթակամ խիզախ մարդուն,—պոետիկ տրամադրությամբ ասում է Երեվանի Զոռվետ ինստիտուտի դասախոս Վաղինակ Ռոկանյանը, որը գիտական նպատակներով եկել էր իր հայրենի Զանգեզուրը...

Աննկատելի անձրեւ փոխվում է ձյան, իսկ երբ Արամայիսը իր բեռնատար ավտոն զգուշությամբ արդելակելով, լեռան զառիվայրով ցած էր իշխցնում, ձյունը խոշոր, առատ փաթիլներով իշնում էր սպիտակեցնելով լեռների կապույտ, գեղեցիկ քողը...

Ես լուր նայում էի վտանգավոր ճանապարհին և մտածում նրա կառուցողների մասին, վստահ մեքենավարի հրմանաթյան մասին...

— Դուք «Դավիթ Բեկը» կարդացել եք անշուշտ. ներուզություն. անհարմար էլ կլիներ, որ կարդացած շինեիք, գրող մարդ եք... այս հրեն Դավիթ-Բեկի բերդը:—Այս ասելով Արամայիսը դանդաղեցրեց մեքենայի երթը...

Բարձրավեհ լեռը տիրապետում է այս լեռնաշխարհում: Դավիթ Բեկը՝ լինելով մեծ զորավար, հենց այդ լեռան վրա է կառուցել իր հաստատ ու ամուր բերդը: Թավուտ անտառ է եղել այստեղ, և հիմա էլ դալար, սաղարթախիտ ծառերի լայն թփերի ստվերում, եթե նախապես ցույց շտաս, հասարակ աշքը դժվարությամբ կնշմարի կիսավեր բերդի կարմիր ու գորշագույն պատերի գոսացած, մամուապատ մնացորդները...

Լեռան հյուսիսային կատարի լայնությամբ վեհորեն ձգված անհողդողդ բերդը ասես հիանում է բնության փառահեղ և ահարկու տեսարանների, իր ստորոտում եռացող ստեղծագործական աշխատանքի վրա...

Այստեղ Զրախորի էլեկտրակայանի լայնացման և ճանապարհաշինարարների կայանն է։ Փայտաշեն տնակներում կան շարժական արհեստանոցներ, խանութներ, իրենց վարպետներով ու բնակիչներով...

— Հիմա բոլորն աշխատանքի մեջ կլինեն, — ասաց Արամայիսը, բաց թողնելով իր հոնդացող մեքենայի «սանձեռը» — արգելակները...

Մեքենան թափով սլացավ առաջ։ Ներքեռում, մեր առջեւ վեհ լեռների գեղատեսիլ գրկում բացվեց մի լայն տարածություն՝ ծածկված հաստարուն, դալարաթև ծառերով։

— Ահա Ձերվայի կամուրջը... Սկսվում է երազանքի ու խորհրդածությունների աշխարհը... Հիշում եմ մեծ Բաֆֆու հիասքանչ վեպի մանրամասնությունները։

Ջյունը իշխում է խոշոր փաթիլներով, և ինձ թվում է, թե ընկել եմ հերիաթային մի աշխարհ, և ուրո՞ր է այս կուսական անտառների միջից դուրս կգա իր սև նժույգին նստած հայրենարադ վիպասանը...

Հոգեպարար խորհրդածություններից ինձ հանում է Արամայիսը...

— Հասանք։

Ճանապարհը հատվում է։ Ճանապարհաշինարարներն այստեղ աշխատում են, թեև անձրւն ու իշխող ձյունը գժվարացնում են շինարարների գործը...

Կես կիլոմետրի վրա ճարտարապետները, տեղամասերի պետքը իրենց վարպետներով ու բանվորներով ուղղում են ժամանակարից, որպեսզի բեռնված մեքենաների համար ճանապարհ բացվի...

Սովորական Միության հերոս Ռուբեն Հակոբյանը արտաքուատ ոչնչով յի տարբերվում աշխատանքի իր ընկերներից՝ Հարությունյանից, Լյոսկումից, Թումանյանից, Խականդարյանից, Թարախչյանից, որոնք գլխավորել են խճուղու գժվարին աշխատանքները...

— Ահա թե ովքեր են բացել Սուրի-Կապը Նրկնաւուաց
լեռների կարծր պարանոցին, իրենց հզոր ձեռքերով ու ան-
սասան կամքով...

Նրանք արհամարհելով բնության արհավիրքը՝ ձյունը-
անձրեր, փոթորիկը, բացել են այս հուշ կարևոր ուղին և հի-
մա էլ լցված պարտքի բարձր գիտակցությամբ՝ շարունա-
կում են գլխավորել աշխատանքը... Ահա նրանք՝ լուրջ, խան-
դավառ ու լայնալանջ: Ներքին մի հուր նրանց մղում է
սիրագործության...

Զյունն ու անձրեր թուլացնում են ճանապարհի վրա կախ-
ված լեռնային խոշոր զանգվածները, որոնք հաճախ գահա-
վիժում են ներքեւ:

Եինարարները հազիվ բաց են անում ճանապարհը, բայց
այդ զանգվածները նորից կտրում են մեքենայի ուղին:

Շատ բանով են Զանգեզուրի զավակները՝ նման իրենց
երկրի արծիվներին: Նրանք Հայրենական Պատերազմի տարի-
ներին ցույց տվին խիզախության, հերոսության անթառամ-
օրինակներ, իսկ այսօր նրանք այս լեռներում բաց են անում
այնպիսի մի գանձ, որի մասին պիտի խոսի մեր ողջ անձաւ-
րածիր հայրենիքը...

Մինչ այդ գանձին հասնելը մեծ դժվարություններ են
հաղթահարվել, տարիներով այս լեռներում ձյան ու հողմերի
տակ մաքառել են մեր աննկում, պանծալի երկրաբանները,
ձիերով կամ հետիոտն, իսկ հիմա, երբ դանված է կյանքին
այնքան անհրաժեշտ բարիքը՝ գանձը, զանգեղուցիները
բարձր լեռներում բացում են նոր ուղիներ, որով մոլիրդեննու
պղինձը բեռնված մեքենաներով պիտի հոսեն մեր մեծ աշ-
խարհի բոլոր կողմերը...

Մենք հետիոտն ենք անցնում այդ նոր շինվող, մեքենային
անմատչելի ճանապարհը: Այնտեղ մեզ սպասում է ուրիշ մե-
քենա...

Փատավառ դեմքով, զվարթ տրամադրությամբ երեսումն
անց մի երիտասարդ մոտենալով մեզ՝ սիրալիր բարեւում է,
ապա շտապ, կարծես ժամանակ շկորցնելու համար հարցնում՝

— Դուք մեզ մոտ պիտի դաք չե՞:

— Դուք ո՞ւր եք գնալու...

— Այստեղ բոլոր հանապարհները Հռոմ կտանին,—կառակով ասում է նա, գործի գցելով մեքենան... Հարություն Տեր-Դումայանը իններորդ ամիսն է, ինչ վերադարձել է արտասահմանից, Թէհրանից, իր կողու ու երեխաների հետ:

Նա Քաջարանի կոմբինատի լավագույն և կարգապահ շոփերներից է:

ԱՅՍԵՊ. ՔԱՂԱՔ ԿԼԻՆԻ

Երբեմնի մոռացված այս խուլ ու հեռավոր լեռնաշխարհում երկհարկանի այս կիսավարտ շենքերի սիրուետները տարօրինակ հակասությամբ են բնդգծվում... Այս վայրերին մինչ այժմ ուսպական են եղել գյուղականն ու պրիմիտիվը: Գուցե մեր աշքն է այդպես սովորել: Գուցե եվ այդ է պատճառը, որ երբ այդ անմատչելի ուղիներով ու կածաններով, թավոտ, կուսական անտառներով ու ապառաժներով, մեքենան հանկարծ մեղ հանեց այդ շինարարությունները, մենք նորից գտացինք մեղ կյանքի մեջ...

Ո՞ւր են հասել մեր աննկուն երկրաբանները,—մտածում եմ ես:

Նրանք գտել են գանձը, իսկ հետո մեր Ռեսպուբլիկայի լավագույն մարդիկ եկել են այս լեռներում կանգնեցնելու Ստալինյան չորրորդ հնգամյակի հոյակապ կոթողներից միկը:

Պղնձա-մոլիբդենային կոմբինատը մեր մեծ սովետական երկրի մետաղամշակման հսկաներից մեկն է, Հայաստանի ինդուստրիալի պատեր...

Այստեղ աշխատելը պատվի ու փառքի գործ է..., իսժենիր-երկրաբան Ալեքսանդր Օսիպովիչ Օգանովս, Քաջարանի դիրեկտորը, առաջին անգամ իր հաշվապահի, պլան բաժնի պետ Մալումյանի և ճարտարապետներ՝ Աստախովի ու Ֆեդերնկոյի հետ եկան այստեղ ձիերով...

Քաջարան գեղատեսիլ պյուղից ոչ հեռու, Օլշի գետի

ափին խփեցին վրանները, հետո հիմնադրեցին առաջին փայտե տնակները, հետո սկսվեցին միհարկանի, ապա երկհարկանի քարաշեն տների կառուցումը: Դյուզը շինարարական տեղամասից գտնվում է ընդամենը մեկ կիլոմետր տարածության վրա, բայց այդ տարածությունը հիմա արդեն լցվում է բարձրացող նորակառուցյներով...

Կոմբինատի տեղամասից մինչև Օխչի գյուղն էլ հազիվ երեք-շորս կիլոմետր լինի, բայց շինարարության ծավալն արդեն ընդգրկել է մինչև իսկ այդ գյուղերը...

Որպեսզի կոմբինատի շինարարության ծավալի մասին մոտավոր գաղափար կազմի իմ հարգելի ընթերցողը, ասենք, որ տասը հազար վագոն միայն ավագ է հարկավոր...

Նախատեսված է հնգամյակի ընթացքում կառուցել միջնակարգ և տարրական դպրոցների, կինոյի, թատրոնի, հիմնադանոցի, մանկապարտեզի ու մանկամսուրի շենքերթնակարանային շինարարությունը պլանավորված է: Գետի ափին շորս հեկտար տարածությամբ ձգվելու է կուլտուրայի և հանգստի պարկը:

Այստեղ կլինեն էլեկտրակայաններ, որոնք լույսի փնջեր կսփռեն այս լեռների վրա:

Այստեղ քաղաք կլինի...

Կոմբինատի բանվորներն ու նրանց ընտանիքի անդամները կապրեն կուլտուրական, լիառատ կյանքով:

Միահարկ շենքերը կանոնավոր դասավորությամբ, ինուլում դուգահեռ, լայն լուսամուտներով նայում են դիմացի վեհատեսիլ լեռան, որը տիրապետողն է այդ հոյակապ լեռնաշխարհում...

Դավիթի լեռանն են նայում նաև այդ միահարկ տներին գուգահեռ լեռան լանջին բազմած երկուհարկանի շենքերի պատուհաններն ու պատշգամբները...

Այս շենքերում ապրում են նորերս արտասահմանից եկած մեր եղբայրներն ու քույրերը...

Այստեղ, Քաջարանի տեղամասում կա հիվանդանոց, գրադարան-ընթերցարան, ակումբ, դպրոց, ճաշարան:

— Ինչպես վերը ասացի, ըստ հնգամյա պլանի կու-

նենանք կուլտուրայի տուն՝ կինո-թատրոնի հոյակապ շենք, հիվանդանոց իր բոլոր բաժիններով ու հարմարություններով, տարրական ու միջնակարդ գալրոցներ, կուլտուրայի պարկ և այլն...—բացատրում է տեղամասի աշխաղեկը և. Եղանակնը, որ մի երիտասարդ եռանդուն մասնագետ է:

— Բարե, վարպետ,—սիրալիր դիմում է աշխաղեկը հայրենադարձ քարհատ Արմենակ Մինասյանին, որը քարայրում իր աշխատանքով տարված չէր նկատել մեր մոտենալը:

— Բարե՛, բարե՛,—պատասխանում է վարպետը՝ մի հայրական շերմ հայացք նետելով մեզ և շարունակում է անցքեր պատրաստել քարի հսկայական զանգվածում, ուր պայթուցիկ նյութեր պիտի լցվեն ապառաժը պայթեցնելու համար:

— Բնկեր Արմենակը մեր առաջավոր ստախանովական-ներից է և իր ամսական առաջադրանքը միշտ գերակատարում է...

— Ինչպե՞ս եք զգում ձեզ, վարպետ,—հարցնում եմ պատկառելի լեռնագործին:

— Քե՞ֆա կհարցնես...

— Այս, գործերդ, քնֆդ, տրամադրությունդ,—ասում եմ ծերունուն, որի դեմքին տարիներն ու շարքաշ կյանքը իրենց ակոսներն են փորել, իսկ աշքերում նստած է ինչ-որ անբացատրելի վիշտ...

— Գործերնիս հաջող են, իսկ երբ մարդու գործն հաշող կըլլա, անոր քեֆն ալ աղեկ կըլլա...

Ապա գործն ավարտելով, մոտենում է ինձ.

— Ափսոս, եղանակը աղեկ չէ, եթե ամառը գայիք, ան ատեն գործերն ալ ավարտած կըլլայինք... Զեզ ոգեսրելու շատ բան կըլլար:

— Ոշինչ, ինձ հայտնի է, թե ինչեր պիտի կառուցվան այստեղ,—հանգստացնում եմ ծերունուն, որի աշխույժ շարժումներն ու առույգ հայացքը սազական էին միայն քառամյա երիտասարդին...

— Գալ տարի եկեք հոս քաղաք մը կտեսնիք. մեր

քաղաքը մենք պիտի կառուցենք, — հպարտությամբ ասում
է նա:

— Վերջացրի աշխատանքը, — ասաց սպայի հագուստով,
քայց քաղաքացու գլխարկով մի երիտասարդ, զինվորական
հստակությամբ ու շեշտով:

— Իշխան, այդ դո՞ւ ես:

— Այո՛, ինչո՞ւ ժամանակ կորցնեի, — ասաց Իշխան
Գրիգորյանը՝ նայելով վարպետի պատրաստած անցքերին:

Ընթերցողը անշուշտ հիշում է այդ գեղեցկատես, արծվի
հայացքով, սեսև հոնքերով ու աշքերով լեյտենանտին, որը
իր կրթությանը հարցասիրությամբ ծանոթ է մեղ դեռ գնացքից,
Զափան ժամանելիս...

Իշխան Գրիգորյանը, որի կրծքին շողում են երկու Կար-
միր Աստղի, Հայրենական Պատերազմի շքանշանները և հինգ
մեդալներ, Քաջարան գյուղացի է, իսկ քաջարանցին և՛ քաջ
է, և՛ աշխատասեր...

Հայրենական Պատերազմում նա կովեց Մոսկվայի հա-
մար և կովելով Մոսկվայից հասավ մինչև Բելին...

Իշխանը հատուկ գեսանտային զորամասերումն էր, գի-
շերով պարագուտով իշնում էր թշնամու թիկունքը և պայ-
թեցնում նրա կարևոր ուղղմական օրենկաները...

Նա պայթեցման վարպետ է...

Այդ վարպետությունը հիմա նա օգտագործում է այս-
տեղ, կառուցողական մեծ հոյակապ աշխատանքներում...

Իշխանը գյուղ վերադառնալով՝ առանց ժամանակ կորց-
նելու, մի քանի օրից ներկայացավ կոմբինատի պետին:

— Ես վերադարձել եմ բանակից, ուղում եմ իմ ուժերը
տրամադրել...

Ալեքսանդր Օսիպովիչը, որ մի բարեկիրթ ու խոհում դե-
կավար է և մեծի հետ մեծ, փոքրի հետ փոքր, հետաքրքրվել
է նրա ընդունակություններով և անմիջապես նշանակել աշ-
խատանքի:

— Հանդիպեցինք, — ասաց Իշխանը ժպիտը դեմքին:

— Լավ հանդիպեցինք, ես դեռ տեղ շնասած՝ դու արդեն
անցել ես աշխատանքիւ:

— Կյանքն է պահանջում. այն ֆրոնտը վերջացաւ՝
սկսվել է աշխատանքի ֆրոնտը, ո՞վ է մեր փոխարեն աշ-
խատելու, — ասաց Իշխանը պայմուցիկ նյութերը տեղավորե-
լով անցքերում...

— Հիմա գնա՞նք, — դիմեց Իշխանը բարձրածայն, հրա-
մանատարին հատուկ տոնով, բոլոր քարհատներին ու բան-
վորներին:

Մենք բավական հեռացել էինք, երբ որոտը դղրդացրեց
լեռները...

— Այս պայմունին ձայնը չեմ սիրեր, ան ինձ կոփվ,
արյուն կը հիշեցնե, — ասաց հայրենադարձներից մեկը...

— Այս պայմունը քեզս կրերե, — ասաց Իշխանը հաս-
տատ: — Ես հիշում եմ, թե ինչպիս մեր երկիրը հրի ու սրի
մատնել երազող թշնամու որչերը կպայմեցնեի, իսկ հիմա
այս պայմունը ականչիս կհնչե ինչպիս կառուցման մեծ
համերգի հուժկու մի նախերգանք:

— Ճիշտ է, — ասաց Արմենակ Մինասյանը, հայացքը
հառելով հեռուները, կապույտում թաղված լեռներին:

Հերոսների ոտքի տակ գալարվում էր Թիշի փրփրագեղ
դեմքը, իսկ դեմքի ժպտում էր խորհուրդներով ու երգերով
հղի Դավթի հսկա առասպելական լեռը...

ԴԵՊԻ ՀԱՆՔԱՎԱՆ

Անցնելով կամուրջը՝ ձիերը վրնջալով, լեռան կանաչա-
պատ փեշով բարձրանում են վեր, ապա Օխչի գյուղի վերհ-
վում ուղղահայաց բարձրության վրա կատարում մի շրջա-
դարձ և կրկին բարձրանում վիգազներով, դեպի ապառաժ-
ներն ու լեռները...

Մերենայով, մանավանդ ապրանքատար մեքենայով,
աներնակայելի է այս տեղերով անցնելը:

— Արտաշը թոշոնի նման է այստեղով անցնում, — ա-
սում է շինարարության պարտրյուրոյի քարտուղար՝ ճար-
տարապետ Դրիգոր Մելիքյանը...

— Ո՞վ է Արտաշը, — հետաքրքրվում եմ ես:

— Արտաշ Հայրապետյանը մեր ամենաորակյալ, կարգապահ շոֆերներից է, որին շուտով հանձնելու ենք գարաժի բոլոր մեքենաների ղեկավարման գործը: Նա ամբողջ պատերազմի տարիներին մարտերի մեջ էր: Թամանյան դիմիովիայից է, չե՞ս ճանաշում, — զարմացական ասաց Մելիքյանը, սանձահարելով ձիուն:

Քաջարանի կոմիտինատի լավագույն աշխատողների՝ ճարտարապետների, կառուցողների, հորատողների շարքում ես տեսա, թե ինչպես բարձր են այստեղ գնահատում շոփերի աշխատանքը:

Իսկապես հերոսություն է և մեծ ոիսկ՝ մեքենան ղեկավարել այս լեռնաշխարհում, ապառաժների վրա, կածանների նման բնական ճանապարհներով, վիճերի ու շրջադարձերի եզրերով:

Ես ուզում էի ճանաշել Արտաշին, բայց առիթը միայն վերջին օրը ներկայացավ...

Շրջանցելով Դավթի բարձրադիր, հսկայակերպ սարաժայո՞ւ մեր առջև բացվեց մի սքանչելի տեսարան: Զյունածածկ լեռների գրկում փոված կանաչավետ տարածության վրա, գեղեցիկ երկշարք երկու հարկանի շենքերը բազմել էին որպես ապագա գեղեցիկ քաղաքի նախակարապետներ:

Բնության հեռավոր, անազարտ գրկում այդպիսի շենքերի առկայությունը, ընթերցո՞ղ, չի կարող մարդու սիրություննել ցնծությամբ:

Ինչպիսի գեղեցկություն: Մի կողմում սարերի ձյունն է, փայլփլում արևի թույլ շողերի տակ, իսկ նրա լանջերին, բացատում այսպիսի փարթամ կանաչ... Սրընթաց, կոհակավետ Սակկար-սու գետակը աղմուկով անցնում է թովագեղի հովտով, ուր նորատունկ պտղատու ծառերը ժպտում են մանկան քաղցրությամբ:

Մյական-Սովոր գեղատեսիլ հովտում եռում է ստեղծագործ աշխատանքը: — Այդ բնակելի շենքերի շարունակությամբ արդեն բարձրանում են նորերը:

Սա Հանքավանն է, որի բնակիչները գլխավորապես մեր Հայրենադարձ եղբայրներն են:

Դավթի լեռն է բաժանում այստեղի բնակիչներին Քաշարանի տեղամասից, ուր ծավալված է ապագա քաղաքի շինարարությունը:

— Բայց մենք՝ այնպիսի կապեր ենք ստեղծում, որ մեր սիրելի Դավթի սարը չի կարող խանդարել մեր հարևանությունը:

Այս լեռան վրայով մինչև Օխոչի գյուղի սարալանջը օդի միջով յոթ հարյուր մետր բարձրությունից կձգվի մեխանիկական ճոպանը, կանատը դեպի ֆլուտացիոն հարստացուցիչ ֆարբիկան: Սա կլինի մեր նյութական կապը:

Դավթի ընդերքից նույնպես կենտրոնական տունելը լեռան տակից դուրս է գալու դեպի մյուս երեսը...

— Ուրեմն, մենք Դավթի սարի հետեւի մասում ենք, — հարցում հմ հարտարապետ Մելիքյանին...

— Այո, մեր ապագա քաղաքից մեղ բաժանում է այս հսկան: — Նա ձեռքով ցույց է տալիս Դավթի անոմը կրող երկնահուար սարը:

Հանքավանը դեռ կառուցման պրոցեսումն է, 10 խոշոր երկնարկանից շենքեր արդեն պատրաստ են, ուր ապրում են մարդիկ, բայց շինարարությունը բուռն թափով գեռ շարունակվում է... Նույնքան շենքեր էլ դեռ կառուցվելու են մոտիկ ապագայում: Մի քանի շենքերի հիմքերը նոր են՝ գրցվում, շատերը արդեն հողից բարձրացել են, իսկ հարավային մասում նոր միայն հիմքեր են փորում:

Կանայք պատշգամբներում նստած զրուցում են, երեխաները՝ խաղում...

Երկշարք շենքերի մեջտեղը, փողոցներում, նորատունի ծառերն են, որոնք վկայում են, որ ավանը ամիսների պատմություն ունի:

Բնակարանները մեջընդմեջ կեցած ստեղծում են այն հաճելի տպավորությունը, որ մարդ կարող է ստանալ քաղաքում լավագույն արխիտեկտորի նախագծումներով ստեղծված թաղամասից...

Շենքերի դրսի մասի աշխատանքը դեռ չի ավարտված, բայց ներսը՝ սենյակները, բնակարանները իրենց հարմա-

բություններով՝ ավարտված են, ուր ապրում են իրանից ու այլ երկրներից եկած հայրենադարձ հայերը՝ իրենց մեծ ընտանիքներով...

Տաս ամիսների ընթացքում այստեղ, Հանքավանում շահագործման է հանձնվել 2750 քառակուսի մետր բնակելի տարածություն։ Բոլոր բնակարաններն ունեն էլեկտրական լուսավորություն։ Խաղիոյի լարերը Քաջարանի տեղամասից արդեն հասել են այստեղ, օրերս բոլոր բնակարաններում կղրվեն ռադիո-բարձրախոսներ, իսկ այժմ հացի և մանր աւզրանքների խանութի վրա, բարձր սյունից հնչում են ռադիոյի հումքու հնչյունները։ «Մոտենում է Մայիսի մեկը, երեխիրը այդ տոնը դիմավորում է փառավոր նվաճումներով»...

Դուրս գալով հորատող Արգար Հարությունյանի բնակարանից, Մելիքյանը օգտագործելով ռադիոյի քիչ առաջ հաղորդած խոսքերը, ասաց.

— Գնանք, տեսնենք թե մենք ինչով ենք դիմավորում Մայիսյան տոնը...

— Գնա՞նք...

Սակար-սու գետակին հակընթաց բարձրանում ենք վեր։ Լեռներից բխում են աղբյուրներ, որոնք խոխոչալով միանում են Մյական-սուին և օձապտույտ գալարումներով Դամբի փեշերով դուրս են գալիս լայնահուն Օխշի գետը։

Մենք բարձրանում ենք սարն իվեր։ Հանքավանի շենքերը փոքրանում են, դառնում լուցկու տուփերի շափ։

Լեռան կրծքին, մոլիբդենի զլիսավոր հանքամուտքից ներքև բարձրանում է փորձնական ֆլուտացիոն հարստացուցիչ ֆարբիկան։

Պետրոս Թումանյանն ամենահինն է իր տարագիր հայրենակիցների մեջ։ Նա 1932 թվին է վերադարձել հայրենիք՝ Սովետական Հայաստան։

Պետությունը ոչինչ շմնայեց այդ ընդունակ երիտասարդին՝ նրա տարիներով փայփայած իդեալները իրագործելու համար։

Պետրոսն ուզում էր իր հայրենիքի համար լինել պիտանի, կառուցող քաղաքացի, ճարտարապետ:

Եվ նա հասավ իր նպատակին: Իսկ հիմա նրան վստահել են այդ խոշոր շինարարության՝ Հանքավանի ոչ միայն հանքերը մշակելու անհրաժեշտ օբեկտների կառուցումն ու գործարկումը, այլ և վերջերս արտասահմանից եկած հայրենարար եղբայրների ու քույրերի կյանքի ու կենցաղի կազմակերպումը:

Նրան դիմում են ամեն տեսակ հարցերով, և նա բոլորին էլ տալիս է գոհացուցիչ պատասխաններ:

— Ընկեր Թումանյան, ինչպես անհնք, որ շուտ վերջացնենք ֆարբիկայի կառուցումը, — դիմում են նրան որմնադիրները:

Եվ որոնող եռանդուն ճարտարապետը գտնում է ձեր, որով ավելի շուտ են բարձրանում պատերը

Այդ գյուտի շնորհիվ է, որ ստախանովական Անտոն Արգարյանը իր մարտ ամսվա պլանը կատարել է 262 տոկոսով, Գալուստ Թումանյանը՝ 332 տոկոսով: Այդ տոկոսներն ընդհանուր են և նախորդ ամիսների համար, իսկ մայիսը նրանք դիմավորում են գերազանցելով այդ տոկոսները:

Ժրաշան կոմերիտունի լենա Առաքելյանը իր ընկերուհիներով հազիվ է հասցնում շաղախը:

— Բոլորը, բոլորը ապրում են մի տրամադրությամբ, — ապում է աշխաղեկ ընկեր Ռշտունին, — ժամանակին ֆարբիկան հասցնենք, թե չէ հորատողները մեր հոգին կհանեն:

Եվ իսկապես, հաճախ են կառուցազները տեսնում, վերհվում՝ զիսավոր հանքամուտքի մոտ հորատողների հպարտ ու առնական հասակները, որոնք հայացքները հառած սպասում են, թէ ե՞րբ է վերջապես պատրաստ լինելու ֆարբիկան, որպեսզի իրենց հանքաքարը տա սպասվող, թանկագին մետաղը:

Այդ սպասողների առաջին շարքում կառուցողները տեսնում են և իրանից եկած, հիանալի հորատող-վարպետ Արգար Հարությունյանի հաղթական հասակը...

Սարդու գյուղը իրանի սովորական հետամնաց գյուղերից մեկն էր, որն ուներ ինն ընտանիքից բաղկացած բնակչություն, եթե Հաշվենք մեղ ծանոթ քարհատ Արմենակ Մինասյանի աղջկա՝ Հասմիկի և իշխան Պետրոսյանի նոր կազմած ընտանիքը:

Գյուղը փռված էր բարերեր այգիների ու բերքառատ հանդերի լեռնամերձ մի վայրում։ Գյուղի հայ բնակիչները մշակում էին ջարիդովլա խանի արտերն ու այգիները։

Գյուղացիներին միայն վերջում էր ժամանակ մնում հեռու վայրերում ընկած իրենց «սեփական» քարքարոտ հողակտորները մշակելու համար։

Այդ հողակտորներից ստացած շնչին բերքի ութից մեկն էլ պատկանում էր խանին։

Ջարիդովլա խանը հինգ տղա ուներ, որոնք ձիերը նըստած հսկում էին իրենց պատկանող գյուղերի ոանշարժների աշխատանքը։

— Ո՞վ կհամարձակվեր ջարիդովլայի դեմ խոսել։
Վերևում աստված, ներքեւում՝ ջարիդովլան...

Սարդու գյուղը միշտ չէ, որ այդքան սակավ բնակչություն է ունեցել։

Մի քանի տարի առաջ այնտեղ ապրելիս են եղել վաթուն հայ տնտեսություն, որոնք բռնության ու հալածանքի հետեանքով ոչնչացել կամ հեռացել են անհայտ ուղղությամբ։

Սովետական կառավարության և մեծ Ստալինի հայրական ջերմ հոգատարությամբ փրկվեցին այդ գյուղի հայերի վերջին 9—10-ր ընտանիքները, որոնք բոլորն էլ այսօր ապրում ու կառուցում են իրենց սեփական փառավոր կոթողը՝ Քաջարանի գիգանտը։

Երբ Սարդուի բնակչությունը հրաժեշտ էր տակիս իր հյուղերին, ուր անց էր կացրել իր տառապանքներով ու

Հալածանքերով լի տարիները, հայտնվեց Զարիդավլան, շըր-
շապատված իր մարդկանցով:

Նա շատ սիրալիր առաջարկեց հրաժարվել մեկնելու
մտքից, ապա երբ այդ չօգնեց, նա փորձեց ահարեկել, բայց
կյանքի երազած արշալույսը ծագել էր և ո՞վ նորից իր ոտքը
ետ կդներ խավարի, ընշաղըկության ու ստորացման փոտած
աշխարհը:

Սարդու գյուղը մնաց այնտեղ, կիսավեր, խավար ու
անմարդաբնակի...

Երբ ստախանովական քարհատ Արմենակ Մինասյանի
կինը՝ Աստղիկը, արցունքն աշքերին վշտակեզ պատմում էր
իրենց գյուղի տիսուր պատմությունը, փոքրիկ Պայծառիկն
ու Աննիկը հանկարծ ծիծաղեցին:

Մայրը նկատեց իմ զարմանքը՝ իր անուրախ պատմու-
թյան պահին երեխաների հանկարծակի ծիծաղի առիթով:

Գլխաշորի ծայրով մաքրելով արցունքը՝ Աստղիկը շա-
բումակեց.

— Մենք մի շուն ունեինք այնտեղ: Երեխաները նրա
անունը գաղտնի դրել էին Զարիդովա, արտահայտելով
իրենց ատելությունը խանի հանդեպ:

Ես նոր հասկացա, թե ինչու էին փոքրիկները ծիծա-
ղում, երբ մայրը հիշատակում էր այդ գաժան մարդու ա-
հարկու անունը:

Միայն այդ անունը երեխաներին սարսափի մեջ էր
գցում, իսկ հիմա նրանք սրտաբաց ծիծաղում են այդ անու-
նը նորից լսելով:

— Այդ շունք այնտեղ մնաց, — հարցրեց ընկերս...

— Շունք շան մոտ պիտի մնար, — եղրափակեց Հրան-
տը, Արմենակի ավագ որդին, որը աշխատում է Հանքավանի
դիզելի վրա իրու մեքենավար:

Արմենակի մյուս տղան էլ, Սմբատը, իր փեսայի՝ հշ-
խան Պետրոսյանի հետ աշխատում են շինարարության վրա
և ստախանովյան աշխատանքի փայլուն օրինակներ են տա-
լիս:

Երեխաները պայուսակներում հավաքելով՝ իրենց դասագրքերն ու տետրերը, ինձ մնաս բարե ասելով՝ դնացից դպրոց:

Մեծ աղջիկը հաղորդեց երեխաների ուրախությունն ու հրճվանքը:

— Դիտե՞ք, այնտեղ մեզ արգելում էին մայրենի լեզվով մեր երեխաներին գիտություն սովորեցնել, Ռուաշանց շայերեն լեզուն վանել էր դպրոցներից...

— Է՛, մարդու լեզուն խլած՝ սիրտն ու հոգին խլած, միւնուցն է: Հիմի դուստրերս երջանիկ են, իրենց հարազատ լեզվով կսովորեն և այն էլ առանց վճարի: Զարմանալու բան է:

— Մեր պետությունը հոգում է լուսավորության բոլոր ծախքերը, — ասացի ես:

— Հա, օրհնվի մեր պետությունը, — շշնչաց կինը, երշանկության արցունքն աշքերին:

Մինչ այդ Աստղիկը, որ վերջացնելով պատմությունը սպասում էր, սիրագորով նայեց տղային՝ Հրանտին, տպասկսեց իր նոր խոսակցությունը:

— Տղաս արդեն հասել է:

Երջանիկ մայրերի սիրելի խոսակցություն: Նա ուզում է ուրեմն ամուսնացնել տղային. վատ չէ:

— Այո, լավ բան եք մտածել...

— Բայց բնակարանս նեղ կը լիւ, — ասում է մայրը:

— Տեսեք, մայրիկ, ի՞նչքան նոր բնակարաններ են կառուցվում: Զեր դիրեկտորը սիրով բնակարան կտրամադրի Հրանտին, միայն թե լավ հարսնացու ճարեք:

— Զէ, չէ, իմ տղաս, իմ հարսս իմ կողքիս պիտի ըլլան:

— Այդ գիպքում պիտի ձեր բնակարանին կից մի բնակարան էլ կառուցեն:

— Լավ կը լիւ, — ասում է մայրը:

Հրանտը ներողամտաբար ծիծաղում է:

— Մայր, մոռանում ես, որ մենք երկրորդ հարկում ենք գտնվում, — օդի մեջ հոմ շենք լայնացնելու բնակարանը,

Որտեղ եմ տեսել ես այս կնոջը։ Միթե սա նա է։ Չէ, նա ավելի ծեր էր ու խորշոմած դեմքով...

— Մայրիկ, սրանից մի տասը օր առաջ դուք երևանի գնացքով եկաք, — Հարցրեցի կնոջը, որ այդ պահին ինչ-որ առիթով ներս էր եկել...

— Այո, ես էլ Զեզի ճանչցա...

— Դուք ինչո՞ւ էինք այն օրը գնացքում բալիս...

— Արաքսի մյուս ափերին եմ թողել Հարազատներիս գերեզմանները, մեր հողերն ու բերրի արտերը, — ու փղձկաց...



Վերջացնելով Քաջարանի տեղամասում իմ շրջագայությունը, երբ մի օր պատմում էի իմ տպավորությունները կոմքինատի դիրեկտոր ընկեր Օգանովին, նա լսում էր մեկ մոալը, մեկ պայծառացած...

Նրան շատ հետաքրքրեցին քարհատ Արմենակ Մինասյանների ընտանիքի և կենցաղի մահրամասնությունները...

— Նրանք լավ օր ու արև շեն տեսել, թող Արմենակն ու Աստղիկը հարսնացու գտնեն, ես նրանց իրենց սրտով բնակարան կտրամադրեմ։

Ապա հիացմունքով խոսեց Արմենակ Մինասյանի, նրա երկու տղաների՝ Հրանտի ու Սմբատի ստախանովյան, բարեխիղճ աշխատանքի, այդ հին նահապետական ընտանիքի մասին, որը բռնել է նոր կյանքի երջանիկ ու լուսավոր ճանապարհը։

— Սարդուն ամբողջությամբ մեզ մոտ է, — ցած դնելով լուսափողը ասաց երեկ նա ինձ...

— Հիանալի աշխատողներ են — անպայման ծանոթացեք նաև հորատող Արգար Հարությունյանի հետ, նա էլ Ապրդու գյուղացի է...

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ. ԱՇԽԱՐՀՈՒՄ

Պղնձա-մոլիբդենային հանքի գլխավոր մուտքի մոտ էլեկտրական ու մեխանիզացիայի սարքավորումները դեռ գտնվում են նախնական, չհավաքված վիճակում...

Գլխավոր մուտքից վագոնետի համար ձգված զույգ ոել-սերը մեզ հրավիրում են ներս՝ ստորերկրյա աշխարհը:

— Մենք գտնվում ենք ծովի մակերկութից 2.275 մետր բարձրության վրա, — սկսում է իր բացատրությունը հանք-քի պետ, ճարտարապետ-երկրաբան Նիկոլայ Պողոսյանը, մեզ առաջնորդելով հանքախորշերը:

Անթափանց խավարը, զուրն ու խոնավությունն անմիջապես իրենց զգալ են տալիս:

Ծելսերի միջև ընկած փոքր տարածությունը, որ ծառայում է հանքերում աշխատողին որպես մշտական ճանապարհ՝ լարձուն ցեխից անպակաս է:

Ստորերկրյա այս ճանապարհը կարծես անսահման է. կարբիդի թույլ լույսի ներքո խարխափելով մտնում ենք հանքախորշերը, ապա դուրս դալիս հանքուղիները:

Հանքանյութ պարունակող ապառաժները մի աներեւույթ ձեռքով փոված են այս լեռների մեջ, արևելյան մասուց նվազ, արևմայան մասում՝ ավելի առատ: Կենտրոնական՝ ամենահարուստ մասերից ճյուղավորվում են ուղիները:

— Գնանք այսպես, — հրամայական տոնով ասում է ճարտարապետը, և մենք, որքան ինձ թվում է, շարժվում ենք դեպի հյուսիս, ապա ձախ, ուր կրկին մեզ ուղեկցում են երկաթուղիները:

Որքա՞ն հաճելի է երկաթուղիների ներկայությունը այդ հերթաթային խավար աշխարհում...

Զրի կաթիլների կտկտոցը լսվում է մեր ոտքերի տակ ճղփացող ջրերի ու սաղարթների վրա:

Հանկարծ որոտում է լեռը ու ցնցվում:

Ընկերս գույնը գցում է:

— Մեղանից հեռու է, — հանգստացնում է ճարտարապետը:

Ես նայում եմ հանքի կամաբին: Կարբիդի լույսերի տակ հանքի երակները շողում են, ինչպես պլանները կատարած ստախանովական հերոսի դեմքը:

Որքա՞ն գեղեցիկ են պսպղում պղնձի հատիկները, ինչպես աստղերը երկնքում...

— Սպասեցեք իսկական աստղերը հետո կտեսնեք, իսկ հիմա նայեցեք սրան, — ասում է Գրիգոր Մելիքյանը, — սա միներալ մալախիտ է, մոլիբդենի կողքին, ինչպես քույր ու եղբայր: Այս կանաչ-կապտավուն գույնի շերտերը, որ բռնել է հանքախորշը, այն գանձն է, որ այնքան անհրաժեշտ է մեր երկրին:

Հետաքրքրությամբ շոշափում եմ երակը:

— Գրաֆիտի հատկություն էլ ունի, թղթի վրա կարևոր է գրել...

Մեր ականջին է հասնում պերֆերատորների որոտը, որը նշան է այն բանի, որ հասնում ենք հանքախորշին ժայռերը գողում են խտացրած օղով գործող կատարելագործված ձուլմերից:

Ժայռերը ասես ցավից դողում են... Մակիչը հոլովվելով ժայռի կուրծքն է մխրճվում, տարածելով ականջ խլացնող դղիրդն ու գորշագույն փոշի:

— Մենք հիմա Զեզ կծանոթացնենք մեր ամենաառաջավոր հորատողի՝ Արգար Հարությունյանի հետ, — ասում է ճարտարապետ Գրիգոր Մելիքյանը...

— Կյանքի հետաքրքիր պատմություն ունի, — ասում է Նիկոլայ Պողոսյանը:

Արգարի հայրը 84-ամյա Խաչատուրը տառապալից կյանք է ապրել իրանում: Նա իր կյանքն ավարտված էր համարում, անցածն՝ անցած է, անցածն անվերադարձ... Նա կորցրեց իր ավագ զավակներին, գոնե Արգարը լավ օր տեսներ, գոնե իրեն վիճակվեր մեռնելու հայրենի հողում... Այս էր նրա բաղձանքը...

Եվ ահա, մի օր, փրկության լուրը հասնում է Սարդու: Ծերունին լցվում է ապրելու տեսչով ու եռանդով, — առանց ժամ կորցնելու գալիս է քաղաք՝ սովետական հյուպատոսի մոտ:

— Ես իմ միակ տղայիս, հարսիս ու հինգ թոռներու հետ կտենշամ ապրելու և աշխատելու հայրենիք հողին վրա...

Ծերուկի խնդիրը կատարեցին և նա, որ արդեն ձեռք էր քաշել կյանքից, վերադառնալով հայրենիք, կարծես ջահելացավ ու անսպառ ավլունով կպավ աշխատանքի:

Քաջարանի ղեկավարներն ընդդիմացան, ասելով.

— Դուք վայելեցեք ձեր երջանիկ ծերությունը մեջ երկրում, տղայիդ աշխատանքը բավական է, մանավանդ նա ստախանովական է, օրվա նորմաները միշտ կրկնակի, եռակի շափով է կատարում և քիչ փող չի վաստակում:

Ծերունին լուրջ վիրավորվեց այդ խոսքերից ու առանց թաքցնելու ասաց.

— Հարուսաներու համար կաշխատեի, իմ հարազատ երկրիս, ինձի համար ուժերս խնայե՞մ: Տղաս իր պարտքը կոտա, ես՝ իմը:

Եվ պատմում են դեպքեր, թե ինչպես համեստ ու բարեխիղճ ծերունին անդամ երբ վատ է զգացել, ու նրան առաջարկել են բուժվել, ասել է.

— Երբ բուժվելու ժամանակը գա, ինքս կատեմ, չեմ ամշնար:

Խաշատուրի համար աշխատանքը միշտ եղել է ծանր պարտականություն, որ մարդ ստիպված էր անել ապրուստի: Համար, բայց գալով Հայաստան, աշխատանքի մեջ մտցրել է իր սրբազն զգացմունքների ու երազանքների ողջ խմաստը:

— Մենք մեր հայրենիքը կկառուցենք...

— Ի՞նչ է, ուրիշնե՞րը պիտի գան մեղ համար երկիր ծաղկեցնեն, երջանիկ ու լի կյանք ստեղծեն, — հաճախ ասում էր նա իր այն եզակի բարեկամներին, որոնք մոռացած իրենց շարքաշ անցյալը՝ ուզում են ամեն ինչ տեսնել պատրաստի, անաշխատ, ինչպես մանանան երկնքից իջնի...

Նա այդ լալկանների համար ունի նաև կծու խոսքեր...
— Հոն մուզեղ ու սակինե՞րդ թողեցիր, թե նոքյարներդ
ու պալատներդ: Ազատ կյանք կըսեիր, հայրենիք... Խնդրեմ,
Ել ի՞նչ կուզեփ:

Հարգելի, իսկական հայրենասեր մարդ է Խաչատրուր,
որի մասին ժամերով կարող է պատմել ինժեներ Նիկոլայ
Պողոսյանը, իսկ ինչ վերաբերում է տղային, բարը ծառից
հեռու չի ընկնում:

Արգարը հորից յուրացրել է բոլոր ազնիվ ու վսեմ հատ-
կությունները:

Համեստությունը, աշխատասիրությունն ու շիտակու-
թյունը՝ Արգարի բնորոշ գծերն են:

Արգարը հանքի պարծանքն է:

— Ահա և Արգարը,—ասաց ճարտարապետը՝ ծանոթաց-
նելով մեզ իրար հետ: Միջահասակ, մոտ երեսուն տարեկան
վայելակապմ ջլուտ երիտասարդ է նա:

— Եթե երեք ամիս անընդհատ թողնես հանքում, չի
արտնչա, —ասում են նրա ընկերները...

— Աշխատանքի մեջ նա խորություն չի դնում, —ասում
է Պողոսյանը: — Հաճախ մենք զբաղված ենք լինում հան-
քամշակման սարքավորումները պատրաստելով և անհրա-
ժեշտ է լինում աշխատող ձեռք՝ Արգարը գիտակցելով գործի
կարկորությունը՝ քշտում է թերը և անցնում գործի: Նա
գիտի, որ հիմա բոլոր աշխատանքները գնում են հանքերը
մշակելու անհրաժեշտ սարբավորումներ ստեղծելու ուղղու-
թյամբ, որպեսզի հետո տասնյակ իր նման հորատղներ բո-
լոր «հարկերում» պոկեն երկրի կրծքից թանկարժեք մե-
տաղը...

Կարբիդի լույսի ներքո փայլում են Արգարի աշքերը:
Ասես ներքին անշեշ կբակից այրվում են երկու հրավառ ջա-

Հեր: Լեռներակում լուս է, և փոշին քիշ-քիշ նստում է հանքաբարի շերտերին:

— Քանի՞ տոկոսով եք կատարում ամսական պլանը, հարգելի Արդար,—ողջունելուց հետո հարցնում եմ նրան:

— Շատ չէ, 150-ից 200 տոկոսով... Չէ՛, դու չենք սկսել, որ սկսենք, մի երեք հարյուրի կհասցնեմ:

— Արդարը մեր մշտական երկուհարյուրականն է,—ասում է ճարտարապետ Մելիքյանը:

— Ի՞նչումն է գաղտնիքը,—հարցնում եմ նրան,—կան հորատողներ, որոնք հազիվ են պլանը կատարում:

— Գաղտնիքը,—գաղտար տալուց հետո ասում է նա.—մարդու սրտի մեջն է:

— Ինչպե՞ս:

— Շատ պարզ: Եթե մարդ սրտանց է աշխատում, միշտ էլ գործը հաջող է գնում...

— Գաղտնիքը մարդու սրտի մեջն է, եթե մարդու սիրտ ցանկանում է, պլանները միշտ էլ կարելի է գերակատարել... Սրտի մեջ է...—ի՞նչ լավ է ասված և այդ խոսքերն էին անվերջ հնչում իմ ականջին, երբ մենք դիմում էինք գեպի հանքի ելքը...

Հանկարծ լույսերը մարում են և թանձր խավարը զըրկում է մեզ:

Ճարտարապետը բռնելով թևս, իմ ուշադրությունն է հրամիրում երկնքում ցոլացող ցերեկային առտղերի վրա. այդ մոգական խավարի մեջ այդ աստղերը ստեղծում էին հեքիաթային մի հիասքանչ պատրանք, սակայն ինձ ավելի խորը հուզմունք և հիացում է պատճառել հերոսների այս անխոնջ աշխատանքը, որի արդյունքներն ակնբախ են:

Ինձ հուզել է կյանքի հեքիաթը, թե ինչպես այս մարդիկ լիուան կուրծքը ճեղքելով դուրս են եկել հակառակ կողմից:

— Շուտով, — ասում է ճարտարապետը, — կապիտալնի այս № 1 և բազմաթիվ ուրիշ նոր շտոլնյաներից էլեկտրական ուժի շնորհիվ, վագոննետկանները լեցուն հանքաքարով դուրս կան և ավտոմատ կերպով կդատարկվեն պողպատաձուլ հսկա դուզլերի մեջ ու կապույտ ամպերի միջով, կանատի՝ ծոպանի ճանապարհով այդ թանկագին հանքաքարը մի լեռնագագաթից կուլանա մյուս լեռնագագաթը...

Այս լեռնաշխարհում գտնվում են մեր երկրի հարստության խոշոր պաշարները։ Տասնյակ տարիներ այս հանքաքարը, որ այսպես ժպտում է իր մուգ և ոսկեգույն հատիկներով, կհոսի ֆլոտացիոն ֆաբրիկա ու այնտեղից էլ մեր երկրի գործարանները, նոր փայլ ու ամրություն տալու մեր ինդուստրիալ, անխոցելի, զրահապատ աշխարհին։

Ես վերցնում եմ հորատող հերոս Արդար Հարությունյանի նվերը՝ հանքաքարի կտորը...

Ես տանում եմ այս վսեմ լեռներից նրա հարստության նմուշը, որն արտացոլում է հանքի ողջ ներքնաշխարհը՝ մոլիբդենի սև, զրաֆիտի նման շերտիկները և ոսկեփայլ պղնձի հատիկները միախառնված...

Որքան երակներ, ինչպիսի՝ հարստություն...

Դրսում վառվում է գարնանային արևը, իսկ իմ ձեռքում շողում է ասես ինքը՝ արևի ոգին։ Չէ ո՞ր դա հերոսի նվերն է...

Թանկագին նվեր...

ՈՐԳԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Օխչի գյուղի կոլխոզի նախագահ Արտեմը մի խոր տագնապ և ուրախություն է ապրում։ Նա այդ երկվությունը, «հոգու գաղտնիքը», երկար ժամանակ չէր ուզում ասել։

Նա շատ հեռվից սկսեց իր պատմությունը։

— Դու պիտի գարնանը այստեղ լինեիր, այսինքն մեր դարունը ամռանն է սկսում: Դու այս մեր հպարտ լեռները կտեսնեիր պատաժ այնպիսի ծաղիկներով և էնքա՞ն տեսակներ, որ ուրիշ ոչ մի տեղ չկա...

Աղջիկս անցյալ տարի հարյուր հիսում տեսակ ծաղիկ էր հավաքել... էստեղ դրախտ է, դրախտ. օդը զով ու մաքուր, թողունները երգում են, մեղուները հավաքում հարուստ ծաղիկների առատ նեկտարը և մեղք պատրաստում... Բա մեր միրգը, մեր բալը, նմանը շունի ոչ մի շրջան:

Զեր Երևանի բալը շուտ հասնում է, շուտ էլ վերջանում, իսկ մերը ուշ է հասնում, դրա համար էլ համեղ է, անմաշական...

Բա մոշը, հոնը... իսկ պոպոքը հո ծով է...

«Փիբուղանը (Դավթի սարը) այդ գույնզգուսն ծաղիկների խալին է հագնում ու երանի էն աշքերին, որ ամեն օր կտեսնի էդ գեղեցկությունն ու կվայելի...»

Արտեմի բնակարանի պատշգամբը նայում է Դավթի սարին, որի ստորոտում հոխորտում է զյուղի անունը կրող աշխուժ դետը:

— Ես իմ տունը էստեղ կառուցեցի, — շարունակում է իր պատմությունը Արտեմը, — որ ամեն առավոտ հողիս բնության այդ գեղեցկությունների հետ խոսի, բայց տանս արժեքն արդեն որոշել են, պիտի քանդեն... Գործարանը այստեղով է անցնելու:

— Քաջարանում, Հանքավանում տեսե՞լ ես ինչպիսի հրաշալի շենքեր են կառուցել, որ ցանկանաս, քեզ էլ կտան...

— Էղափես էլ որոշել եմ. պիտի ասեմ բնկեր Օգանովին՝ ինձ աշխատանք տա... Էս տարի մի լավ, բարձր բերք տամ, երկերը բարձր բերք է պահանջում մեզանից, խոստումս կատարեմ, հետո ասելու եմ ուայկոմին. տասը տարիս լրացավ

նախագահ եմ... Ֆնալու եմ էս փառավոր դիգունտով՝ աշխատելու...

— Էս շենքը տեսնո՞ւմ ես,—ասաց Արտեմը ցույց տալով փայտաշեն երկհարկանի շենքը:—Սրանից տասնվեց տարի առաջ Հետախուզները այստեղ վրաններ խփեցին ու սկսեցին լեռների ընդերքն ուսումնասիրել...

— Զէ՛, ասում են, Քաջարանում,—կտրում եմ ես:

— Դե ի՞նչ տարբերություն, էստեղից սկսեցին փորփրելը. Հիշում եմ երկրաբան Գևորգ Հարությունյանին. շատ ժրաշան երիտասարդ էր...

Միրտս վկայում էր, որ էս գեղեցիկ վայրում գանձեր կլինեն...

Մարդու համառությունն ու դիտությունը ինչե՛ր շեն արել...

— Հաղարավոր անցքեր են փորվել այս լեռներին, տասնյակ տոննաներ հանքաքար հանվել լարորատոր ուսումնասիրության համար:

— Բա լարորատորիայում ինչքա՞ն աշք են փշացրել,—ավելացրեց գյուղի լրիվ միջնակարգ դպրոցի դիրեկտորը, որը մեզ միացավ ճանապարհին:

Ապա նու պատմեց, որ ամենալուրջ ուսումնասիրությունը ալմաղային փորումն էր, երբ առաջին անգամ հաղթահարելով ձմռան բուքն ու բորանը ուղտերով Ղափանից այնտեղ փոխաղբեցին առաջին ալմաղային փորման դադղահները:

— Այո, ուղտերն են առաջին ճամփան բացել այս հեռավոր, աշխարհից կտրված հանքաշխարհում...

Հիշում եմ բքաշունչ օրերից մեկն էր, նստած տանը կլանված կարդում էի մեր սիրելի գրող Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը:

Հեռախոսը գանգեց. մոտեցա. ուայկոմից էր:

— Վաղը ձեզ մոտ ուղտերի մի քարավան է գալու...

— Ինչպե՞ս թե ուղտերի քարավան, —զարմացած հարցնում եմ ես և կարծում եմ խոսակիցս կատակում է, որովհետև այս բուք-բորանին ինչ ուղտերի քարավան...

— Եվ իսկապես երկու օր հետո, չնայած բնությունը
խաղաղվել էր, բայց մի մարդաբոյ ձյուն էր նստել, —և ի՞նչ
եք կարծում, —ինձ շեշտակի նայելով շարունակեց իր պատ-
մությունն Արտեմը, —որպիսի ուղտերը իրենց բեռներով
շթաղվեն ձյան մեջ, ճանապարհին խսիրներ էին փոել: Ուղ-
տերն անցել են, խսիրները տեղափոխել առաջ և այդպես մեծ
տանջանքներով այդ մեքենաները հասցրեցին Քաջարան:

Այդ «գյուտի» հեղինակը Ստեփան Առուատամյանն էր,
որն հիմա աշխատում է Ղափանի հանքերի ավտոգարաժում,
մի թեկնեղ, աշխույժ տղամարդ է, — երևի հանդիպած ի-
նես...

— Իսկ մեքենանե՞րը... — հետաքրքրվեց ընկերս, որ մինչ
այդ լուր լսում էր մեր խոսակցությունը:

— Մեքենաները դրվեցին լեռների բարձունքներին,
որոնք հարյուրավոր մետր խորությամբ փորվածքներ էին կա-
տարում:

Մարդու համառությունը հաղթեց...

Մեր քայլերը աննկատ մեզ բերեցին Արտեմի տան ա-
ռաջ...

Նա ներս հրավիրեց:

— Դու սրան ճանաշո՞մ ես, — պատից վերցնելով մի
լուսանկար ցույց տվեց ինձ:

— Սա իմ ավագ եղբայրն է, երկրաբան, Լենինի շքա-
նշանակիր, տես «պապաշայի» հետ է նկարվել, Ուրալում է
աշխատում...

Ես նայում եմ խմբանկարին, ընկեր Կալինինի սիրելի,
հայրական դեմքին: Միխայիլ Խվանովիչի շուրջը բազմել են
շքանշաններով նոր պարզեցների մի խոմք վաստա-
կավոր ընկերներ:

— Սրան ճանաշո՞մ եք...

— Մեր Ստեփան Իլիչն է, Զորյանը...

— Հա, մոռացա Զեզ ասեմ, որ սրանից մի հարյուր
տարի առաջ մեր լեռներով հետաքրքրվել է նաև Խաչատուր
Արովյանի ծանոթներից մեկը:

— Այս, գիտնական ու երկրաբան Արիխը 1835 թվին,

որը Աբովյանի հետ Արարատը բարձրանալուց հետո աճապարել է Սյունյաց աշխարհը:

— Ասում են Աբովյանը կտրուկ մերժել է գիտնականին ընկերակցելուց, և գիտեք ինչու: — Հստ երևույթին՝ որպեսզի մեր հայրենի երկրի գանձերը ուրիշների երախը ընկնեն:

Նա մեր սերնդի երջանկության մասին է մտածել...

— Ես էլ եմ այդպես կարծում. որ այդպես է՝ գրողների կենացը, — ասաց նա բարձրացնելով գինով լի բաժակը...

Վառարանի մեջ բոցկլտում էր կրակը:

Հեռվից մեր ականջին էր հասնում զուռնայի սրտահույզ մեղեղին: Զյունն իջնում էր ու իջնում, իսկ դիմացը՝ լեռներում կոփվում էր Քաջարանի հրաշագործ մետաղի ոսկեղեն փառքը, որը շուտով սքանչելի երդի նման, հերոսների անվան հետ, կտարածվի մեր անծայրածիր հայրենիքի ափերի վրա. Հեռու, հեռու...

Մարտ 1946 թ. — մայիս 1947 թ.

Քաջարան — Երեվան

ՁԻՒԾԿԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Զով է հիմա Ախուրյանի ափերին։ Թավշագիդ, կանաչ արտերն ալիքում են մեղմ զեփյուռից։ Մի երանելի զգացում է ապրում մարդ այդ սբանշելի բնության, ժպտացող արտերի գրկում։ Ասես սիրտն է խոսում ու խորհրդադում հասկերի հետ և նրանք մանուկների նման ծափում, քաղցր թովշանքով լցնում են հոգիդ... Տեղ-տեղ արտերը ոսկուն են տալիս, նրանք հնձի կոշ են անում, իսկ Արալդ գյուղը շհասած մարդահասակ արտերից հետո բացվում է կանաչ մի ծով։ Կանաչ ծով։ Լայն կանաչ թփերը ծածկել են ամբողջ սեահողը։ Դա շաքարի ճակնդեղն է, որ բռնել է Շիրակի հանդերը, Արալդից մինչև Դիրաքլար և Կապսից՝ Ազատան, մինչև հավերժագահ Ալազյազի զառ փեշերը... Ռեսպուբլիկայի շաքարի ճակնդեղի ցանքատարածության մոտ 60 տոկոսն են կազմում Շիրակի գաշտերը։

Մեքենան սլանում է նեղ ճանապարհով։ Ազ ու ձախ փոված կանաչ արտերը արել տակ մետաքսի նման փայլելով՝ ասես հոսում են հակառակ ուղղությամբ։

Կուլտուրական բույս է ճակնդեղը և պահանջում է մշակման բարձր կուլտուրա... Ախուրյանի շրջանի կոլխոզնիկները իրենց տարիների համառ աշխատանքով հասել են այդ բարձր կուլտուրային։ Տարեց-տարի ավելացնելով բերքը՝ նրանք այս տարի պայքարում են հեկտարից 165 ցենտներ բերքի համար։

Ճակնդեղի փոված հանդերը գնալով ծավալվում են: Մերթ ընդ մերթ երկում են կոլխոզնիկուհիները՝ կոացած ճակնդեղի փայլուն թփերի վրա: Մեքենան կանդ է առնում Ախուրյանի Միկոյանի անվան կոլխոզի գրասենյակի մոտ Այստեղ, շենքի առջև նորատունկ պարտեղի մեջ կոլխոզնիկներն այս տարի կանգնեցրել են ընկեր Միկոյանի հոյակապ արձանը:

Ընկեր Միկոյանը սպիտակ բազալտե պատվանդանի վրայից, ասես կենդանի, նայում է իր շուրջը փոված բերքատառ Շիրակին ու քաջալերում կոլխոզնիկների եռանգուշ աշխատանքը:

— Ոսկի ձեռքեր ունեն նրանք...—այսպես են բնորոշում Շիրակի դաշտավայրում լավագույն աշխատողներին: Եվ ո՞վ չգիտե Ախուրյանի շրջանի ճակնդեղ մշակող 21 գյուղերի գաշտի լավագույն աշխատողներին... Ահա Զախար Մաթոսյանը, 40-ն անց մի կին, բայց ո՞վ չգիտե նրա անդուզ, նվիրված աշխատանքի մասին: Շատ շահել հարսներ ու աղջկներ նախանձով են նայում նրան: Իսկ եթե իրեն՝ Զախարին, այդ սևաշա, թուխ դեմքով կնոջը գովում են իր աշխատանքի համար, նա ծիծաղում է, ասելով, թե ի՞նչ արտակարգ բան է կատարվել: Բոլորս էլ պետք է լավ աշխատենք! Դա մեր պարտքն ու պարտականությունն է: Լավ աշխատանքն է միայն բարձրացնում մեր Հայրենիքը: Հապա ինչո՞ւ վատ աշխատել...

Եվ ընկ. Մաթոսյանը ճիշտ է, որովհետև այստեղ, շարարտաբուխի այս լայնաձիգ հանդերում կհանդիպես հարյուրավոր կանանց, որոնք հերոսաբար կատարել են ճակնդեղի մշակման, քաղցանների ու փիրեցման աշխատանքները, բայց նրանք տանը նստել շեն կարողանում և հիմա էլ, այս պահին, գալիս են ճակնդեղի հանդը, կրկին ստուգելու կարարած գործը...



Երբ կամերիտուհի Ամալյա Ճանճուրյանն ավարտեց ընթերցանությունը, աղջիկներից մեկը բացագանչեց.

— Հետաքրքիր է «Պատվո տախտակը»...»

Շրջանային «Կոլտնտեսական» թերթը սիստեմատիկաբար տպագրում է ոչ միայն բազմազան նյութեր կոլխոզային կյանքի վերաբերյալ, այլև իր առաջին էջում տեղավորում է «Պատվո տախտակ», որի վրա են բարձրանում Համամիւթենական սոցիալիստական մրցության առաջավորների անունները:

Ամալյան նայեց «Պատվո տախտակին», ապա կարդաց — Հայկանուշ՝ Նավասարդյան... Նրա ղեկավարած օղակը ադրբեյխնիկական կանոնների լավագույն կիրառմամբ հիմնականում ավարտել է 4,2 հեկտար ճակնդեղի մշակումը:

Ամալյան կարծես մի պահ տիրեց.

— Այսպես, ընկերներ, Մեծ Քեթի գյուղի Բուդյոննու անվան կոլխոզի բարձր բերքի երիտասարդական օղակը մեղնից առաջ անցավ...

Աղջիկներն ու հարսները, որ քիչ առաջ ուրախ, ծալապատիկ նստել էին նախաճաշի և լսում էին օրվա նորությունները, այդ հաղորդումից հետո ընկան մտածմունքի մեջ:

Նրանք նայեցին արևին, որ մոտեցել էր գենիթին: Արտուրյանները կրկին ճռվողում էին լուրթ երկնքում՝ օդու լցնելով քաղցր երաժշտությամբ:

— Չե՞նք կարող էսօր քաղճանն ավարտել, — հարցրեց վերշապես երկար լուսթյունից հետո Ամալյան...

— Ի հարկ կարող ենք:

Այս պատախանը եղավ նրանց միակամ որոշումը: Նրանք անմիջապես բարձրացան տեղներից և անցան աշխատանքի...

Ճակնդեղի լավագույն մշակմամբ աշքի են ընկնում Շիրակի դաշտավայրի գրեթե բոլոր կոլխոզները:

Հացի բերքը կախված է բերքահավաքի աշխատանքների լավ կազմակերպումից. — Ժամանակին հավաքեցիր բերքը՝ շահեցիր, ուշացար՝ տանուլ տվիր, իսկ ճակնդեղի բարձր բերքը որոշում է մշակման ընթացքը: Դրա համար էլ Շիրա-

եի դաշտավայրի բոլոր կոլխոզներն ագրոկանոնների համաձայն, մեծ ջանասիրությամբ մշակում են բերքը:

— Նրանք շնչում են.—խորհրդավոր ասում է լավագույն քրիդագիրներից մեկը՝ Ավետիք Շահբազյանը, նայելով ճակընդեղի երկարածիդ մարգերին:

Նրանց զարգանալու, աճելու լավ շրջանն է և թիերից երեսում է, որ նրանք վատ շեն զգում իրենց փափուկ քարուրների մեջ՝ փուլսր հողում,—ասում է թոփառուի կոլխոզի նախագահ Վազգեն Նահապետյանը:

Սով աշխատանք են թափել կոլխոզնիկները ճակնդեղի բարձր բերքի համար: Ահա նրանք—աղջիկներ, զահել հարսներ ու հասակավոր կանայք, որոնք աշխատում են հիմա գաշտերում, մշակման վերջին աշխատանքները կատարելու:

Լայն են կանաչ թփերը: Նրանք շնչում են, նրանք աժում են:

Հպարտ են կոլխոզնիկները, որ իրենց թափած քրտինքը աշնանը տալու է սպասած բերքը: Նրանք գիտեն, որ Համամլուի շաքարի գործարանն սպասում է իրենց ճակնդեղին և այդ քաղցր բարը կտան Շիրակի հմայիշ հանդերը...



Խաղաղ ու զով է Ախուրյանի ափերին: Թավշագեղ կանաչ արտերը սկսվում են զեփյուռից: Արտերի ոսկյա ալիքը ասես ժպտում է ենող լիալուանին... Արտույտները ճովողում են իրենց քաղցր երգը. բուրումնավետ օդը հարբեցնում է մարդուն: Ալագյազը շաղամանդյա թագը գլխին, իմաստումն նահապետի նման, հայրական բարի հայացքով հսկում է Շիրակի շրնաղ, անծիր դաշտավայրը: Արծաթազօծ շրերը խոխոջալով հոսում են առուներով դեպի շաքարի բույսը: Վերջինս սիրում է նորմալ խոնավություն: Հիմա բոլոր կոլխոզնիկների միակ հոգու այդ շուրն է...

Այդ շրերը գալիս են Ալագյազի բարձր լեռներից. Ախուրյանից, Շիր-Կանալից, հոսում են զեպի Շիրակի բարեր դաշտը...

Խաղաղ ու զով է այս գիշեր. Հավքերի երգն է միանում ջրերի աշխույժ կարկաշին: Բերքը հյուրասեր տիրոջ նման ժպտում է մեզ: Սքանչելի՝ գիշեր... Հանկարծ պարդ, բյուրեղյա օդում զրնգում է Շիրակի ժողովրդական սրտահույք երդը: Շարժվում ենք գեպի երգիշը... Նա սկսում է նորը...

«Միրեցի՝ յարս տարան...» մեծանուն վարպետի հանրահռչակ երգը...

— Բարե, երիտասարդ:

Զրվորը զարմացած անսպասելի այցելությունից՝ նախ նայում է մեզ ուշադիր հայացքով, ապա ժպտալով պատասխանում է մեր ողջույնին:

Երիտասարդ ջրվոր Մխիթար Մխիթարյանն ընդամենը 21 տարեկան է, բայց նա բախտ է ունեցել մասնակցելու Հայրենական պատերազմին, մարտերով հասել մինչև Զեխոսլովակիա և վերջնական հաղթանակից մի քանի ամիս առաջ միրավորվելով՝ վերադարձել տուն:

Գոհ է նրա աշխատանքից Ախուրյանի կոլխոզի նախագահը: Սիրում են նրան, այդ կայտառ, կյանքով լիցուն, ժրաշան շրվորին կոլխոզնիկները:

Որքան ուշադիր և սրտանց է նա աշխատում: Նրա բահը ոչ մի ճակնդեղի թփի չի նեղացնում: Թոլորն էլ ծարավ են, ջուր են ուզում և Մխիթարը նրանց հագեցնում է:

Մխիթարից ոչ շատ հեռու աշխատում է ջրվոր, 19-ամյա խաշտուր Մաթևոսյանը: Նա ետ չի մնում Մխիթարից: Հիմա արդեն նա ունի մոտ 100 աշխօր: Եվ մինչև բերքահավաքը այն կհասնի 150-ի, իսկ դա նշանակում է՝ նա կստանա տանիյակ փթերով հաց, շաքար և այլ մթերքներ...

Երկնքի կապույտը ցրվում է. ասես բնության հանձարեղ նկարիչը վրձինի մի քանի շարժումով կապույտը դարձրեց կաթնագույն...

Մենք հաջողություն ցանկանալով երիտասարդ ջրվորներին՝ շարժվեցինք առաջ: Թարմ ու զով օդում կրկին հնչեցին երգի անուշ՝ մրմունջները.

«Գյուլջստանի մարալ աղջիկ, քեզ ի՞նչպես երգեմ,
երգս սիրո մի գութան չէ, որ սիրտդ հերկեմ...»

Արշալույսը փռում է իր կարմիր դրոշակը Շիրակի ար-
դասաբեր հանդերին։ Աշխատանքի ու սիրո երգն է զուզան-
ցում ու տարածվում ոսկյա արտերի, շաքարաբույսի ու ծա-
ղիկների վրա...

1946 թ. ամառ, Լենինական

ԵՐԱԾՈՒԿՈՒԹՅՈՒՆ

1.

Երբ Արարատյան դաշտում արեկի հրեղեն գունդը հասնում է զենիթին, թվում է, թե անդորրություն է տիրում։ Հավքերն անդամ արեկի կիզիչ ջերմությունից աղդվելով՝ փոխում են իրենց աշխույժ երգի եղանակը։

Խաղողի երկար ու գեղաշար թփերը, որ փոված են անծայրածիր դաշտում, մրգատու, բեռնված ծառերի կողքին, բացում են իրենց զինջ հայացքները արեկի ոսկեղճն համբուրին։ Տները թաղված են երկնաևաց բարդիների, ծիրանի, բալի, սալորի ու այլ մրգատու դալարագեղ ծառերի շքնակ աշխարհում։

Այս պահին գյուղում քիչ մարդու կհանդիպես, —միայն աշխատանքի անընդունակ ծերերին, հիվանդներին, —մյուս բոլորն այգիներում են, դաշտերում։

Այնտեղ, ուր խաղողի այգիները հասնում են հիմնակործան Դվին քաղաքի պարիսպների բեկորներին, առվի ամիկն կանգնած են երկու վիթխարի թթենիներ։

Այդ ծառերի տակ տարիներ առաջ կար մի մեծ սալաքար, որը շատ հավանական է հոյաշեն Դվինի պալատներից մեկինը պետք է լիներ...

Հավաքվում էին այստեղ, ծառերի հովին, գյուղի հոգածները, շահելներն էին ժամադրություն նշանակում, իսկ

Հովհանքը Արարատյան խաղողի թփերի կանաչ ծովմն էր, զիմացը՝ Դվինի բերդի բարձրագիր բլուրը...

Տասնյակ տարիներ են անցել: Հիմա շկա այդ մեծ քաքը, որ տաս հոգով հաղիվ կարելի էր տեղից շարժել, բայց թթենիները կան ու նրանց տակ կոլխոզնիկները հավաքվել են նախաճաշի:

— Այդ քարը մի օր գյուղացիները տեղահան արին, — պատմում է բրիգադիր Լևոն Խաչատրյանը, լսած այդ հին պատմությունը ու մի պահ դադար տալով, նայում խռնադիցներին...

Այդ պատմությունը բրիգադիր հին անդամները բոլորն էլ գիտեն:

— Հետո, — հետաքրքրված հարցնում են ութսումամյա հայրենադարձ Մամիկոն դային (Մախմուրյանը) և ջահելները, որոնք ուշադիր լսում էին այդ հին խորհրդավոր պատմությունը:

Լևոնը, իր նյութն ավելի հետաքրքիր դարձնելու համար, լսում է, վերցնում ծխախոտատուփն ու նայում Պարսամի երեսին:

— Երբ քարը վերցնում են, տակից դուրս է գալիս մի կուժ ոսկի...

— Վահ, այս երջանկություն, — պոռթկում է այտամուբուսներով սևաշյա երիտասարդը, որ սպասում էր պատմության վերջին:

— Ուկի... այն էլ կժուվ... Հետաքրքիր է, — խորիմաստ ասում է ծերուկը շրթունքների միջից թողնելով ծխի թանձր քուլաները:

Մամիկոն դային, որին իբրև հարգանքի նշան «հորեղ» էին ասում, լսելով բրիգադիրի պատմությունը, որը բորբոքել էր մի քանի երիտասարդների վառ երևակայությունը, նայելով խոսակիցներին՝ ասաց.

— Ո՞ւ ոսկին երջանկություն չի: Երջանկությունը ուրիշ բանի մեջ է, բայց հիմի վախտը չի, երեկոյան մեր զրույցը կշարունակենք, շատ նստեցինք:

Բրիգադիր Լևոնը, որ Հայրենական պատերազմի վոթուրիկներով անցած, մի բարձրահասակ երիտասարդ էր, համաձայնեց ալեղարդ ծերունու առաջարկին, և աշխատանքը վերսկսվեց:

2.

Ի՞նչ է երջանկությունը... Այս հարցը հետաքրքրեց ոչ միայն սուկու սիրահար մի քանի երիտասարդների, այլև հասկավորներին: Ամեն մեկը մտածում էր, թե ինչ պետք է ասի երեկոյան հայրենադարձ Մամիկոն դային, որ աշխարհ է տեսել ու մի ամբողջ կյանք ապրել:

Մամիկոն դային հին ու հմուտ այգեգործ է, և իր ողջ կյանքն անց է կացրել այգիների մեջ: Նա դիտե բույսի լեզուն, նրա կյանքն ու ցավերը: Երբ նա երկար, ջղուար մարմնով թեքվում է դեպի խաղողի թուփը, ասես հոգատակ բժիշկն է մոտենում հիվանդին:

Բրիգադիր Լևոն Խաչատրյանը նայում է հին այգեգործին հիացմանքով, ապա շշնջում տղաներին.

—Տեսեք թե ինչպիսի՝ սիրով է աշխատում:

Մամիկոնը հինգ տպա ունի, որոնք անցյալ տարի սեպտեմբերին իր հետ իրանից եկան Հայաստան, Արքաստան գյուղը:

Ամբողջ ընտանիքն աշխատում է նույն բրիգադայում: Ավագ տղան՝ Պարսամը, վայելլակազմ, թուխ դեմքով, ու ու վառվում աշքերով երիտասարդը իր եռանդուն աշխատանքով, ազնիվ բնավորությամբ գրավեց բրիգադիրի սիրտը: Լևոնը սիրեց Պարսամին, և նրանք դարձան անբաժան, մտերիմ ընկերներ:

Պարսամը շուտ տիրապետեց իր աշխատանքին, և երբ Լևոնը բացակայում է բրիգադայից, ղեկավարությունը հանձնում է Պարսամին:

Բրիգադայի մեջ էր նաև Հայրը՝ հմուտ այգեգործը, որը բացի իր մասնագիտությունից ուրեմն գործերի խառնվելու գույներ:

Նման պահերին հայր ու տղա նայում էին իրար երեսի:
Տղան գոհ էր իր դրությունից, հայրը հպարտ, որ իր տղան
արդեն այնքան է հմտացել, որ կարողանում է փոխարինել
բրիգադիր կոռնին:

Հոգեկան այնպիսի կապեր են ձուլել կոռնի և Մամի-
կոնի ընտանիքի միջև, որ այգեստանցի կոլխոզնիկը կղար-
մանար, եթե մի օր այլ կերպ լիներ:

Կոռնը իր հարազատ հոր նման հարգում է Մամիկոն
դայուն և թույլ չի տալիս դժվար աշխատանք կատարի: Դա
վերավորում է նրան:

— Սիրելիս, դու ինձ ծերի տեղ մի դնի, ես ձեզանից
էլ չահել եմ: Ես մի իղձ ունեմ, եթե նա կատարվի, այլևս
ոչ մի բանի մասին չեմ մտածի:

Վերջին խոսքերը նա ասում էր մտահոգությամբ:

Կոռնը լսում էր նրան ուշիմ ու միշտ մնում անպատաս-
խան, թե որն է պատկառելի ծերունու «մի իղձը»:

Այսօրվա ոսկու մասին պատմություն անելու նրա խոս-
տումը բոլորին հուզել էր: Բոլորն աշխատում էին շտեսնված
ջանասիրությամբ, ասես ցանկանալով դրանով շուտ հացնել
օրվա վերջին, որպեսզի լսեն ծերունու պատմությունը:

Արգարն ու Ստեփանը նույնպես հետաքրքրվում էին,
թե երջանկության մասին ինչ է պատմելու իրենց հայրը:
Նրանք ժրաշան կերպով մեծ տակառից իրենց ամանների մեջ
շացնելով երկնագույն հեղուկը՝ աճապարում էին դեպի խա-
ղողի թմբերը: Երկու եղբայրներ, կողք-կողք, զուգահեռ
մարգերով կապույտ արջասապի հեղուկի անձրևով ծածկում,
սրսկում էին խաղողի որթերը, որպեսզի նրանք չհիվանդա-
նան և առատ բերք տան:

Արդեն շորրորդ սրսկումն է կատարում կոռնի բրիգա-
դան, որը կոլտնտեսության առաջավորների շարքերումն է
քայլում:

Եղբայրները, ինչպես խնձորը երկու կես անես, այնքան
իրան նման են ոչ միայն արտաքինով, այլև բնամիորությամբ,
եռանդով ու ջանասիրությամբ:

Պարսամն ալստեղ վերջացնելով աշխատանքը իր երիտասարդ ընկերներով, կեռնի հետ դուրս եկան այգիներից...

— Ամի, — դարձավ կեռնը Մամիկոն Մախմուրյանին, — այստեղ դու հետևիր սրսկմանը, մենք գնանք արտը հնձելու: Ասում են մեր մրցակից Ե-րդ բրիգադան ուզում է մեղանից առաջ անցնել:

— Գնացեք, գնացեք առանց րոպե կորցնելու, — ասաց Մախմուրյանը, — ետ մնալը ամոթ է:



Շամփան ձգվում էր քաղցրաբույր փշատի ու ծիրանի ծառերի, բամբակի դաշտերի, բանջարեղենի բոստանների միջով: Երիտասարդ հնձվորները ուրախ կատակներով, զրուցներով կանգ առան առվի ափին:

Մի քանի քայլ այն կողմն աշխատում էր մոտ 18-ամյաց վայելակազմ ու սիրունատես մի աղջիկ: Նկատելով երիտասարդներին՝ աղջիկը բահը ուսելով շարժվեց դեպի ծառի ճողը:

— Լվացվենք, — աշքով արեց կեռնը...

— Լվացվենք, — միաբերան կրկնեցին երիտասարդները, աշքերը չկտրելով աղջկանից...

— Ո՞վ է նա, — հետաքրքրվեց երիտասարդներից մեկը:

— Մեր գյուղի հերոսուհիներից մեկը, — ասաց կեռնը: — Այս տարի մենակ ինքը ութսուն աշխօթ ունի: Հոր միակ աղջիկն է: Հորից ետ շի մնում աշխատանքի մեջ:

Պարսամը հիշեց իր կրտսեր եղբորը՝ Վարդանին, որ այդ պահին տանը հանգստանում էր, նա գիշերը բամբակը ջրելու պիտի գնար:

Երիտասարդներից ամեն մեկը լվացվելով ինչ էր մտածում, շգիտեմ, բայց կեռնը լթաքցրեց իր մտքերը...

— Ինքը կյանք ու լույս, անունն Արշալույս: Հայրն էլ հիանալի մարդ ու առաջավոր կոլխոզնիկ: Երանի՛ նրա փեսային:

— Ո՞նց է, որ ես այս աղջկան իրանում չեմ տեսել, —
ասաց Արգարը, — ի՞նչպես է ազգանումը:

— Ենտեղ ամեն մեկն իր ցավերով էր տարված, ո՞վ էր
ում տեսնում, — ցավով նկատեց Պարսամը, ապա ավելաց-
րեց. — մեր Հովհաննի աղջիկն է:

Երիտասարդ հնձվորները լվացված ու թարմացած, մի-
մի անուշ հայացք նետելով աղջկա կողմը, շարժվեցին դեպի
ցորենի արտերը:

Լևոնը, օգտագործելով առիթը, ասաց.

— Այ, Պարսամի նման գործեցեք, և հաջողության
կհասնեք... Մի տարի շկա, արդեն կատարյալ ամուսին էլ
դարձավ, առավ մեր գյուղի լավագույն ուսուցչուհում, տուն
տեղ ստեղծեց, կոլխոզն էլ նոր բնակարան է կառուցում:
Կյանք է վայելում: Իսկ դուք:

Տղանեռը բրիգադիրի վերջին խոսքերն ընդունեցին իբրև
նախատինք, փորձեցին հակածառել, բայց փաստը բոլոր
դեպքերում ավելի զորեղ է, և նրանք լուցին:

— Հա, էն էլ ասեմ, որ աղջիկները միշտ լավ աշխա-
տողներին են առաջնություն տալիս, հաշվի առեք: Այդպես
չէ, — ասաց Լևոնը, նայելով Պարսամի սև ու արտահայտիչ
աշքերին...

Պարսամը անհարմար զգաց: Նրան թվաց, թե Լևոնը
կսկսի պատմել, թե ինչպես ինքը կոլխոզի ընդհանուր ժո-
ղովում, ուր իրեն էլ առաջապոր կոլխոզնիկների հետ պար-
գևատրեցին, ծանոթացավ Վարդուշի հետ ու ամուսնացավ:

Պարսամը հաճույքով պատկերեց այդ վառվուն ու
կայտառ կոմերիտուհուն, Վարդուշին, իրենց հանդիպումներն
ու զրույցները նրա հետ: Պարսամին սկզբնական շրջանում
թվում էր, թե ուսուցչուհին իրեն դաս է տալիս, բայց մտեր-
մությունը քիշ-քիշ ցրում էր պաշտոնական բնույթը և նյութի
բովանդակությունը կլանում էր նրան: Վարդուշը նրա առա-
ջին դաստիարակն ու խորհրդատուն եղավ: Նրանից նա
իմացավ, թե ինչի է ձգտում մեր երկիրը, ինչպես է կառուց-
ված մեր պետությունը, մեր կարգերը: Ինչպիսի դժվարու-

թյուններով ենք հասել ժողովրդի այս ազատությանը, ինչպիսի հիմնավոր ազատությունը:

— Այո, այո, ես շատ բանով եմ պարտական իմ ընկերություն...—գրեթե բարձրաձայն ասաց Պարսամը...—Հիմա էլ որ տուն եմ գնում, ստիպում է, որ կարդամ, զարդանամ:

«Թը լավ աշխատող ես, առաջավոր, դրա համար բոլորը քեզ սիրում ու հարգում են: Բայց սովետական քաղաքացին պետք է պատրաստված, դիտակից լինի: Մեր երկիրն առաջավոր երկիր է, մեր ժողովուրդը՝ ամենակուլտուրականն է աշխարհում...»—կարծես հնչում էին Վարդուշի խոսքերը Պարսամի ականջին:

— Ահա և մեր ոսկին,—բացականչեց լևոնը, երբ բարձր բերքի երիտասարդական օղակը հասել էր մարդահասակ, լայնածավալ արտին:

Հասկերը շրջում էին...

3.

Վերջաբույսին՝ արեն ասես իր քուրան էր վառել այգիների մեջ, բոսորափայլ թույլ շողերը ցըելով ծառերի արանքից, բամբակի դաշտերի ու ոսկյա արտերի վրա...

Պարսամը հանել էր բլուզը, ցուցահանելով իր շլուտ բազուկներն ու հաղթ կուրծքը: Այգեմշակման աշխատանքներից հետո,—բերքահավաքը նրան մի առանձին հողեկան համույթ էր պատճառում: Մանավանդ որ ինքը առաջին օրվանից մասնակցել էր ցանքի, հողի պարարտացման, մշակման բոլոր աշխատանքներին:

Անցյալ տարի այս ժամանակ դեռ իրանում հայաքում էր ուրիշի բերքը:

Նա գտել էր իր կյանքը և աշխատում էր անսպառ եռանդով:

Երբ գերանդին ետ էր գնում, ապա կիսաշրջան անում ձույլ հասկերի: Հյուաքը կուտակելով ձախ կողմում, թվում էր, թե այս է, սիրտն ուրախությունից դուրս պիտի թոշի:

Լեռնը հնձում էր նրա կողքին։ Գերանդին աժմէն անգամ անում էր իր միօրինակ «կըխկ» հնչյունը և այդ հնչյունի հետ կոնի ու Պարսամի ժպտավառ հայացքները հանդիպում էին իրար։

Լեռն ուզում էր առաջ լնկնել, բայց Պարսամը կարծես ընկերոջը ոգևորնելու համար էր այդ թույլ տալիս։ Անցնում էր մի հինգ րոպե, Պարսամը կրկին կոնի ձախ կողքին էր։

Լեռնին խանգարում էր պատերազմում ստացած վերքը, որն անհետեանք չէր անցել։ Պարսամն այդ դիտեր, դրա համար էլ միշտ չէ, որ աշխատում էր մրցել նրա հետ...

Պարսամն ու նրա շորս եղբայրները, երբ գարնանացանի օրերին կոնի հետ միասին կարդացին Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Մարիամ Մարտիրոսյանի աշխատանքի փորձի մասին գրված գիրքը, մտածեցին երկար ու ասացին։

— Քնիեր կեռն, մենք չենք կրնա այդպիս աշխատի։

— Կարող ենք, և պետք է աշխատենք։

Հետո կոնը եղբայրներին ու իրանից վերադարձած երիտասարդ դարրին նորայր ու Դրիգոր Խաչատրյան եղբայրներին Հայրենական պատերազմի մարտերից էպիզոններ պատմեց։ Պատմեց իր մտերիմ մարտական ուռւ ընկերոջ կորուստը...

— Կոփիր վերջացավ մեր մեծ հաղթանակով, մեծ կորուստների ու զրկանքների գնով։ Խաղաղությունը, մեր կյանքը մենք պետք է կառուցենք նյութական բարիքների առատությամբ, — ավարտեց իր զրույցը կոնը։

Երիտասարդները հուզվեցին։ Բայց ոչ մի խոսք շապացին։ Այդ խոսքն արտահայտվեց նրանց գործերում...

4.

Դյուղամիջի երկար ճանապարհին, որ կամարվում է առվի եղերքին, կանգնած է մի սպիտակ, միահարկ շենք։ Շենքի ճակատին անցորդը կտեսնի «Տեմպի տախտակը»։

Կոլխոզնիկները՝ վերադառնալով՝ աշխատանքից ամենից առաջ մոտենում են տախտակին, տեսնելու, թե այսօք իրենց բրիգադան որ տեղն է գրավում:

Իսկ հինգ օրը մեկ կոլխոզնիկը գիտե նաև, թե քանի աշխատ է վաստակել ինքը և իր մրցակից ընկերը:

Պարսամն ու Լևոնը գրասենյակի մոտ, «Տեմպի տախտակի» առջև հանդիպեցին Վարդանին, որ բան ուսին գնում էր բամբակը ջրելու:

Վարդանը գոհ էր իր բրիգադայի այդ օրվա աշխատանքից և գոհ սրտով գնում էր կատարելու իր պարտքը:

Լևոնը մի քանի ցուցումներ տվեց ջրելու մասին ու բռնելով Պարսամի թեկից՝ մտան գրասենյակ: Բրիգադիրները հավաքվել էին կոլխոզի վարչության նախագահ Արտաշես Այվազյանի մոտ՝ հաջորդ օրվա աշխատանքի վերաբերյալ ցուցումներ ստանալու:

Այվազյանը, որ կոլխոզի հիմնադիր անդամներից մեկն էր և կոլխոզը զեկավարելու մեծ փորձ ուներ, կարճ ու պարզ լեզվով, ասես հրամանատարը իր ենթականերին, ասաց վաղվա անելիքը: Լևոնը իր բլոկնոտում նշեց ասածները ու դուրս գալով Պարսամի հետ՝ բաժանվեցին:

Այդեստանի կոլխոզը՝ միլիոնատեր կոլխոզ է շնորհիվ այն բանի, որ այստեղ բացի հողի բերրիությունից ամեն մի կոլխոզնիկ գիտակցորեն է վերաբերվում դեպի հանրային աշխատանքը, նվիրված է կոլխոզին ու վերջինիս մեջ է տեսնում իր կյանքի ու գոյության իմաստը:

Լևոնը, որ իր կյանքը չ պատկերացնում կոլխոզից դուրս, աշխատում է այդ գիտակցությունն ու պետական կարգապահության ոգին մտցնել ամեն մի նոր կոլխոզնիկի: մեջ:

Նա մեծ առաջնորդին խոսք է տվել երկրին սրաշ բարձր բերք... և խոսքը չկատարելը խայտառակություն է...

— Եվ կկատարենք մեր խոստումը, — ասում էն բոլորի հայացքները:

Եվ կկատարենք այդ ցույց է տալիս նրանց հերոսական աշխատանքը:

Զկա բրիգադա, չկա օղակ, որ շկատաթի և չգերակատարի օրվա առաջադրանքները: Բոլորը, բոլորը լցված են մի ցանկությամբ, ասես անտես մի գերբնական ուժ նրանց մղում է աշխատանքային սխրագործության, փառի...

Այդ ուժը նրանց գիտակցությունն է, նվիրվածությունը իրենց մեծ գործին:

— Ի՞նչպես է աշխատում Մախմուրյանների ընտանիքը...

— Հրաշալի, — անմիջապես վրա է բերում կոլխոզի նախագահը: — Մեզ մոտ տեղակորված 33 ընտանիքի բոլոր աշխատումակ անդամներն ունեն աշխատանք և իրենց գործը կատարում են հիանալի: Գոհ եմ ամբողջ հոգով:

Եվ նա թվում է Մախմուրյանների ընտանիքի աշխատասեր ու բարեխիղճ անդամների անունները: Նրանց շնտանիքը եկավ անցյալ տարվա սեպտեմբերին: Անցյալ տարվա երկու ամսվա աշխատանքով վաստակեցին 277 աշխօր, որի դիմաց ստացան 305 կիլոգրամ հաց, վեց կիլոգրամ պանիր, 277 կիլոգրամ խաղող, վեց կիլոգրամ մեղր, 2 կիլոգրամ յուղ, 21 կիլոգրամ փշատ, 7 լիտր օղի, 277 ռուբլի դրամ և այլն:

Սա իրենց հալալ վաստակն է, բայց կոլխոզի և պետության օգնություննից:

Նա առանձին հիացմունքով է խոսում դարբին Խաչատրյան եղբայրների աշխատանքի մասին, որոնք այս տարի, մինչև այսօր վաստակել են 220 աշխօր:

Դա ամենաբարձր վաստակն է, որ այսօր քշերն ունեն: Խորհրդակցությունը քիչ-քիչ ստանում է մտերմական դրույցի բնույթ: Մանավանդ քննվելիք խնդիրը վերաբերում է հայրենադարձ եղբայրներին: Այս խնդրի քննարկումը միշտ շրջապատված է փայփայանքի ու սիրո ջերմ զգացմունքով, և մարդ միշտ աշխատում է ավելին լինի կատարված, քան եղել է:

Ահա նորակառույց տները: Մի քանիսը միայն ծածկված չեն, մի զգալի մասին էլ դեռ ապակի չի գցված, բայց նրանք

Քրջապատված են տնամերձ պողատու այգիներով ու բան-
շարանոցներով:

Հայրենադարձ բոլոր տնտեսություններն էլ ունեն տնա-
մերձ այգիներ, մեկական կով (մի քանիսի բացառությամբ),
մանր եղջերավոր անասուններ:

Հաշվապահը իմ սեղանին է փոռում թվերի թերթիկներ,
որոնք ցուցյ են տալիս նրանց կատարած աշխատանքը,
ստացած եկամուտը, պետության ու կոլխոզի օգնությունը:

Այգեստանի 33 տնտեսությունները տասն ամսում ան-
վերադարձ օգնություն են ստացել միայն հացահատիկ 7287
էլեկտրամ, բացի ձավարեղենից, յուղից, խաղողից, շաքա-
րից, օճառից ու վառելափայտից:

Շատ բան է արված հայրենադարձների համար, նրանց
օջախը կազմակերպելու համար, իսկ մնացածը իրենց ձեռ-
քումն է:

Ամեն ոք իր փառքը, իր պատիվը բարձրացնում է աշ-
խատանքի, իր ունեցած ընդունակությունների շնորհիվ:

Պնտությունը բոլոր միջոցները տրամադրում է մարդու
բարեկեցիկ միջակի համար:

5.

Բարձր թթենու հովի տակ, լայն գորգերի վրա ծալապա-
տիկ նստած կեռնի բրիգադայի անդամները լսում են Մամի-
կոն դայու պատմությունը:

— Ասում եք՝ ի՞նչ է երջանակությունը, — սկսեց Մախ-
մուրյանը լցնելով շիրովսը: — Ես շատ և շատ ազգեր ու
մարդիկ եմ տեսել: Ամեն մարդ մի փոքր բան իր երջանկու-
թյունն է համարում:

Ես ութսուն տարի ապրել եմ լուսնի տակ: Այ ես գըժ-
վարությամբ եմ խոսում հայերեն, խլել են իմ ամենանվի-
րականը՝ լեզուն... Ես իրանում հայերեն լեզվով խոսելու
իրավունք չունեի, եթե ցանկանում էի աշխատանքի մեջ մնալ:
Իսկ զավակներիս պետք է մեծացնեի: Մայրը նրանց հայերեն

էր սովորեցնում, ասում էր՝ կա Հայաստան, իսկ իմ մեջ
վառվում էր հուսո կրակը...

Աշխատում էի Ռդա-շահի այգիներում: Վաստակս ձեռքս
չեր ընկնում: Ապագա չկար, ներկան անհրապույր էր: Մի
կերպ մեր գոյությունն էինք պաշտպանում: Բայց հարցը մի-
այն ապրուստի կամ հարստության մեջ չէր: Ես դիտեմ մար-
դիկ, որոնք և ոսկի ունեին, բայց երջանիկ չէին: Ոսկին դուռ
երջանկություն չի: Մարդ ոսկով ազատություն, աղատ կար-
գեր չի կարող նվաճել, իսկ մարդուս համար կյանքը աղա-
տությունն է:

Ուրիշի երկրում մարդ աղատ լինել չի կարող: Մարդն
առանց երկիր—Հայրենիք, ուստի միևնույնն է, թե արծիվն ա-
ռանց թեերի, կամ ձուկն առանց զրի...

Եթե սովետական ժողովուրդը շփրեր իր Հայրենիքը, ուս-
կհաղթե՞ր: Երբե՞ք: Եթե չհաղթեր, նա կունենա՞ր կյանք ու-
երջանկություն: Երբե՞ք:

Ուրեմն կյանքն ու երջանկությունը Հայրենիքից կրխնն:

Հայրենիքն է մարդուս երջանկությունը:

Հինգ տղա ունեմ, և բազուկներումս էլ մեծ ուժ կա:

Այստեղ են նաև իմ եղբայրն ու նրա տղան: Մեզ օտա-
րության փոթորիկը գցեց Հայրենի ծաղկուն ափերը, մեր եղ-
բայրների գիրկը:

Պետությունը մեզ տվել է ամեն ինչ: Հայրենիքը, կոլխո-
զը օգնում են մեզ ոտքի կանգնելու և ապրելու այնպէս,
ինչպես մարդը պետք է ապրի պատվով, արժանավայել:

Մեր Հայրենի հարազատ հողում բարձրացել են մեր
օջախները: Նրանք հաստատ են, որովհետև հարազատ հողի
վրա են կառուցված:

Ալեհեր ծերունին անպաճույն խոսքերով ասում էր իր
որտի խոսքը, նայելով երիտասարդների առողջ ու կենսա-
վառ դեմքերին:

Հովը խաղացնում էր ծառերի թփերը, ինքնայերը
աղմկում էր պատշգամբում...

— Ի՞նչ իղձ ունեք, կամ ցանկություն,— հարցրի իս,
երբ Մախմուրյանը լցնում էր շիրուխը:

— Ամենամեծ ցանկությունը, իղձը դա աշխատանքն է իր հայրենիքում, որովհետև աշխատանքն է մայրը բոլոր բարիքների, աշխատեցիր՝ ամեն բարիքի էլ կհասնես:

— Այնուամենայնիվ,—կրկնեցի հարցու:

— Ես ամենաերջանիկ մարդն եմ, այսօր մեկ տարի չկագալս, տուն ու տեղ, բաղ, անասուն ունեմ, աշխատանք ունեմ, տղաներ ունեմ, Պարսամին նշանեցի,—լավ հարս ունեմ... կոլխոզն էլ հոգում է իմ մասին: Նորապակ տղայոս նոր տունն էլ կոլխոզն է կառուցում, մի ամսից պատրաստ կը ինի:

Նստել էր Մախմությանը հաղթ կաղնու նման շրջապատված իր քաջառողջ, աշխատասեր տղաներով: Նրա մուգ, արևախանձ դեմքը փայլում էր լուսնի արծաթե շողերից:

Դեմից, այգիների ֆոնին, որպես հավերժության ու փառքի սիմվոլ՝ տիրաբար նայում էին բիբլիական Արարատի հպարտ գագաթները:

Ես տեսա նրա սեեռուն հայացքը հառած գագաթներին ու այտին ցոլացող արցոնքի գոհարը:

Ի՞նչ արցունք էր դա—երջանկության, թե՞ մի այլ տենչանքի...

Երուսաղարդ վարպետը կոփվների ու ջարդերի տարիներին Վանա լճի ափերին կորցրել էր իր հարազատներին...

Արագի ափին, այգիների մեջ կանգնած մեր սահմանապահը նայում էր հեռու, այն ափին կանգնած սգացող ու ունենում...

Արշալույսը բացվում էր մեծ երկունքով, արեւ պատռելով երկնքի խավարը անագորույն թափով, շողաց լրիվ ու հաղթական:

Արարատի գագաթները կարմիր հագան...

ՄԱՔՍԻՄՈՆ ԵՐԳԻ

Երբ դեռ աղջամուղջով է պատաժ կանաչազարդ Երևանը, նորքի բարձունքի փեշերով հատուկ ապրանքատար գնացքը սլանում է դեպի Քանաքեռ:

Այգիների դալարագեղ, մրգով ծանրաթեռնված ծառերը ասես գողունի նայում են դեպի կամուրջը, որի վրայով ամեն օր, նույն պահին անցնում են բեռնված վագոնների շարանները:

Երկինքը հանդարտ, ամոթխած հարսի նման, ետ է տանում իր կապույտ շղարշը, բաց անելով իր պայծառ դմբքը՝ Մեքենավարը դմայլված դիտում է Արարատյան լայնածավալ դաշտավայրը, Հայոց աշխարհի զարթոնքը:

Արևը իր վառ շողերն է փոռում աշխարհի վրա:

Մեքենավարը նորատունկ ծառերի ու պարտեզների միջով տանում է իր գնացքը, ասես դեպի Արագածի հավերժական գագաթը, սակայն Քանաքեռգէսին շհասած՝ քարքարոս բարձրավանդակի վրա ոելսերը հատվում են ու գնացքը կտնդ է առնում: Սա կայարան չէ. այստեղ բարձրանում է մեր օրերի խոշորագույն նորակառույցներից մեկը, Երևանի Ալումինի գործարանը:

Այստեղ կլինի մի նոր քաղաք՝ իր կանաչազարդ բանվորական ավաններով և կուլտուրայի օջախներով: Դա կլինի 1950 թվին, երբ մեր ծաղկուն Հայրենիքը իր գիգանտների թվում կանաչ քարտեզի վրա կնշի և ծրեանի գոր-

ծարանը, իսկ այժմ այդ գորշագույն, քարքարոտ տարածության վրա ձգվել է երկաթ-բետոնի, կիսավարտ շենքերի, հողային հսկա խոռոչների, տեխնիկայի ու ձեռնարկությունների՝ առաջին հայացքից խառնաշփոթ թվացող աշխարհը: Այդ ամբողջի մեջ գեռ հեռվից սովորական աշբը կնկատի մոտմի կիլոմետր տարածության վրա վեհորեն բարձրացող հաստ երկաթաձողերը՝ ֆերմաները:

Այդ կանոնավոր, հավասար տարածությամբ մեջընդմեջ կեցած, մոտ կես մետր լայնությամբ երկաթյա ֆերմաները բարձրանում են և նրանց վրա ցցվում են միացնող երկաթյա հեծանները՝ ստեղծելով էլեկտրոլիդ կոչված հիմնական ցեխի մետաղյա հսկայական կմախքը:

Եվ եթե, սիրելի ընթերցող, բարձրանաս նրան կից տրանսֆորմատորայուղային տնտեսություն ունեցող սնդիկային վերփոխիչ ենթակայանի նորակառույցի կտուրը, քեզ պարզ կերևա այդ երկար հեծաններից կառուցված «շենքի» վրա բարձրացող նոր հարկի շինությունը: Կտեսնես նաև զուգահեռաբար ձգվող նույնանման ցեխի քարտաժայու հիմքերը:

Երկաթ և քարաժայու:

Երկաթը խրվում է կարծր ժայռի կուրծքը և հաստատուեն խոյանում վեր, դեպի կապույտ երկինքը:

Մեջընդմեջ կեցած երկաթի հաստ ձողերից, ֆերմաներից կառուցված «շենքի» ամբողջ երկարությամբ ձգվում են էլեկտրականության հոսանքի համար ծառայող շիների կանալները, որոնք երկու կողմերից ճյուղավորվելով միանալու են: Մետաղաձույլ վաննաներին:

Երկաթակուր զենքի աշխատանքը դեռ չի ավարտված: Երկաթին դեռ կմիանա բետոնն ու ապակին, որպեսզի էլեկտրոլիդի այդ ցեխում հավասար շերմություն պահպանվի: Այստեղ դրվելու են հսկայական վաննաներ, որոնց մեջ երկու հազար աստիճան էլեկտրոզերմության ներքո հալվելու է կավահողը:

Հետաքրքիր ու բարդ մշակման է ենթարկվում կավու-

Հողից սահացված հրահեղուկը այդ վաննաներում, իսկ արդ ժրաշան մարդիկ դեռ հավաքում են վաննաների մասերը, ստեղծում են օժանդակ ցեխերը, կահավորում այն բարդ մեքենաներով ու սարքավորումներով:

Մինչ ընտթյան սիրահարը, բանաստեղծը հիշյալ կտուրից կհիանար հոգեղմայլ արշալույսի ներքո բացվող տեսարաններով, մենք, սիրելի ընթերցող, քեզ հետ միասին լինենք ավելի համբերատար ու խոհուն, տեսնելու արտաքին աշխարհի գեղեցկության հետ մեկտեղ և այն մարդկանց ու գործերը, որոնց պիտի փառք տան սերունդները:

Տեսնենք գործարան ստեղծող հերոս մարդկանց հոգեկան ու բարոյական գեղեցկությունը, որքան թույլ է տալիս ակնարկի շափն ու ծավալը:



Ճարտարապետ Ռազմիկ Մելիքյանը Ալումինշինից գլուխվոր մեխանիկն է, շինարարության բոլոր պրոցեսների մասնակիցը: Մեխանիզացիայի, գյուղարարության ու կատարելազործման ներդրողն ու նախաձեռնողը: Ոչ մի մոնտաժ, ոչ մի տեխնիկական նորմուծություն չի կատարվում առանց նրա գործոն մասնակցության: Նա ինքն է հեղինակը բազմաթիվ գյուտերի և ռացիոնալիզատորական ձեռնարկումների, որոնք հեշտացնում, արագացնում են կառուցման տարրեր, բարդ աշխատանքները:

Հարուստ ու բազմափորձ կյանք է անցել ճարտարապետը: Արտարուստ ոչնչով աշքի շրնկնող այդ համեստ, արմից սեացած դեմքով, ոն աշքերով միջահասակ մարդը, տարիներ առաջ վերջացնելով Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Հիդրոտեխնիկական ֆակուլտետը՝ ձգտել է մեծ շինարարություններ, տեխնիկական փորձ ու հմտություն ձեռք բերելու: Ինստիտուտը նրան տեսական մեծ լիցք էր տվել, հարկավոր էր այն մարմնավորել գործնական աշխատանքում: Նվազա, նորավարու ճարտարապետի առաջ բացվում են գործողու-

Քյան հիանալի հեռանկարներ: Նրա իղձերն իրականանում են: Նա սրտի թրթիռով ու ներքին անզուսապ մղումով աշխատում է Ստալինյան հնգամյակների պսակներից մեկը կազմող Վոլգաստրոյի վրա:

Անցնում են տարիներ: Ավարտվում է շինարարությունը: Փորձառու ճարտարապետ Մելիքյանին նշանակում են Վոլգաստրոյի խոշոր հանգույցներից մեկի՝ Ռիբինսկի գրդավոր ինժեների և մեխանիկի՝ պաշտոնում: Վեց տարի ընէ. Մելիքյանը աշխատելով հին, նշանավոր ու բազմափորձ կառուցողների ղեկավարությամբ, հետզհետեւ յուրացնում է շինարարության բարդ արվեստը, գրավում ինժեներա-տեխնիկական պերսոնալի սիրտը, արժանանում կառուցող բանավորների ջերմ համակրանքին:

Սովետական կառավարությունն ըստ արժանավույն նշում է այդ եռանդուն ու տաղանդավոր ճարտարապետի բնույթավոր աշխատանքը, պարզեատրելով նրան «Պատվոնշան» շքանշանով:

Սկսվում է Հայրենական Մեծ պատերազմը: Ճարտարապետն իր ընկերներին ճանապարհում է ուղամաճակատ: Թիկունքում ծավալվող տեխնիկական նոր ձեռնարկումները և հիվանդությունը նրան թույլ չեն տալիս գնալու կարմիր Բանակի շարքերը:

— Դու այսաեղ պակաս հաջողությամբ չե, որ կկովես թշնամու դեմ,—ասացին, նրան նշանակելով նոր աշխատանքի հեռավոր Ռւրալում: 1941 թ. ծանր փորձության օրերն էին մեր Հայրենիքի համար: Հղփացած գերմանական հրոսակախմբերն առաջ էին մղվում: Պարտիան ու բանվոր դասակարգը իր տեխնիկական բազաները թշնամու կրակի տակից տեղափոխում էր արևելք, Ռւրալ: Գիշեր ու ցերեկ տասնյակ գնացքներ բեռնված դազգահներով, սարքավորումներով, ամբողջ ցեխերով տեղափոխվում էին Ռւրալ՝ զենք կուելու մեր մեծ հարձակման ու հաղթանակի համար: Ահա այդ էշելոններից մեկով գնում էր նաև ճարտարապետ Ռազմիկ Մելիքյանը դեպի Ռւրալ, Ներքին Տագիլ, կատարելու հայրենասեր քաղաքացու իր սրբազն պարտքը:

Այստեղ նույնպես Ռազմիկ Մելիքյանը պատվով գուրս ժկավ և երբ հաղթանակի սալյուտի բազմերանգ հրթիռները ծաղկեցին Մոսկվայի երկնակամարում և ավետեցին աշխարհին կյանք ու խաղաղություն, Մելիքյանը զինված տեխնիկական փորձով՝ որոշեց մասնակից լինել Երևանի Ալումինի գործարանի շինարարության մեծ գործին: Ղեկավար օրդանները ողջունելով ընդառաջեցին ճարտարապետի ցանկությանը, և նա իր ընտանիքով տեղափոխվեց Երևան:

Նրա ամրերը այդ շինարարությունն է: Նա ամբողջ եռանդով, սիրող սրտի ամբողջ չերմությամբ առաջ է, տանում իրեն հանձնված աշխատանքները: Նա մի շարք մասնագիտություններ ունի:

— Նա ամեն բանից հասկանում է, — ասում են ցեխերի պետերը: Եվ այդ է պատճառը, որ նրա սուր աշխից ոչինչ չի պրիպում: Նա հսկում, հետևում, սովորեցնում է վարպետներին, մասնակցում մոնտաժի աշխատանքներին, անձամբ զրադվում է կադրերի գաղափորման և նրանց խելացի օգտագործման հարցերով:

Բարձրանում է հրաշեկ արեւ և զենիթից կարծես ուղիղ շինարարության գլխին վառում իր քուրան, սակայն դա ոշնչով չի նեղում Գրիգորի Ֆոմինիխինին, նա հագնում է իր բրեզենտե կոմքինեզոնը՝ աշխատանքային հագուստը, շեկ ու խիտ մազերը հավաքելով գլխարկի մեջ և առնելով հպումը՝ «ակնոցները» բարձրանում է ֆերմաների գլուխը:

Նա բազմաթիվ տարիներ աշխատել է Ուրալում, որպես մետաղներ զոդող, և երբ նրան 1944 թվին ասացին, որ Հայկական ուսուպուրլիկայում կառուցվում է Ալումինի խոշոր գործարանը, նա թույլ շտվեց շարունակելու խոսակցությունը: Եատ էր Գրիգորին լսել արեւոտ Հայաստանի, ուստի գողովրդի հին բարեկամ հայ ժողովրդի մասին և կարճ ու հատու հայտարարեց.

— Արտանց կաշխատեմ:

Հիմա աշխատում է Գրիգորի Ֆոմինիխինը: Մեխանիկական ցեխում նա պատրաստում անհրաժեշտ մասեր, ապա

բարձրանում իր դործիքներով երկաթացանցերը զողելու; որպեսզի նրանց միացումները, կապերը ամուր լինեն, ինչպես ամուր ու հաստատ են այն սերն ու սրտագին կազը, որ կասովինտական մեր ոռու ավագ եղբար ու հայ ժողովրդի միջնէ:

Գրիգորին իր ամսական առաջադրանքը կատարում է ոչ պակաս քան 200 տոկոսով: Նա մրցման մեջ է նույն մասնադիտությամբ աշխատող Վլադիմիր Շտոկմանի հետ և հաճախ, երբ ստախանովական խառատ Ավետիս Թուսիկյանը հանդիպելով Գրիգորիին հարցնում է նրա գործերի մասին, վերջինս համեստորեն, մեղմ պատասխանում է:

— Ոշինչ, վատ շեն:

Այո՛, վատ շեն, գերազանց են ընկեր Ֆոմինիխինի գործերը: Նա իր աշխատանքի մեջ դնում է ոչ միայն իր եռանդը, այլև սիրութ. նրա զողած մետաղները կդիմանան դարեր, որովհետև զողազ այն հրազեռ կրակին այդ հիանալի մարդու ու վարպետը դնում է իր սրտի սերն ու ալյունը:



Ալումինշինի դիրեկցիայի փոքրիկ սենյակներից մհերւմ տեղավորված է կադրերի բաժինը: Այստեղ միշտ աշխուժություն է տիրում: Այսօր քարտուղարութին տռանձնապես ուշադիր է գեպի հաճախորդները: Բանակից նոր զորացրված հաստատ ու բարի բնավորությամբ մարդուն զիկուցում է սեալյա, կայտառ քարտուղարութին.

— Ընկ. Սմբատյան, եկավ...

Կադրերի բաժնի վարիչ Վիրաբ Սմբատյանը ներուղւթյուն խնդրելով ներկաներից, վեր կենալով, ողջույնի քաղցր ժպիտը գեմքին, դիմավորում է ներս մտնող երիտասարդին:

— Խատեք խնդրեմ, —ասում է ընկ. Սմբատյանը:

— Ծնորհակալություն, —շնչում է երիտասարդը շփոթված, տեղավորվելով դիվանի վրա:

Մինչ ընկ. Սմբատյանը հետաքրքրվում է երիտասարդի

առեղավորման, նրա տրամադրության, վիճակի, առողջության հարցերով, ես օգտվելով առիթից նայում եմ սեղանի վրա դրված փաստաթղթերին:

Հովհաննես Բայալյանը Հայաստան է ժամանել օրերւ, ԲԵՐՈՒԹԻԿ: Նա 24 տարեկան է, գունատ ու մաշված: Նրա խոսակցության մեջ կա ինչ-որ քաշվածություն, անհամարձայիկություն: Ես ակամայից հիշում եմ մեր պիոներներին, որոնց կրակոտ, համարձակ պատասխաններից մարդ կարող է շփոթվել: Նա պատմում է իր ընտանիքի, ծնողների, եղբոր իրավազուրկ, շարքաշ կյանքի մասին.

— Ես հարուստի մոտ օթոմիրիլի վրա կաշխատեի, իսկ եղբայրս կոշկակարություն կներ...

— Ուրեմն ուզում եք աշխատել մեքենայի վրա, — Հարցնում է Սմբատյանը:

— Այո, — անվարան պատասխանում է Հովհաննեսը՝ Կաղրերի բաժնի վարիչը կանչում է գարաժի վարիչին: Ես զնուում եմ մի դոկումենտ, որ ծոցի գրպանից հանելով ինձ է պարզում Հովհաննեսը:

Այդ դոկումենտը խոսում է նրա կյանքի դժվարին ուղղ մասին:

Հովհաննեսի գունատ դեմքը շառագունում է, երբ նա խոսում է ազատության, իրավունքի մասին և երշանկությունից նրա աշքերը վառվում են և վտիտ ուսերը ասես ուղղվում:

Սմբատյանը կարգադրում է գարաժի վարիչին՝ տալ ամենասարքին և լավ մեքենան, որը կցանկանա Հովհաննեսը:

— Սկզբնական շրջանում կցեք Հատուկ շոփերի, որ նրան ծանոթացնի փողոցներում երթևեկելու կանոններին, երթերին, նշաններին և տվեք մատակարարման ամենաբարձր նորման, — կարգադրում է կադրերի բաժնի պետք:

Քիչ հետո ժպտալով գեղեցիկ մեքենագրուհին Հովհաննես Բայալյանին է հանձնում կադրերի բաժնի հրամանը, իսկ կատակասեր, աշխույժ գարաժի վարիչը, մնամ բարե ասելով, Հովհաննեսին թևանցուկ անելով, դուրս են գալիս պրասինյակից:

Նրանց ուղեկցում են բարեկամական տասնյակ հայ-
յացքներ:



Եինմոնտաժի գլխավոր ճարտարապետ Կովալենկոյիր
գյոււռն է քարահատող մեքենան, որը օրական հարյուրավոր-
քարեր է տալիս շինարարությանը: Մի կողմից տձև քարը
դրվում է, մյուս կողմից կոկիկ, քառակուսի քարերը դուրս-
էն գալիս: Եվ երբ որմնադիրների բրիգադիր Ա. Խեցումյանը
այսքան համարձակ ու խիզախ քայլեր է անում շինարարու-
թյան մեջ, այդ նրանից է, որ խեճաքարից, շաղախից, քա-
րից սկսած մինչև շինանյութերի հայթհայթումը՝ հարկերին՝
առատարվում է մեքենայացված կարգով: Խեցումյանի շարող-
էնտուղիաստները տրված ժամանակն ու հարուստ տեխնիկա-
կան հարավորություններն օգտագործում են լրիվ: Ահա
հսկայական կոանը երկրորդ հարկն է բարձրացնում շաղախի-
դույլը «կտցին» առած: Աշխատանքն այստեղ կազմակերպ-
ված է: Խեցումյանի շարողներն անմիջապես դատարկում են-
շաղախը պատի մոտ, փայտյա ժամանակավոր հենակներին՝
դրված տաշտերի մեջ: Ահա և էլեկտրականությամբ գործող
տրանսպորտյորը, փոխադրող կոանը...

— Խեցումյանի որմնադիրների բրիգադան մեր պարձանքն-
է, — հոգարտությամբ ասում է ճարտարապետ Վաղգեն Մնա-
ցականյանը, որը շինարարության հիմնադրման օրվանից
աշխատում է այստեղ:

Խեցումյանի որմնադիրները միայն այս տարի 3666 խո-
րանարդ մետր պատ են շաբեկ, իսկ հնգամյակի ընթացքում
պետք է շարեն 18.300 խորանարդ մետր:

Խեցումյանի բրիգադան հազարական է: Նրանց պլան-
ների կատարողականը հասնում է ամիսը 1000 տոկոսի,
բայց Խեցումյանի բրիգադան եղակի չէ Ալումինշինումը-
ները: Խեցումյանի բրիգադան հիմա բարձրացնում է սնդիկա-
յին վերափոխիչ կայանի վերնահարկի վերջին շարթերը:

նույն շենքի երկրորդ հարկում աշխատում են հազարական մուգեն թեջանյանը և Անդրանիկ Մարտիրոսյանը, որոնք կատարում են այս ամբողջ ցեխի սվաղման աշխատանքը:

Վարպետ Ռուբենը շինարարության առաջավորներից է. նա հոգով ճնշվում է, երբ լսում է իրենից առաջ անցնողներ կամ:

— Դուք գիտեք, որ Պելագեա Շկրինտեան այսօր, այս ժամին արգեն իր պլանը գերակատարել է, — կիսակատակ ասում եմ վարպետիր:

Ռուբենը ծիծաղում է թափ, ոև բեղերի տակ, ապա նայում է ընկերոջը՝ Անդրանիկին, տատանվելով, շինի թե իսկապես Պելագեան այսօր անցել է իրենից: Ապա նա դառնում է դեպի ճարտարապետ Վազգեն Մնացականյանը.

— Դե ասեք էս ձեռքերը կտրեմ էլլի:

Ես ծիծաղում եմ. նա հանդարտվում է:

Անդրանիկ Մարտիրոսյանն առաջ աշխատել է Քանաքեռդէսում:

— Հայրենական պատերազմի օրերին նա շինարար շէր, — մեղմ ասում է իմ զրուցակիցը, — նա ծառայում էր պատրազմի աստծուն՝ հրետանուն: Անդրանիկի հրետանին միշտ ավերել ու ոչնչացրել է թշնամու կոմունիկացիաները, կինդանի ուժը և հաղթանակով մտել է անարգված թշնամու հողը:

Հաղթանակից հետո նա հպարտությամբ վերադառնում է շինարար աշխատանքի՝ հագեցնելու աշխատանքի իր բուռն ծարավը: Նա այստեղ գտնում է իրեն համապատասխան ընկեր՝ Ռուբեն թեջանյանին, այդ հնագույն վարպետին, մաքուր հոգու տեր պարտիականին, աշխատասեր մարդուն, որի հետ մարտելը մեծ հաճույք է պատճառում երիտասարդ վարպետին:

Մենք, մնաս բարե ասելով, հեռանում ենք անվանի ստախանովականներից: Դուքս գալով այդ ցեխի կիսավարտ շենքից՝ մեր առջև Քանաքեռդէսից ոչ շատ հեռու հառնում է կարմիր տուֆաբարից կառուցված նոր շենքը: Դա տրանս-

թորմատորների վերանորոգման և էլեկտրասարքամուրման օժանդակ ցեխի նորակառույցն է: Շենքի կառուցումը հիմնականում ավարտված էր. այժմ եռանդուն կերպով շարունակվում են ցեխի ներսի աշխատանքները:

Շենքի վերին հարկերում փայտյա պատվանդանի վրա հիմա աշխատում են Պելագեան և նրա անբաժան ընկերութիւն Աննա Գալկինան:

Կենդանի եռանդ են այդ երկու երիտասարդ կանայք: Պելագեան միջահատակ, մարմնեղ, աշխույժ կին է, Աննան նրանից քիչ բարձր, բնավորությամբ քիչ ծանր: Ժպիտը Պելագեայի դեմքից չի հեռանում, այն ժամանակ, երբ Աննան լուս է ու մտախոհ, չնայած երկուսն էլ կատարում են նույն՝ սվաղի աշխատանքը:

Պելագեան ու Աննան ծնվել են ոռւսական տիպիկ գյուղերից մեկում, Պատմայում, որն ընկած է Կույրիշեկի մարզի ծառազարդ ու գեղատեսիլ Կարսոնի ուայոնում: Դպրոցական ընկերութիւնները մանկութ վառ օրերից սիրում են իրար, բաժանում անհոգ երջանիկ օրերի քաղցրությունն ու տիրությունը:

Կարուտով են հիշում նրանք իրենց գյուղն ու անշարժաղերը, խնջուկները, ոռուսական անծիր տափաստանները, չնայած շատ ժամ ժամանակ չի անցել:

Պելագեան ու Աննան, երբ դառնում են շափառաս, որոշում են առեսնել աշխարհը» և ահա, մի գեղեցիկ օր, նրանք բռնում են Մոսկվայի ճանապարհը: Դնացքը կարում է հազարավոր կիլոմետրեր, անցնում են գյուղերի, քաղաքների, նորակառույցների, էլեկտրակայանների մոտով: Հրճվալից ուրախությունն է հորդում նրանց ջահել սրտերում, ո՞րքան անծիր, ո՞րքան հարուստ և գեղեցիկ է եղել մեր աշխարհը և ամենուրեք մեր մարդիկ կառուցում են ու կառուցում...

Ի՞նչ շեն ու գեղեցիկ կդառնան մեր գյուղերն ու քա-

զաքները մի երկու տասնամյակ հետո: Շատ գիշերներ չեն քնում երիտասարդ աղջիկները, շպոկվելով վագոնի պատուհանից, նայում են սրանշելի Հայրենիքի գեղատեսիլ վայրերը, ուր ամենուրեք ստեղծարար կուռ ձեռքն է: Հոգնում են նրանց կապույտ աշքերը և նրանք մի քանի ժամ ուզում են հանգստանալ, բայց նրանց ականջներին կրկին հնչում է երկաթ-բետոնի, մեքենաների կառուցման թույլ զըրնդոցը, կառուցման սրանշելի երդը... Վեր է թոշում Աննան, նայում է պատուհանից... ծովածավալ տափանտանի մեջ էլեկտրալույսերի հազարավոր կրակների ներքո տարածված է հսկայական մի շինարարություն: Աստղերը կարծես երկնքից իջել են այստեղ:

— Ի՞նչ է կառուցվում այստեղ,—հարցնում է Աննան կոնդուկտորին.

— Գիգանտ,—կարճ պատասխանելով շտապ հեռանում է վերջինս երկի խուսափելով հարցասեր աղջկանից:

Գնացքը թոշում է: Որքա՞ն կառուցումներ, որքա՞ն աշխատանք... իսկ գնացքը հրեղեն սլաքի նման կտրելով տարածությունն ու ժամանակը՝ սլանում է առաջ ու առաջ: Աննան, հիշում է Ստալինի խոսքերը, որ մենք պետք է 5—10 տարում անցնենք հարյուր տարվա տարածություն: Կամ կանցնենք, կամ, այլապես, նրանք՝ կապիտալիստները մեզ կճգմեն... Մի՞թե մեր գնացքը նման չէ մեր շինարար սոցիալիստական Հայրենիքին, որ ուզում է պատմության հավերժահոս ժամանակը մի քանի անգամ կրճատել: Մի՞թե այս մեր գնացքը նման չէ մեր արագատեմազ երկրին: Իսկ մե՞նք,—ինքնիրեն հարց տալուց հետո կարմրում է Աննան: Մենք ի՞նչ կարող ենք անել Մոսկվայում, ինչո՞վ կարող ենք օգնել մեր սիրելի Հայրենիքին՝ այդ երկար ճանապարհն արագ անցնելու գործում: Ի՞նչով, ախր ի՞նչով: Այս գիտական պաշտառով օգտակար լինել մենք շենք կարող: Սովորե՞լ.—Երկար տարիներ են պետք: Ի՞նչ անել ուրեմն, ահա հարց, որ սկսում է տանջել Աննային: Իսկ Պելագեան քնածէ: Աննան զարթեցնում է նրան:

- Ի՞նչ պատահեց քեզ, գժվեցի՞ր:
- Զէ, Պելագեա, վեր կաց, ամբողջ կյանքդ քնով կանցկացնես, հետո կփոշմանես, ուշ կլինի:
- Դե ասա՛, ի՞նչ է եղել:
- Պելագեա, եկ Մոսկվայում երկուսս էլ աշխատենք:
- Ի՞նչարկե պետք է աշխատենք, —ծիծաղում է Պելագեան ընկերուհու տարօրինակ գյուտի վրա, շուռ գալով մյուս կողքին:
- Լուրջ եմ ասում, պետք է աշխատենք... Պետք է կառուցենք ինքներս մեր ձեռքով, այս սեփական ձեռքերով, հասկանո՞ւմ ես, մենք ի՞նչով ենք պակաս տղամարդկանցից, պետք է կառուցենք լուսավոր շենքեր, գործարաններ, գիգանտներ:
- Ես, սիրելիս, դեռ երեկ իմ մեջ որոշել եմ այդ, բայց չէի համարձակվում քեզ ասել: Մտածում էի, թե դու երեւ ուզում ես գրասենյակում՝ կամ, ասենք, դիրեկտոր աշխատել...
- Թող կատակներդ, Պելագեա:
- Որ այդպիս է, մոտ եկ ասեմ:
- Աննան մոտենում է Պելագեային. վերջինս նրան պինդ համբուրում է:
- Իմ սիրտը երբեք ինձ չի խարել, ես գիտեմ, որ մենք անբաժան ընկերուհիներ ենք:
- Այդ հաստատ որոշմամբ ընկերուհիներն իջնում են Մոսկվայի կայարաններից մեկում: Ուր զնալ: Հսկա քաղաքը շփոթեցրել էր աղջիկներին: Նրանք ծանրոցները պահման կամերային հանձնելով դուրս են գալիս քաղաք:
- Անցնում են օրեր: Ահա երկու ընկերուհիները, ինչպես շիմա, կողք-կողքի աշխատում են Մոսկվայի շենքերից մեկի վրա: Եվ քանի շենքերն ու հարկերը բարձրանում են, Աննան ու Պելագեան սրտով ու հոգով բարձրացնում են իրենց սեփական կյանքի հոյաշենը և բարձունքում զգում, թե որքան հաճելի է շնչել ու ապրել մեր վահմ օրերի քաղցրությունը...
- Աննան ու Պելագեան վերջին հարկի բաց լուսամու-

տից նայում էին բազմաղաղակ, շքնաղագեղ Մոսկվայի ճերմակ թաղերին ու մեծ հպարտությամբ ավարտում շենքը: Ու մի օր Աննան լսեց ուսդիոյի երաժշտական հաղորդմանը՝ հաջորդող նախազգուշացման շեշտը:

— Միկրոֆոնի մոտ է ընկեր Մոլոտովը...

Պատերազմ...

Կարծես վերջացավ կյանքի երաժշտությունը. սկսվեց դաժան պայքարի շրջանը: Ասես աշխարհը միանգամից փոխվեց: Փողոցի շարժումը միանգամից արագացավ, մարդիկ դարձան խիստ ու ավելի գործնական...

Պելագեան ու Աննան չնկատեցին, թե ինչպես հասան տուն, ինչպես անցավ կիրակի՝ տոնական օրը: Նրանց սրբաթին պատել էր մի անասելի հուզում: Նրանք տանը չկարողացան մնալ, ակամայից քայլելով նրանց տարան ջինվորական կոմիսարիատ:

— Մեզ ուղարկեցեք ուազմաճակատ...

Զինկոմը նայելով աղջիկների փաստաթղթերին՝ հաստատ ու որոշ ասաց.

— Դուք կգնաք և ավելացիոն գործարանը, այնտեղ ձեր կարիքն ավելի շատ է:

Աննան ու Պելագեան հիմա հպարտությամբ են խոսում իրենց աշխատանքի մասին հիշյալ ավիացիոն գործարանի շինարարության վրա, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին...

Պատերազմը վերջացավ: Սկսվել է կյանքի երաժշտությունը: Պետք է վերականգնել ու հզորացնել մեր մեծ Սովետական Հայրենիքը: Մեզ առաջարկեցին մեկնել և աշխատել եղբայրական Հայաստանում: Ի՞նչ էր մնում մեզ անել եթե ոչ շնորհակալություն հայտնել այդ առաջարկության համար,—ասացին նրանք:

Դեռ մանկուց անմահ Պուշկինի, Լերմոնտովի ստեղծագործություններից մեզ ծանոթ էր Կովկասը, այս լեռնային հպարտ աշխարհը: Եվ ահա, մենք նրանց նկարագրած այդիների աշխարհում բարձրացնում ենք. Ալումինշինի կուռ կորպուսների վսեմ հասակները...



Երգում են մուրճերը հասու, զրնգու, գգվում է հաստ
երկաթը, պողպատը, Ֆոմինիխինի ձեռքի ու կրակի ուժով
միանում, կապվում են ամուր, երկաթյա կապերը:

Թիկնեղ ու հաստամարմին խառաս Ավետիս Թումիկյա-
նը իր դազգահի վրա պատրաստում է շինարարության ան-
հրաժեշտ մասերը: Նրա դազգահի անիվները հոլովում,
դառնում են՝ շինարարությանը տալով երկաթյա ու պող-
պատյա հաղարավոր մասեր: Նա միշտ կրկնակի, եռակի
շափով գերակատարում է արտադրական նորմաները:

Ահա նա՝ Հարություն Խախամյանը, նրա կուրծքը զար-
դարված է շքանշաններով ու մեղալներով: Լենինի, մարտա-
կան Կարմիր Դրոշի, Կարմիր Աստղ շքանշանների կողքին
շողում են յոթ մարտական մեղալները: Նա հաղթանակով
վերադարձավ Բեռլինից իր ընկերների ու վարպետների մոտ:
Գործարանի շինարարության մեջ ստախանովյան մեթոդների
արմատացման բրիգադիր, գյուղարար Մ. Բիշախչյանը
հպարտանում է Հարությունով: Նրանք միասին են 1932 թ.
ներգաղթել Հունաստանից Սովետական Հայաստան և Հայրե-
նիքը բարձր է գնահատում նրանց եռանդուն աշխատանքը,
ըրովհետև նրանք շեն խնայում իրենց ուժն ու եռանդը սիրա-
սուն երկրի հղորացման ու ծաղկման համար:

Եռում է քրտնաշան աշխատանքը Ալումինշինի շինա-
րարության լայնածավալ ցեխներում: Երգում է հաղթական
մուրճը՝ քարի, մետաղի ու ցեմենտի վրա: Դա բազուկների
ձայնն է, մեր կամքի աննկուն խոսքը—կառուցման երգը, որ
հնչում է վառ արշալույսից մինչև մայրամուտ...



Հովհաննես Բայասլյանի ավտոմեքենան շինանյութերով
բեռնված հոնդալով մոտենում է Էլեկտրաշինարարության
տեխնիկ: Հարություն Խախամյանը հրճվանքի ու հպարտու-

թյան ժաղիտը դեմքին նայում է Հովհաննեսին, ինչպես իր կրտսեր եղբորը.

— Ինչպես կզգաս քեզի...

— Երջանիկ, — հպարտությամբ ու բերկրանքով բարձր պատասխանում է Հովհաննեսը՝ շուռ տալով մեքենայի դեկը:

Հարությունը մոտենալով Հովհաննեսին նայում է նրա երջանիկ դեմքին:

— Ո՞նց է մեր գործարանը:

— Խո՞սք կա: Մենք հասել ենք մեր մուրագին, մեր հայրենի հողը կծաղկցնենք:

Իսկ կոանը բարձրանում է, ցեմենտն ու կիրը շաղախվում են հսկա հոլովվող կաթսայի մեջ ու բարձրանում վերևի հարկերը:

Զնդում է պողպատը, հոնդում մեքենաները, — դա մաքառման աննման երգն է, որ ծնվում, բազմապատկվում ու բարձրաշառաշ անցնում է ցեխից-ցեխս, սրտից-սիրտ և տարածվում հեռու-հեռու այգիների ու կանաչների վրա:

Մաքառման երգը՝ ոգին կառուցման...

Ալումինշին, հուլիս 1946 թ.

ԼԵՆԻՆԸԿԱՆԻ ԴԵՊՈՅՈՒՄ

Ամեն անգամ մարդատար գնացքները ժամանելու պահին արտակարգ եռ ու զեռ է սկսվում կենինականի կայարանում։ Այդ հաճելի տրամադրությունը պատում է ոչ միայն երթևեկողներին, որոնք ժամանելով Թբիլիսից կամ Երևանից՝ իշնում են կայարան «երկու րոպեով» և հանդիպում ընկերների, բարեկամների — այդ բարձր տրամադրությամբ խորապես համակվում են իրենք՝ երկաթուղայինները։

Երթևեկողները հաճախ ժամանակ շեն գտնում նկատելու այն գործարար աւպրումներն ու հուզումները, որ ունենում են այդ րոպեներին երկաթուղայիններ՝ սկսած սլաքավարից մինչև դեպոյի պետը։

Պատասխանատվության զգացումն է ղեկավարում երկաթուղայինին, եթե նա ընդունում և ճանապարհում է դուացքը։

Բարդ օրգանիզմ է երկաթուղին, և ամեն մի աշխատող այստեղ կատարում է իր վճռող դերը։ Ոչ մի արտադրական պրոցես չի պահանջում այնպիսի ճշգրիտ համաձայնեցվածություն և փոխադարձ կապ, որքան երկաթուղին։ Անգամ սլաքավարը, կայարանի արտաքուստ ամենահասարակ և փոքր թվացող պաշտոն կատարողը, պատասխանատու դեր է կատարում երկաթուղային տրանսպորտում։ Բավական է, որ նա գնացքն ընդունի զբաղված դժի վրա, և ամեն ինչ կիսափանվի։

Ահա թե ինչու Լենինականի հանգույցի ամեն մի երկաթուղային՝ տագնապ ու խանդավառություն է ապրում ամեն մի գնացք ընդունելիս և ճանապարհելիս։ Ավելին, թվում է, թե կայարանի հերթապահ պետը գնացքը ճանապարհելուց, հերթապահությունը հանձնելուց հետո կարող է հանգիստ սրտով տուն գնալ, կամ մեքենավարը՝ հերթական ույսից շոգեքարշը գեպո կանգնեցնելուց հետո իր միսիան ավարտած պետք է համարի։ Ո՛չ, այդպես չէ։ Երկաթուղայինը ավելի շատ կապված է արտադրության հետ, քան իր տանը Եվ ամեն անգամ տանը նա խոսում ու ապրում է արանսպորտի աշխատանքով։

Կայարանում ևս հանդիպեցի հոչակավոր երկաթուղայիններ՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Անդրանիկ Խաչարյանին և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի գեպուտատ Հակոբ Չոփիկյանին, որոնց դեմքերին շոգում եր օրինական հպարտության ժամանակի նրանք հպարտ էին, որ այժմ Լենինականի շոգեքարշային գեպոն Անդրկովկասյան գեպըների առաջավոր շարքումն է։ Նրանք միաժամանակ հոգս ունեին։ Այդ հոգսը բխում էր այն մեծ ու ազնիվ պատասխանատվությունից, որ գնացքները ժամանակին հասնեն նշանակված վայրը, որ անխափան լինի երկաթուղային արանսպորտի աշխատանքը։

Երկաթուղու բախտը վճռողը դեպոն է, առողջ շոգեքարշը։ Ահա թե ինչու Խաչարյանն ու Չոփիկյանը, Լենինականի շոգեքարշային դեպոյի վետերանները, ցանկություն հայտնեցին, որ անպայման լինենք դեպոյում։

Մարդատար գնացքը ճանապարհելուց հետո նրանք պետք է ուղեկցեին երիտասարդ, դեռևս անփորձ մեքենավարներին, որոնք կարենոր նշանակություն ունեցող բեռներ էին փրկարդում։

Այժօրվա դեպոն առարերգում է թեկուղ անցյալ տարվա գեպոյից։ Այստեղ շոգեքարշայինների հրաշալի կոլեկտիվն անմիջապես յուրացնելու է իր հմուտ առաջավոր ընկերոջ փորձն ու մեթոդը։

Եթե երիտասարդ է մեքենավարը, դեռ լավ չի հանկանում շոգեքարշի լեզուն, նրան օգնում են, սովորեցնում, որ նա նույնպես առաջավոր լինի: Սովորեցնում են ոչ միայն Անդրանիկ Խաչատրյանը, Սիմոն Սիմոնյանը, Սուրեն Գրիգորյանը, այլևս դեպոյի բոլոր փորձառու մեքենավարները:

Լենինականի շոգեքարշային դեպոյում այսօր նորմաների գերակատարումն արդեն սովորական է ամեն մի շոգեքարշայինի համար: Կրկնակի շքանշանակիր, հոշակավոր մեքենավար Գարեգին Աբաջյանը, որը հիմք դրեց ռեկորդների, առաջին անգամ միշճախարակային վազքը հասցրեց 100.000 կիլոմետրի: Իսկ դա այսօր չի զարմացնում ոչ ոքի: Լենինականի շոգեքարշային դեպոյում չկա ոչ մի մեքենավար, որ այդ պլանը շգերակատարի: Դեպոյի ամեն մի շոգեքարշ ճախարակումից ճախարակում տրված վազքի նորման դերակատարել է 13 հազար կիլոմետրով:

Գարեգին Աբաջյանի աշխատանքի հարուստ փորձը յուրացրել են դեպոյի բոլոր շոգեքարշայինները, նրա մեթոդը բոլորի մեթոդն է:

Մտայինյան հետպատերազմյան հնգամյակը շտեսնվածիանդավառություն և աշխատանքային եռանդ է առաջացրել շոգեքարշայինների մեջ, և Գարեգին Աբաջյանը դարձյալ ուղղում է առաջավոր դիրքերում հրամանատար լինել: Նա այս անգամ պարտավորվել է կատարել 110 հազար կիլոմետր վազք և միայն դրանից հետո շոգեքարշը հանձնել հիմնական նորոգման:

Դեպոյի պետ՝ ինժեներ—դիրեկտոր, քարշի փոխպնդապետ Սարգիս Եղիազարյանն ու ևս հեռվից դիտում ենք ընկ-Գարեգին Աբաջյանին: Նա այսօր հերթապահ է: Կայարանը շոգեքարշ է պահանջում, շոգեքարշը կանգնած է պատրաստ: Մեքենավար Մկրտիչ Ալեքսանյանն ուղում է դուրս գալ դեպոյից: Աբաջյանը թույլ չի տալիս, կարգադրելով փակել շրջանակը, մինչև որ վերջնականապես շստուգի ռեյսի դուրս եկող շոգեքարշը: Հեռվից անծանոթ մարդուն կարող

է թվալ, թե նա կովում է: Ոչ, այդ նրա տարերքն է: Միջին հասակի, պիրկ մարմնով, թուխ դեմքով և ածուխի պես ու աշխերով, պատանու աշխուժությամբ լիցուն այդ եռանդուն մարդը անմիջապես մեծ հմտությամբ ստուգելով շոգեքարշի բոլոր մասերը՝ բացագանցում է.

— Դե, շուտ արա, շուտ, չուշանաս, համոզվեցի, որ մերենադ կաշխատի անխափան...

Շոգեքարշայինների եռանդուն ջանքերի շնորհիվ վերջին տարիններին դեպոյի անառողջ շոգեքարշերի քանակը զգալիորեն բացակայում է: Դեպոյի ամենամեծ հաջողությունն այն է, որ միջնացքային կրկնակի նորոգման կարիք չի գտում ոչ մեր շոգեքարշ, դա բացատրվում է շոգեքարշայինների հոգատար վերաբերմունքով և նորոգող բրիգադաների բարձրորակ աշխատանքով:

Այսօր շտեսնված խանդավառություն են ապրում Լենինականի դեպոյի շոգեքարշայինները: Անխոնջ էնտուզիաստների այդ հրաշալի կողեկտիվն ազնիվ ու նվիրված աշխատանքով ամբողջապես առողջացրել է շոգեքարշային պարկը, ամբողջ կարողությամբ և եռանդով շարունակում է պայքարը հետագա հաջողությունների համար:

Դեպոյից իսպառ վերացվել է խոտանը: Անգամ ձմռան սառնամանիքներին չի արձանագրված խոտանի ոչ մի դեպք:

Դեպոյի պետ ընկ. Եղիազարյանը և նրա տեղակալ ընկ. Գ. Մադոյանը ինձ ցուց են տալիս միջին նորոգման ցեխում կանգնած շոգեքարշը: Այդ շոգեքարշի վրա են աշխատում մերենավարներ Տիկուշ Զարիսչյանը, Գուրգեն Մանուկյանը, Մկրտիչ Թորոսյանը՝ դեպոյի համեստ ու եռանդուն մերենավարները:

Նրանք, մտնելով ստալինյան շորորորդ հնգամյակի անվան շոգեքարշային շարասյան մեջ, որի հրամանատարն է Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, ՍՍՌ Միության Գերագույն Սովետի դեպուտատ Անդրանիկ Խաչատրյանը, վերըրել են նոր պարտավորություններ: Որոշել են կազմել շորորդ հնգամյակի անվան շարասյուն:

Լենինականի դեպոյում արտակարգ խանդավառություն է տիրում, մեքենավարները մեկը մյուսի հետևից պարտավորություններ են ստանձնում՝ մտնելով ստալինյան շորորդ հնգամյակի անվան շոգեքարշային շարայան մեջ։ Ահա Հին, փորձված մեքենավարներ Արազյանը, Զարիչյանը, Մանուկյանը, Թորոսյանը, ահա երիտասարդ խանդավառ մեքենավարներ վ. Գրիգորյանը և նրա ընկեր Կ. Սաֆարյանը, Լենինի շքանշանակիր Պ. Պետրոսյանը, նորոգման գործի լավագույն կազմակերպիչն ու վարպետը։

Մեքենավարներ, օգնականներ, փականագործներ անսպառ հուանդով ու պատրաստակամությամբ լի են։ Նրանց նպատակն է պատվով ու փառքով դուրս գալ այդ մեծ սոցիալիստական մրցությունից, հանուն ստալինյան նոր շինարար պլանների կենսագործման...

Օրը երեկոյանում է, պողպատե զույգ ոելսերը ժպտում են մեքենավարներին։ Այդ ոելսերը մայր հողի երակներն են, պնացքները կրկրի արյունը՝ կենսատու։

Ժպտում է մեքենավարը՝ ճանապարհը բաց է։ Փայլում է, սեմաֆորի կանաչ լույսը, իսկ դեպոյի վրա վառվում են ապիտակ լապտերները, որոնք մշուշվում են բարձրացող գույրշու և ծխի մեջ։

Երկաթի ու պողպատի զնգոցի, մեքենաների ժխորի միջից լսվում է Լենինականի գեղոյի մաքառման ոգեշունչ մրգը...

ԵՐԿՐԻ ԸՆԴԵՐՔՈՒՄ

I

Գեղեցիկ ու դյութիչ է գարումը Զանգեզուրի լեռնաշխարհում: Արևի ոսկե շողերը ցոլցլում են երկնահուապ, Հպարտ լեռների ու ապառաժների ձյունապատ գագաթներին:

Արծիվն է ճախրում ու իր հզոր կանչը խառնում հավքերի աշխուցք սրտահույզ գեղգեղանքին:

Մայիսի վերջերին միայն հսկայակերպ ժայռերն ու լեռները պատում են գույնզգույն ծաղիկներով, որոնց տեսակների թիվը չունի հայոց աշխարհի ոչ մի լեռնահովիտ: Կակաչը փթթում է վարդի շափ ու նրանից էլ վառ՝ քարակոփ ժայռերին, հոգեպարար մասրենու կողքին:

Հպարտ է լեռնաշխարհի մարդը, ինչպես իր հայրենի լեռները, և խիզախ՝ այնտեղ ճախրող արծիվների նման: Նա կրում է իր մեջ բնության սքանչելիքի բոլոր վայելքները, սիրում է կյանքը—կաթոգին, մանկան հրճվանքով, և կյանքի այդ սերը նրան մղում է հերոսության ու փառքի:

Որքա՞ն հերոսներ տվեց Զանգեզուրը: Որքա՞ն հրամանատարներ, սպաներ Հայրենական Մեծ պատերազմում իրենց անունն օծեցին անթառամ փառքով:

Որպիսի՝ Զանասիրությամբ ու համառությամբ են նրա զավակներն այսօր մաքառում աշխատանքի, գիտության ու արվեստի տարբեր բնագավառներում...

Հենց այստեղ, իմ սիրելի ընթերցող, ուր Խուստուակ հպարտ լեռն է հսկում իր կրծքից բխող սրբնթաց, աշխույժ վաշագանին, որը գրկախառնվելով Օխչի լայնահուն գետին հոսում է իր ծաղկուն ափերով, բարձրանում է մի փառավոր սլիտակ քաղաք:

Հերոսական պատմություն ունի Ղափանը, նրա բնակիչները սերնդից-սերունդ անբիծ են պահել այդ անունը և նոր դրվագներով հարստացրել սուրբ աշխատանքի հարյուրամյաց ուկեդիրքը:

Մի ամբողջ դար պղինձը այս գեղատեսիլ լեռների ընդերքում ժպտացել է մարդուն, բայց ոչ մի տասնամյակ այնքան նվիրական չի եղել Ղափանի լեռնագործի համար, ինչպես վերջին երեք տասնամյակները:

Տորատող Արտեմ Անտոնյանի տանը երեք լապտեր են պահված, մեկը՝ մրոտ, մազութի լապտերը, երկրորդը՝ կարբիդի այսօրինակ գործող լապտերը, իսկ երրորդը՝ կատարելագործված նոր մաքուր լապտերը, որ նա նվեր է ստացել Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ՝ Հորատող Հմայակ Ներսիսյանից:

Պղինձը Ղափանի պատմությունն է, մարդիկ՝ նրա հերոսները...



Քաջարանը քաջերի հայրենիքն է: Այդ գյուղն իր անունը նվաճել է իրեն ոչնչացնել երազող թշնամիների դեմ մղած անհավասար բազմաթիվ մարտերում:

Այդ գյուղը միշտ երկրին ներկայացրել է իր լավագույն, խիզախ, ընդունակ ու աշխատասեր զավակներին...

Բազմաթիվ նշանավոր մարդկանց, կենինի շքանշանակիրների շարքում քաջարանցին միշտ մի առանձին հպարտությամբ է նշում Հմայակ Ներսիսյանի անունը...

— Այն տումը Հմայակենցն է, — ասում են համագյուղացիները, — էնտեղ հիմի նրա մայրն է ապրում, կոլխոզի լավագույն կթվորը...

Ի՞նչը բերեց Հմայակին պղնձի հանքերը:

— Այդ հարցի պատասխանը միայն ինքը կարող է տալ, — ասում են նրա կոլխոզնիկ ընկերները, որոնք գարնացան ավարտել են ժամկետին, որակով, ագրոկանոնների լրիվ կիրառմամբ և շուտով կսկսեն բերքի մշակումը...

— Մեր գործերի մասին խնդրում ենք պատմես մեր Հմայակին, — ասում են քաջարանցիները...

— Սիրով, — ասացի ես ու մտքումս որոշեցի նրանց էլ, իմ հարգելի ընթերցողին էլ ծանոթացնել Հմայակ Ներսիսյանի ու նրա փառահեղ գործերի հետ:

II

Գիշերվա խորհրդավորության մեջ Կավարտ լեռը պատկերանում է ինչպես մի աժդահա փափախավոր ծերունի, որի ակնապիշ հայացքը հառած է հեռուներին:

Տասնեւհինգ տարեկան մի թիկնեղ պատանի էր Հմայակը, երբ մորից թաքռուն եկավ քաղաք ու դիմեց հանքերի վարչության պետին.

— Ուզում եմ հանքափոր դառնալ:

Նրան փոքրության պատճառով մերժեցին: Բայց նա շվհատվեց, համառությունն ու հաստատակամությունը մանկուց նրա մեջ խոր արմատներ էին դցել:

— Ես պետք է հանքափոր դառնամ:

Հաստատ վճիռը նրան տարավ պարտբյուրոյի քարտուղարի մոտ, ուր նստած էր նաև իրենց համագյուղացի հըռշակավոր հորատող, կենինի շքանշանակիր Մինաս Պապյանը:

— Ես վճռել եմ հանքափոր դառնալ:

Առուշանյանն ուշադիր նայում է պատանուն և հարցում:

— Իսկ ինչո՞ւ անպայման հանքափոր:

— Արովչետեւ պապս էլ, հայրս էլ այս հանքերում են աշխատել: Ես կոմերիտական եմ և բջիջին արդին հայտնել եմ իմ վճիռը:

Քարտուղարն ու հորատողը ոտից մինչև գլուխ նայում են հաղթալանջ պատանուն, ապա իրար երես:

— Թող գա ինձ մոտ աշակերտ, ես կովորեցնեմ, — առում է Մինաս Պապյանը...

Այդ օրվանից սկսվում է Հմայակի խսկական գիտակցական կյանքը:



Մելսերը, որի մեջ գորշագույն ցեխն ու զուրը ճղփում են մարդու ոտքերի տակ, թափանցելով հսկայական լեռան կուրծքը՝ ճյուղավորվում են:

Հանքուղիներ, նորից հանքախորշեր, խսկ եթե այս «հարկում» հորիզոնի վրա չգտար քո հերոսին, բարի հղիրկանգնել լիֆտին, որը ճեղքելով անթափանց, խոնավ խավարի մոալլ թագավորությունը, քեզ կիշեցնի վաթսուներորդ, հարյուրերորդ, հարյուր վաթսուներորդ հորիզոնը...

Մի ամբողջ բարդ, հերոսական աշխատանք է եռում այստեղ՝ ստորերկրյա աշխարհում...

— Ուշադրություն դարձեք լեռների գույնին, դասավորությանը, հյուսվածքներին, — նախազգուշացնում է Հանքի ճարտարապետ Անդրանիկ Ղարիբյանը, որն արվեստագետի ոգևորությամբ պատմում է ստորերկրյա ուժներից առաջացած տարրեր հյուսվածքների, յուրաքանչյուր հանքի բացման պատմությունն ու նրա հետ կապված մանրամասնությունները:

Մեր առջեւ փռված է ամենաստորին Հարկի «միջանցքը»: Այստեղ էլ ճնշող խավարը, թաց, հեղձուկ օդը և կարծր լինային ցածր առաստաղը ճնշում են անծանոթին, մանավանդերը նեղ, հաղիվ մեկ մետր լայնությամբ կիսաթեք առտիճաններով իջնում ենք դեպի մագաղինները:

Աստիճանը վերջանում է, հասնում ենք հանքի երակ-ներից մեկին; որի մասին այնքան խանդավառված, ուր վերը սուսում եղած ժամանակ խոսում էր ճարտարապետ Ղարիբյանը:

— Ահա երակը, — Արքիմեդի ցնծությամբ ձեռքը պարզա-լով ասաց ճարտարապետը: Պղնձաքարի ոսկեփայլ երակը պեծին էր տալիս կարբիդի լուսից:

Նայում եմ վեր, երակին, որ ձգվում է մեկ-երկու մետր լայնությամբ և ասես իր պայծառ հայացքով ժամուռմ է կյանքին...

— Ահա երակը:

Մենք այդ երակով արդեն քանդված պղնձաքարերի վրա-յով գրեթե փորսող առաջանում ենք դեպի ահեղ դպրոցը:

Սպիտակ փոշին մառախուղի նման հագեցրել է երկա-րածիդ երակի տակ գտնվող փոքր տարածության օղը...

— Ահա և մեր հերոսը, — ասում է հանքերի պարաբրյու-րոյի քարտուղար Աշոտ Նուրիջանյանը, մի համակրեցի ու համեստ անձնավորություն, որը պատանի հաստից աշխա-տել է հանքերում և քաջածանոթ է ստորերկրյա աշխարհու հերոսների գործերին:

Դեռ հեռվից պերֆերատորների ահոնի դղիրդն ու որու-տը ցնցում էր հանքախորհը: Խտացած օդի ուժով գործող կատարելագործված մուրճը Հմայակ Ներսիսյանի հղոր բա-զուկների մեջ հրաշքներ է գործում... պողպատածայր հոլով-վող ծակիչը (բուրը) Հմայակի ուժից մի անզուսա թափով միաբնվում է լեռան կուրծքը, և լեռը ասես ցավից մահամեր-ձի ցնցումներ է անում:

Ամեն հերթափոխին նա յուրաքանչյուր մետրի մըա 70 աստիճան թերությամբ այդպիսի տասը անցք է պատրաս-տում, որոնք հետո պայթուցիկ նյութի շնորհիվ ամեն ան-գամ տալիս են մեկ և կես տոննա պղնձաքար:

Հմայակը ճարտարապետի հմտությամբ նայում է վեր, լեռան հյուսվածքին: Նա գիտե, թե որտեղ՝ ինչ դասավորւ-թյան անցքեր պիտի պատրաստել:

Պայմեցնողները Հմայակի պատրաստած «Փրոնտում» ներքին գոհունակությամբ են գործածում իրենց բավական երկար փամփուշտները:

— Ինչպես են Արտեմի գործերը, — դադար տալով իր մուրճին՝ նուրիշանյանին է դիմում Հմայակը:

— Հույս կա, որ այս ամսին տարվա պլանը կփակի:

Հմայակը ոչինչ չի պառակ: Նրա ու աշխերը փայլում են ներքին կրակից: Նա նախ ճակատից սրբում է քրտինքը, ապա փոխում է ծակիչը և ինձնից ներողություն խնդրելով խորանում է հանքախորշ՝ իր օգնականներին ոտուգելու և ցուցմունքներ տալու:

— Հմայակը կենինյան հանքերի պարծանքն է, նա իր ողջ կյանքը նվիրել է այս պղնձին, — շշնջում է նուրիշանյանը (երկի շցանկանալով, որ Հմայակը լսի իր հասցեին արված գովեստները):

— Նա անցյալ տարի շորս ամսում կատարեց ամբողջ տարվա պլանը, իսկ այս տարի, կարծում եմ, մինչև Հաղթանակի օրը կվերջացնի իր հաշիվները:

Նա հանում է գրավանից ծոցատերը և բռնելով կարբիդի լույսի դիմաց՝ շարունակում է:

— Հունվարի պլանը կատարել, է՝ 379 տոկոսով, իսկ մարտինը՝ 400 տոկոսով, ապրիլին՝ գրեթե նույնքան: Փետրվարին նա մի քիչ հիվանդացավ, այլապես արդեն իր ուսուրաց տված կլիներ:

— Ժամը քանիսը՝ կլինի, — վերադառնալով, հարցրեց Հմայակը:

— Ժամը 6-ն է: Արդեն լույսը բացվելու վրա է, — ասաց Աշոտը:

Հմայակը վերցնելով մուրճը և հարմարացնելով իր աշխատանքի տեղը՝ ասաց.

— Ես կարծում եմ մենք դրսում կհանդիպենք, երևանից որ եկել եք, էղակես շուտ շեք վերադառնա:

Ցահսություն ասելով մենք բաժանվեցինք:

Մեր առաջ փայլվում էր ոսկեղեն պղինձը:

Ճարտարապետը իր տարերքի մեջ էր նա այս անգամ արդեն ընդհանուրից անցել էր կոնկրետին՝ պատմելով ամեն՝ մի հանքախորշի հետ կապված աշխատանքային «սյուրպիդներն» ու գաղտնիքները:

Ապա Աշոտ նուրիջանյանը պատմեց Լենինի շքանշանակիր անվանի հորատող Հմայակ Ներսիսյանի կյանքի մասին: Նա աշխատանքում մոռանում է ամեն ինչ: Շատ է պատահել, որ մոռացել է ժամանակը և վեց ժամվա փոխարեն աշխատել է 10—12 ժամ... Մանավանդ պատերազմի տարիներին: Նման դեպքերում միշտ կինը զանգ է տալիս. «Էնկեր նուրիջանյան, ի՞նչ է պատահել Հմայակի հետ, տուն չի եկել, ճաշն ու ջուրը սառեցին...»: Եվ հոգատար կինը կամ իր տղայի՝ Ռազմիկի միջոցով կամ ինքը՝ առած ճաշը իշել է հանքահոր:

Հմայակի աշխատանքին օժանդակում է կինը:

— Նա համեստ բոլցեիկի, ընկերոց լավագույն օրինակ է: Քսան տարի նա աշխատում է հանքերում, նրա անվան գիմաց շկա պլանների թերակատարում: Իզուր շէ, որ ոչ միայն մենք՝ պղնձագործներս, այլ և ամբողջ շրջանը նրան այդքան սիրում է: — Նրա մասին կարելի է մի ամբողջ գիրք գրել, — վերջացնում է Աշոտը, — բայց որ իր մասին հետը խոսես, ժամերով մի խոսք չի ասի...



Երբ դուրս եկանք հանքից, գիշերն արդեն հալվել էր. երկնակամարը պարզում էր իր դեմքը, բայց արելը դեռ շկար:

Իմ աշքի առաջ էր հերոսը: Ահա նրա սկ, կրակու աշքերը: Նա մի հայացքով շափում է լեռան երակի դիրքը և ճարտարապետի հմտությամբ որոշում, թե ինչ դասավորությամբ պետք է անցքեր բանալ:

— Պատերազմը վերջացել է, խաղաղությունը մենք պետք է նվաճենք մեր երկրի հզորացմամբ, նյութական բարիքների առատացմամբ, Ստալինյան փառավոր հնգամյակի կատարմամբ, — ասել է Հմայակը լեռնագործների վերջերս

կայացած ժողովում,—իսկ առանց մետաղ, առանց պղինձ
կա՞րող է հնգամյակը կատարվել: Երբեք:

Հիմա, երբ գրասեղանիս առաջ նստած գրում եմ այս
տողերը, թվում է, թե ահա Նուրիջանյանը դեռ իր լապտերով
լուսավորում է մեր ճանապարհը, պղինձը պեծին է տալիս,
ու խստությամբ,—իմաստով լցնում մարդու հոգին:

Ես նոր եմ հասկանում, թե ինչու հանքերում մաքա-
ռողները բնավորությամբ մեծ մասամբ լինում են խիստ ու
հաստատակամ և հաճախ էլ մոայլության հասնող լուրջ:

Դժվար, նվիրաբեր աշխատանքը պատվի ու փառքի ար-
ժանի այդ մարդկանց մեջ կոփում է հերոսական բնավորու-
թյուն:



Գեղեցիկ ու դյութիշ է գարունը Զանգեզուրի լեռնաշ-
խարհում: Արևն իր ոսկեցողերով ցոլցլում է երկնաշուպ,
հպարտ լեռների ու ապառաժների դեռ ձյունածածկ գագաթ-
ներին...

Արծիվն է ճախրում լեռներին: Նա նստում է Կալարտի
լեռնակույտին, մասրենու թփի մոտ ու նայում ներքև,
կենինյան հանքերին, բանվորական գեղեցիկ ավաններին:

Ահա գալիս են նրանք՝ հանքափորի հագուստներով,
գլխներին սաղարթներ ու ձեռքերին կարբիդի լապտերներ...
Գալիս են աշխատանքի վետերանները՝ Հմայակ Ներսիսյանը,
Արամ Խաչատրյանը, Արտեմ Անտոնյանը, Լևոն Ստեփանյա-
նը... տասնյակներ, հարյուրներ, հազարներ...

Որպեսզի Օխչի գետին զուգընթաց լեռան ընդերքից
անընդմեջ վագոնետներով դեպի ֆլուտացիոն հարստացուցիչ
ֆաբրիկան հոսի ոսկեփայլ պղինձը,—Զանգեզուրի պար-
ծանքը...

ԱՐՁԱԼՈՒՅՍԻՑ ԸՆԴՀ

Կայարանից երկու գլխավոր փողոցներ են ձգվում դեպի քաղաք: Գորկու անվան մագիստրալը տանում է Ստալինի հրապարակը, Հյուրանոցը, կամ ինչպես ասում են՝ քաղաքի սիրտը: Խսկ մյուսը՝ նրան գրեթե զուգահեռ, տանում է Տէքստիլ կոմբինատ: Այդ նոր փողոցի երկու կողմերում կանոնավոր, մեջընդմեջ կեցած երկհարկ և եռահարկ վարդադույն շենքերում ապրում են կոմբինատի բանվորներն ու բանվորուհիները:

Հին քաղաքի այդ կողմերում տարածված էին վարունգիու կանաչեղենի բուրումնավետ բոստանները, որոնք հասնում էին կոմբինատի հյուսիսային դարբասին: Գյումրեցու հայացքի առջև երբեմն գնագրվում են այդ բոստանները ոսկեզօծ արևածաղիկներով....

Իրականությունը, սակայն, համառ ու անժխտելի է, ինչպես փաստը, որի դեմ իմ նոր ծանոթ տարիքավոր գյուղացի Յակոն անգամ խոնարհվում է, շնայած աշքերին չի ուզում հավատալ:

Նա եկել է Ռուսաստանի հեռավոր մի քաղաքից և իր ասելով 18 թվից շր եղել իր հայրենի քաղաքում:

Թեռ գիշերը շեր հալվել, երբ գնացքը ճեղքելով հյուսիսային լեռնաշղթան՝ կատաղի ցուլի նման՝ սլացավ Շիրակի լայնածիր դաշտը:

Յակով Սամսոնիչը (այսպես էր կոչվում իմ ուղեկից,

ծանոթ Յակոն, որ երկար տարիներ ապրել էր արտասահմանում, ապա Ռուսաստանում): Դեռ Կիրովական կայարանում արթնանալով՝ անհանդիստ վիճակում էր: Նա հաճախ վեր էր կենում, նայում լուսամուտից, ապա նստում, առանձին փութեատությամբ վառում ծխախոտը, նայում ժամացույցին, ապա կրկին դուրս, ուր ծանրացել էր անթափանց խավարը ու ճնշում էր նրա սիրութ: Երբ, ինչպես վերը ասացինք, գնացքը պատռելով լեռների շղթան, Շիրակի դաշտավայրը դուրս եկավ, Յակով Սամսոնիշը մոտենալով կրկին լուսամուտին՝ մի հրճվալից ճիշ արձակեց.

— Վա՞յ, հոգուդ բիլա զուրբան...

Մինչ այդ խոսակիցս ինձ հետ զրուցում էր ոռւսերեն, և ինձ թվում էր, որ նա կարող էր մոռացած լինել բարբար, բայց մեծ եղավ իմ զարմանքը, երբ նա կանգնեց իմ առօն որպես տիպիկ գյումրեցի իր բոլոր մանրամասնություններով:

Այդ սրտագին բացականշության մեջ թաքնված էր նրա հոգու ամբողջ հրավառ սերն ու կարութը, տարիների իղձը՝ տեսնելու իր ծննդավայրը, հայրենի Շիրակը:

Նա ինձ հետ խոսում էր ինչպես տարիների, հին բարեկամի, և նա այդ շվաքըրեց, ասելով, «Արտանց ուրախ եմ, որ քեզի տեսա, ընծի կթվա, թե իրար հետ շատ աղ ու հաց ենք կերե»:

Նա ուրախանում էր մանկան հրճվանքով ու բարձրաձայն արտահայտում իր զարմանքն ու հիացմունքը, իր տարակուսանքն ու հրճվանքը,

— Էսիդ Լենինականն է. Մի՛ կրնա էղնի...

Արշալույսից առաջ մեր գնացքը կանգ առափ Լենինական կայարանում:

Իշնելով գնացքից՝ մենք շարժվեցինք նոր փողոցով դեպի հնամյա բոստանների թաղամասը: Օդը սառն էր, ծառերը մերկ, մայթերին սփռված դեղին տերևներին նստել էր եղյամբ, իմ ծանոթը ոգմորությունից մոռանալով ցուրտը՝ շեր էլ կոճկում իր վերարկում:

Նա պատմում էր ինձ ներշնչված բանաստեղծի նման, —
այս այստեղ Ավետիքենց բոստանն էր, այ էնտեղ իմ ընկեր
Մկոյի հոր, իսկ էստեղ յաղբուր կար...

Նրա մեջ պայքարում էին երկու զգացմունք, երիտա-
սարդ անհոգ օրերի քաղցր հիշողությունն ու տեսած իրա-
կանության հիացմունքը: Ես պատմում էի նրան, թե ինչ
ձեռնարկություններ են, դրանք և ում համար, և դեռ ինչ
պետք է կառուցվի նոր հնդամյակում, իսկ նա գոհ ու նո-
րանիկ նայում էր ինձ գրեթե արտավաթոր աշքերով:

— Զէ, էսիդ իմ գիտցած քաղքին նման չէ, — վերջապես
շշնչաց նա արցունքների միջից: Իսկ թե ինչ արցունքներ էին
դրանք, ուրախության թե ցավի՝ ես դժվարանում էի հաս-
տատ ասել: Իմ հերոսը ինձ կլանել էր...

Օրը հետզհետե բացվում էր և, ինչպես գեղեցկուհին է:
շղարշի տակից երեան հանում իր մարմնի զմայլիշ գեղեց-
կությունը, քաղաքն սկսում էր ծավալվել իր հոյակապ նո-
րակառուցյներով հալվող մշուշի միջից:

Ճիշտ էր Յակով Սամսոնիշը. դա իրենց հին Գյումրին
չէր, չկար «Սիմոնի Փուռը», չկային արևածաղիկների բոս-
տանները, չկար լոթի Վարդանը, որ միանգամից յոթը Փայ-
տոն զբաղեցրած զուռնայով մինչև լույս քեֆ աներ:

Կար նոր մի քաղաք, նոր մարդկանցով, նոր տրա-
մադրություններով ու ճգնումներով:



Վարդագույն շենքի երկրորդ հարկից՝ իշնելով՝ երիտա-
սարդ կինը քայլերն ուղղեց դեպի տեքստիլ կոմբինատ Գեռ
փողոցներում շէր սկսվել օրվա եռուզեռը: Յակով Սամսոնիշը
մի հայացք ձգելով կնոջ վրա՝ կարծես ուզում էր ասել. «Էս-
քան կանուխ էս ո՞ւր կերթառ...

Բացվում են դռները, դուրս էին գալիս տղամարդիկ և
կանայք ու աղջիկներ՝ կարմիր գլխաշղորերով:

Ահա ճկուն կազմվածքով մարդը դուրս գալով դիմացի

շենքից՝ կարծես սպասում է այն երիտասարդ կնոջը: Նրանք
ողջունում են իրար և շարունակում ճանապարհը: Մենք մո-
տենում ենք:

— Աւո՞ն, — ձայն եմ տալիս ևս ուրախացած, որ հան-
գիպում եմ իմ հին ծանոթին և համարավորություն ունեմ հա-
գեցնելու իմ նոր բարեկամի հետաքրքրությունը: — Խնդիրն,
ծանոթացեք, համաքաղաքացիներ եք:

Նրանք ծանոթանում են: Լևոնը մի քանի խոսք փոխա-
նակելուց հետո ներկայացնում է երիտասարդ կնոջը:

Ցակով Սամսոնիշին հետաքրքրում է ամեն ոք և ամեն
ինչ:

Լևոն Կարապետյանը գործվածքային գործարանի և ամ-
բողջ կոմբինատի առաջավոր մարդկանցից է, նրա ղեկավա-
րած կոմպլեկտի աշխատանքը օրինակ է հանդիսանում: Իսկ
ինչու է այդպես, որովհետև Լևոնը և նրա հետ աշխատող
ջուրհակները աշխատանքի են դալիս եռանդով լցված ժամա-
նակից 20—30 րոպե շուտ, նախապատրաստում են դազ-
գահները, որպեսզի շակի հետ միասին մեքենաները գործին
անընդմեջ, — բացատրում եմ Ցակով Սամսոնիշին:

Հասնում ենք կոմբինատին: Ներկայացնում ենք մեր
փաստաթղթերը, խնդրում ենք դիրեկցիայից թույլտվություն՝
տեսնելու գործարանի աշխատանքը: Մեզ ընդառաջում են և
մենք հարյուրավոր կատարելագործված մեքենաների միջով
բայլում ենք դեպի գործվածքային գործարանը, ուր աշխա-
տում են մեզ արդեն ծանոթ Լևոն Կարապետյանն ու Աստղիկ
Փետրոսյանը:

Լևոն Կարապետյանը 15 տարի է աշխատում է այդ գոր-
ծարանում, գրեթե պատանի հասակից: Նա ծնողներ լուսներ:
Նրան պիոներական կազմակերպությունն է պահել, սովո-
րեցրել, իսկ երբ Լևոնը ցուցարերեց իր սերն ու ձգտումը
դեպի արհեստը, կազմակերպությունը նրան տեղափոքց
այդ գործարանում իբրև շուշակի աշակերտ, մեքենաներ
յուղող: Ծնողներից վաղուց զրկված լինելով՝ նա իր նոր
ընտանիքն է համարում գործարանը, որտեղ նրան շրջապա-
տում են հոգատարությամբ ու սիրով: Նա մտնում է պար-

տիայի մեջ և որպես ստախանովական արդարացնում պարագանի ավանդարդային գերը: Նա սովորում, կատարելագործում է և սովորածը տալիս մյուսներին:

Կյանքի գրեթե նույն ճանապարհն են անցել գործարանի հարյուրավոր բանվորներ ու բանվորուհիներ:

— Էնիդ Աստղիկը շէ, — հարցնում է ծանոթս:

Մենք կեռնի հետ մոտենում ենք Աստղիկ Պետրոսյանին, որը 23 դադար է զեկավարում: Միջահասակ, թուխ դեմքով և հաճելի դիմագծերով կին է Աստղիկ Պետրոսյանը: Նա զբաղված է իր նոր աշակերտուհու հետ, որը թեյրութից նոր է, ներգաղթել: Օվսաննա Թաշշյանը ուշադիր լսում է իր վարպետին:

Լեռնը ծանոթացնում է մեզ իր կոմպլեկտի աշխատանքի հետ: Նախատեսված յոթ ջուկհակի փոխարեն 88 մեքենաների վրա աշխատում են շորո հոգի, որոնք ոչ միայն կատարում են սլանը, այլև գերակատարում: Սանոթս զարմանում է.

— Ինչը՞ս, չի կրնա պատահի...

Լեռնը ցույց է տալիս կատարողական բարձր թվերը:

Յակով Սամսոնիշը լայնատարած ցեխերին, կատարելագործված գղող, մանող, գործող բարդ մեքենաներին նայում էր անզուսպ հիացմունքով: Մեքենաներին նստել էր բամբակը ինչպես աշնան եղյամն է նստում թիերին, բայց Յակով Սամսոնիշը մոռացել էր արդեն իր հնամյա բոստանները և ասես գործարանում հրավառող արշալույսը նրա որտում է: Էր բռնկվել:

— Լավ քաղաք է: մեր քաղաքը, շէ, — ասաց Յակով Սամսոնիշ Փեշտմալջյանը, երբ մենք Կիրովի փողոցով իշխում էինք դեպի հյուրանոց:

Քաղաքի վրա դեռ վառվում էր վաղորդյան ոսկեղող արկը:

Յոյեմբեր 1946 թ., Ենթական

Թ Ի Ւ Ե Կ Տ Ա Ր Ը

Մի դժգույն ու ամպամած աշնանային երեկո ապրանքատար վագոններից կազմված մարդատար գնացքը փնչալով կանգ առավ երբեմնի Ալեքսանդրոպոլ կայարանում։

Անսարք ծածկված ու բաց վագոններից լսվում էին մարդկային հուսակտուր լացի ու աղմուկի ձայներ, որ ասեակիսակործան, ավեր ու որբ երկրի կենդանի հառաշանքը լիներ...»

Վշտոտ, տառապյալ, հոգսի ծանր բեռան տակ կրված մայրերը՝ սև կապած իրենց վիշտն էին լալիս անտում ու մոլոր թախտն ու մահը հալածում էր սև ճակատագրին հնաթակա այդ թշվառ մարդկանց։ Թողած տուն, տեղ ու այգի, թողած բարիք ու հարստություն, ժառանգություն ու հիշատակ՝ նրանք փախչում էին դաժան ոսոխից, փրկելով ամենանվիրականը՝ կյանքը։

Ոչ մի ուժ չէր դիմանա ոսոխի վայրենի մահվան մուցքով լցված կրբերին։ Արևատենչ թշնամին հայի վերջն էր երազում և միակ ելքը փախուստն էր, ձգտումը դեպի այն շողը՝ լուսավոր արշալույսի, որ ծագում էր Ռուսիայից...»

Կոտրված վագոնից թոքախտավոր երիտասարդ ուսուցիչը դժգույն հայացքով նայում էր գյուղաքաղաքին։ Նրա աշքերում ցոլում էին արցոնմքի կաթիլները...»

Նա կորցրել էր մորը և երկու քույրերին, ու քանի դեռ չէր անցել Ախուրյանի կամուրջը, նոր վիշտը, դառնությունը

այնքան խորը չէր զգացել: Կամուրջն անցնելով՝ ասես նա իր սիրտն ու հոգին, իր կյանքը այնտեղ թողեց հավերժ ու անվերադարձ: Նա կոտրված սրտով նայում էր այն ափի գնածիծաղ երկնքին, որն անընդհատ մաղում էր ու կարծես նույնպես սգով լալիս այս աշխարհի ու մարդկանց թշվառության վրա...

— Ի՞նչ դառը ճակատագիր, — հազիվ շշնչաց նա թույլ շրթունքների միջից և դողդոցուն ձեռքը տարավ դեպի ճակատ:

Ո՞ւր էր գնում նա մենակ, կամ այս ժողովո՞ւրդը... Հայ օջախների այս բեկորները... Ի՞նչ է նրանց սպասում առանց հայրենիքը....

Ի՞նչ է մարդը առանց հայրենիք, դա նույնն է, ինչ արծիվն առանց թևերի՝ թույլ ու անզոր...

Արժե՛ արդյոք ապրել անպատիվ, նվաստ, պնհայրենիք...

Նա հանկարծ իր մարմնում զգաց սառը դող, որ հասնում էր մինչև ոսկորները: Նա ծանր տնքաց և այդ տնքոցը՝ միայն մարմնի ցավից չէր, այլ գալիս էր կոտրված ու վըշտամորմոք սրտից: Նա հուսահատ պառկեց վագոնի ոտը տախտակների վրա, մի անկյունում:

Հրանտի մայրը, մոռացած իր վիշտը՝ տեսնելով անօգնական երիտասարդի վիճակը, իր ունեցած միակ վերմակը՝ դցեց հիվանդի տակը և տղայի վերարկույով ծածկեց նրան: Երիտասարդը տաքության մեջ զառանցում էր. «Տարան, սպանեցի՞ն, հրդեհ... անօրեննե՛ր, սրիկանե՛ր...»

Գնացքը մի շաբաթ է տեղից չէր շարժվում: Մեկ ասում էին շոգեքարշ շկա, մեկ՝ թե փայտ շկա շոգեքարշի համար, իսկ մարդիկ հիվանդ, կիսաքաղց սպասում էին օրառաջ փախչեն մահվան ճիրաններից...

Բայց մահը միշտ խեղճին ու թշվառին է գտնում. մեռան տասնյակներ, մեռավ և ուսուցիչը: Հրանտի մայրը, Հրանտը և փոքրիկ Վրույրը թաղեցին երիտասարդ ուսուցչին. և երբ վերադառնում էին, մայրը իր մարմնում զգաց թուլություն ու գիւղացակ...

Ուղեղորներից շատերն արդեն հույսները կտրելով, հջել էին վագոններից քաղաքում ապաստարան գտել, թվում էր այլև հալածող ու ձեռքը չկար, չնայած գիշերները հաճախ լսվում էին կրակոցներ:

Հրանտը հիվանդ մորը տեղավորեց քաղաքային հիվանդանոցում:

Քաղաքի վրա շրջում էր քաղցի ու ուրվականը: Մարդիկ մեռնում էին հարյուրներով, և հաճախ էր պատահում, որ հուղարկավորության գնացած մարդը գերեզմանոցից շեր միերադառնում:

Այդ բոլորը տեսնում էր փոքրիկ Վրույրը՝ հացի մի փշրանք մուրալով սրա նրա դռանը: Եվ նրա մանկական սիրառը ճմլվում էր, ու նա հաճախ մտածում էր, թե ինչո՞ւ է աշխարհը այսքան դաժան...

Փոքրիկ Վրույրը, երբ մի կտոր հաց էր ճարում, անմիջապես վազում էր հիվանդանոց, որտեղ պառկած էր իր հիվանդ մայրը:

Եվ այդպիսի օրերից մեկն էր, երբ Հրանտը, Վրույրի ավագ եղբայրը, մուտքի մոտ հանդիպելով լացակումած ասաց.

— Մայրիկի վիճակը ծանր է... Մայրիկը մածուն է ուզում, ուրիշ ոչինչ...

Երկու եղբայրներ ամբողջ օրը շրջեցին դռնից դռու, բայց ապարդյուն: Հարուստներն ունեին այդ բարիքը, բայց առանց փող ո՞վ կտար նրանց մածուն, իսկ աղքատները դուրկ էին հնարավորությունից, որ օգնեին ընկճված, խեղճ եղբայրներին:

Նրանք հաջորդ օրն էլ դեգերեցին և երբ ձեռնունայն վետադարձան հիվանդանոց, մայրը արդեն քնած էր հավերժական քնով...

Կրինակի էր եղբայրների վիշտը. մոր կորուստի ցավին միացել էր այն ծանր վշտի զգացմունքը, որ վերջին պահին չկարողացան կատարել հարազատ մոր վերջին ցանկությունը...

Հրանտը վագոնային պարկում տեղավորվեց աշխատանքի իբրև բանվոր, իր խնամքի տակ առնելով Վրույրին, այդ երազող, աշխույժ պատանուն...

Վտիտ, շեկ մազերով այդ պատանու կապույտ աշքի-րում սև օրերի ծանր վիշտն էր դրել իր կնիքը: Նրա պատա-նի հոգին չէր հաշտվում այն մտքի հետ, որ իրենք անտունու որ ընկած են ուրիշ աշխարհ, կարոտ մի կտոր հացի...

Նրա ուղեղը չէր հասկանում, թե ինչո՞ւ վերջերս քա-ղաքը արտակարդ տագնապի մեջ է, դեպոյի բանվորները, իր եղբոր ընկերները շարքերով, կարմիր դրոշակներով, դեռ աշխատանքը շվերջացած անցնում էին փողոցներով, նրանցից մեկը բարձրանում էր աթոռի վրա և հուզված ճառ ար-չուանում:

Դեռ մինչև այսօր էլ Վրույրը շի մոռացել, թե ինչպես այդ շարքերը մի օր երկաթուղային դպրոցի մոտ եկան, լո-գունգներով և կարմիր դրոշակներով, նրանց խանգարում էին, բայց ովքե՞ր էին նրանք և ինչո՞ւ էին խանգարում — շգիտեր:

Բանվորական կուռ շարքերը հաղթաքայլ մոտեցան դրա-րոցի շենքին: Նրանք պատրաստվում էին ինչ-որ բանի: Շար-քերը կանգ առան: Շարքերի միջից բարձրացավ մի մարդ, ճառով դիմեց իր ընկերներին:

Բոլոր կողմերից շահում էին՝ «ընկեր Ավոն է»: Բան-վորները ճանաչեցին իրենց ծպտյալ դեկավարին:

Վրույրը այդ օրը առաջին անգամ լսեց «Էենին», «Սո-վիտական կարգեր», «Երջանկություն» բառերը...

Շարքերը հոսեցին բաղաքի կենտրոնը: Նրանց միացան առարանի բանվորները: Քաղաքի մի բարձունքում, առևտրական դպրոցի մոտ եղավ ցույց, այստեղ կային ուրիշ շարքեր: Նրանք հայհոյում էին բանվորներին, նրանցից ել-նող ճառողները հակաճառում էին բանվորներին...

Վրույրը երկար մտածեց այդ մասին, բայց ոչինչ շնաս-կացավ:

Անցան օրեր, Կայարանում կանգնած զբահագնացքի մասին էին խոսում իր եղբոր ընկերները, դեպոյի բանվորները:

Եղան կրակոցներ, մարդիկ զոհվեցին ու արյուն եղավ փողոցներում և առավոտը կարմրավառ փայլեց քաղաքի վրա:

Կրկին բանվորներն անցան կուռ շարքերով՝ ձեռքերին կենթին, Ստալինի, Շահումյանի նկարները, և կարմիր դրաշակներ: Շարքերն ուրախ էին: Հաղթական թնդում էր ուսան, երբ հնչում էին լողումզները:

Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր:

Քաղաքում բացվեցին դպրոցներ՝ շքավորների, բանվորների երեխաների համար, կյանքը մտավ նոր հունի մեջ:

Վրույրն ընդունվեց դպրոց, իսկ հետո դարձավ պիոներ, կապեց կարմիր փողկապ:

Վրույրի նման որբեր դպրոցում քիչ չէին, որոնց դպրոցը ոչ միայն սովորեցնում, այլև նյութապես օգնում էր, պահում ու խնամում:

Վրույրը աճում էր, նրա դեմքին արդեն ժպիտ էր ծաղկում և նա քիչ-քիչ մոռանում էր անցյալի վիշտն ու հարազատների կորուստը:

Նա սովորում, էր համառ, բաց շեր թողնում ուսուցչի ասած ոչ մի նախադասություն:

Ինչպես հողը իր պապակ շրթերով ծծում է անձրնի կենարար ջուրը, այնպես էլ պատանին ուշադրություն դարձած սովորում էր:

Արդին հինգերորդ դասարանում նրան կլանեց մի այլ աշխարհ—մեքենայի, գործարանի աշխարհը: Իսկ այդ պատահեց այսպես:

Քաղաքի բազմաթիվ նորակառույցներից զատ, հյուսիսային մի լայնածավալ դաշտում՝ շինարարական աշխատանք էր ծավալվում: Տարիներ առաջ ալդտեղ հանդ էր ծաղկագրդ, և հովասուն ծառերի ստորոտում փուլած էին բուտանները: Մինչև հիմա էլ մնացել է բարդիների ծառուղին և այն ալազանը, ուր երեխաները լողանում էին, իսկ իրիկ-

Նաղեմին մտնում բոստանները՝ արևածաղիկ ու վարունգ գողանալու:

Վրույրն էլ քիչ արևածաղիկ չի գողացել, որովհետեւ շար բոստանին միշտ չէ, որ բավարարում էր պատանու խնդրանքը:

Ահա այդ հանդի, բոստանների հսկայածավալ տարածության վրա փռվել էին քաղաքի առաջին խոշոր գործարանի կորպուսները:

Գարնանային մի պայծառ առավոտ պիոներական զվարթ կոլեկտիվը, որի մեջ էր և վրույրը, այցելեց գործարան, բաղմաթիվ մեքենաների քաղցրավար ժխորը, գործող մեքենաների ախորժալուր համերգը, մանավանդ գործարանի կոնվեյերային հստակ աշխատանքը,—երբ մի կողմից բամբակը մտնելով, մյուս ծայրում՝ մեքենայի հյուսքերի տակից անվերջ հոսում էր սպիտակ գործվածքը,—հիացրին պատանուն: Նա տեսնում էր իր աշքերով, թե ինչպես է ստեղծվում կտորը, այո՛, այն կտորը, որ մարդիկ հագնում են:

Վրույրը հստատապես որոշեց աշխատել գործարանում:



Անցան տարիներ, որոնք նոր կյանք, նոր հույզեր ու նոր խնդություն բերին մարդկանց բաղմատանց սրտերին:

Հետամնաց գավառական գյուղաքաղաքը վերակառուցվեց, ծաղկեց ու փարթամացավ և նրա հետ էլ նրա զավակները:



Ամուսն արևը նոր էր թերվել դեպի Ախուրյանի արծաթազօծ հորիզոնը և իր ոսկե շողերը հավաքում էր լեռների կատարներից, երբ խփեց հերթափոխի զանգը:

Տեքստիլի հսկայածավալ գործարանի կորպուսներից դուրս էին գալիս տղամարդիկ, կանայք, աղջիկներ՝ շահել ու զվարթադեմ: Նրանք գոհ օրվա վաստակից՝ թողնում էին ցեխերը, և բամբակի փոշուց մաքրելով իրենց ձեռքերը, մար-

Ճինն ու հագուստը՝ հաղթաքայլ դիմում էին գեպի գործադարնի ելքը:

Անցել են տարիներ իմ պատանեկության օրերից, երբ նոր էին բարձրանում գործարանի պատերը, անցել է շուրջ քսան տարի, և ինձ կրկին վիճակվում է տեսնել գործարանը իր բոլոր սպասարկող ցեխներով:

Գործվածքային գործարանի առաջավոր բանվորների հետ ծանոթանալուց ու զրուցելուց հետո ուղեկցող ընկերոջ հետ անցնում ենք գործող մեքենաների կողքից:

Սպիտակ կտավի գետը հոսում է մեքենաների միջից համաշափ ու հեղաստհ...

Ես ուշիմ հետեւմ էի «գետերի» այդ գեղեցիկ հոսանքին, երբ ինձ ներկայացրին գործարանի դիրեկտորին:

Հասարակ արտաքինով, միջահասակ, զինվորականի հագուստով այդ մարդը պարզելով ինձ ձեռքը՝ ասաց.

— Շահբազյան:

Ես տվեցի իմ ազգանունը, բայց նրա աշխերը, գեմքի, մաղերի գույնը, հայացքը մնացել էր նույնը. դա իմ պիոներական, դպրոցական մանկութ, անմոռաց օրերի ընկերներ, «անապանտան Վրույրը»:

Ինչքա՞ն ենք կովել, սիրել ու հաշտվել: Ինչքա՞ն ենք խաղացել Ախուրյանի ափերին, լողացել ու երազել լավ օրվա մասին,—թէ երբ կուշտ կլինենք մենք ու կատարյալ մարդ...

Ես գրկում եմ իմ անգին ընկերոջը, գործվածքային գործարանի դիրեկտորին: Դիրեկտորին, երևակայեցեք...

Սովետական կարգերը նրան դարձրել են մասնագետ, ապա վստահել մեքենաներ, գործարան, մարդիկ...

— Պատմիր, Վրույր, այդ ի՞նչպես եղավ:

— Հիշո՞ւմ ես մեր պիոներական էքսկուրսիաները (անշուշտ ես հիշում էի բոլորը): Ես այն ժամանակ հաստատորոշեցի դառնալ մասնագետ: Ես սիրեցի մեքենան, գործարանը և գործարանն էլ ինձ մարդ դարձրեց:

Սկզբում աշխատեցի մանարանի գզող ցեխում, իբրև յուղող, դա հնարավորություն տվեց մոտիկից ծանոթանաւու մեքենաների կառուցվածքին, նրա մասերին:

Ապա սովորեցի ջուլհակություն, մի տարուց հետո աշխատում էի շորս պըատ մեքենայի վրա, ապա՝ ուժ մեքենայի:

1930 թվին արդեն ես աշխատում էի ենթավարպետ և ինքնուրույն զեկավարում էի կօմպլեկտի աշխատանքը: Իմ տրամադրության տակ կար 48 մեքենա:

— Տեսնո՞ւմ ես, — կիսակատակ դիմեց Վրույրը ինձ, հրաշքով շի կատարվել բոլորը...

— Այո՛, բայց խիզախ և համառ թոփշքներով:

— Այդ շրջանում, — շարունակեց իր պատմությունը ընկերու, — գործարանն ստացավ նոր կատարելագործված մեքենաներ «Նոր-տրոպ», որը կրճատում էր ամբողջ ձեռքի աշխատանքը: Այդ նոր մեքենաների մոնտաժի աշխատանքներն ավարտելուց հետո մեծ ձգտում առաջացավ իմ մեջ՝ սովորել այդ բարդ մեքենաների գաղտնիքները, տիրապետել նրանց տեխնիկային և կատարելագործվել, որպես տեքստիլագործ...

Աշխատանքից հետո սովորում էի գործարանին կից կազմակերպված տեխստի տեխնիկումում, երբ մի գեղեցիկ գործարանի դիրեկցիան ընդառաջ գնալով իմ ցանկություններին՝ ինձ ուղարկեց Մոսկվա՝ Արդյունաբերական ակադեմիա: Դա 1937 թվին էր: Սովորեցի: Խսկ երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը, կրկին վերագարծրին ինձ գործարան:

— Պարզ է, սիրելի ինժեներ-դիրեկտոր, — եղրափակում եմ ես:

Վրույրը ժպտում է, և նրա սրտագին ժպտի մեջ, նրա պայծառ հայացքում հս իմ մտքի աշքերով տեսնում եմ ոտարորիկ, վտիտ, գունատ շար տղային, որը կորցրել էր հարազատ ծնողներին առաջին իմպերիալիստական պահի հարազատ ծնողների մեջ, բայց Լենինի՝ Ստալինի հզոր ձեռքը, տերազմի բոցերի մեջ, բայց Լենինի՝ Ստալինի հզոր ձեռքը, որ Վրույրները կորչեն:

Մենք երկար ու անուշ զրուցում էինք մեր կյանքի ու ապագայի մասին, խսկ պատից մեզ, ասես կենդանի, հայրական հայացքով քաղցր ժպտում էր Ստալինը:

Ուշ գիշեր էր, երբ թողինք գործարանի պարիսպները Քաղաքի վրա վառվում էին պայծառ լույսերի փնջերը. ասես աստղեր էին երկնքից իջել քաղաքի վրա:

Մեր սրտում հորդում էր բերկրանքի ու խնդության երգը. Այդ երգը մեր վերածնված կյանքի երջանկության անման երգն էր...

ՄՐՅԱՉԱՆ ՊԱՐՏՔ

Ակաստոպոլից Դ. քաղաքը տանող գեղատեսիլ երկաթուղային ճանապարհի այն հատվածում, ուր ռելսերի ժապավենը թեքվելով խիտ ծառերի հետև անցնում է գեղնագույն մեծ կամուրջով, կա մի փոքրիկ փայտաշեն տնակ:

Այդ տնակում քառասուն տարի ապրում էր երկաթուղու պահակ Դմիտրի Պավլովիշ Սմիլյակովը իր կնոջ՝ Եկատերինա Պանովայի հետ:

Նրանց մինումար տղան՝ Վլադիմիրը վաղուց հասակ էր առել, դարձել ինքնուրույն մարդ ու ապրում էր իր գեղեցիկ կնոջ ու դստրիկի հետ Դ. քաղաքում:

Տղան՝ Վլադիմիր Դմիտրիկիչը, դեպոյի առաջավոր մեքնավարներից էր: Դեպոյի փականապործները նրան շատ էին սիրում հաստատ բնավորության համար, իսկ հասակավորները՝ նաև նրա համար, որ նա օրինավոր հայր էր ու արժանավոր հոր զավակ: Եվ իսկապես, Վլադիմիր Դմիտրիկիշը անշափ սիրում էր իր ծնողներին, թեև ինքն էլ արդեն վաղուց ծնող էր:

Ամեն անգամ, երբ նա գնացք էր տանում Սևաստոպոլ, կտոմուրջի մոտ դանդաղեցնում էր շոգեքարշի երթը ու իր ձեռքով զամբյուղն հանձնում էր հորը, որն այդ ժամանակ դրոշակը ձեռքին կանգնած էր լինում, ինչպես զինվորը պոստում:

Դմիտրի Պավլովիշը գնացքը ճանապարհելուց հետո

վերցնում էր զամբյուղը ու գանդաղ քայլերով մտնելով
Հնամյա իր տնակը՝ ասում էր.

— Եկատերինա Ալեքսանդրովնա, Վալյոդուշկան քեզ
նվեր է ուղարկել...

Ալեհերները բայց իին անում զամբյուղը և որպես կտ-
նոն՝ նախ հանում էին նամակը, կարդում, ապա վայելում
բաղցրավենիները. Դմիտրի Պավլովիչ՝ հատկապես հետա-
մուտ էր ծխախոտներին, իսկ տղան միշտ ուղարկում էր ըն-
տիր գլանակներ...

— Ա՛յ, Վալյոդյան ինչպե՞ս է իմ խաթրը պահում, — ակ-
նածանքով երկարացնում էր հայրը...

Բացի այդ, ամեն ամառ հարսն ու թոռնիկը գալիս էին
ծերունիների մոտ: Գեղեցիկ բնությունը, կանաչազարդ գե-
տափի, սրանչելի օգի շնորհիվ այդ վայրը ոչնչով չէր զիջում
ամառանոցներին, միայն մի բան վատ էր, ժողովուրդ շկար...

Վալյոդյան նույնպես հանգստի օրերը անց էր կացնում
այդտեղ ոչ միայն նրա համար, որ այդ վայրերը կապված
էին իր մանկության քաղցր օրերի հետ, այլև որպեսզի սի-
ռելի ծերունիները իրենց մենակ զգան, շնշտանան...

Այդպես հոսում էին Դմիտրի Պավլովիչի երջանիկ ծե-
րության օրերը, երբ հանկարծ պայմեց պատերազմը...



Թշնամին գրավել էր Ղրիմի զդալի մասը, բայց Սևա-
տոպոլ—Դ. քաղաքը երկաթուղային հատվածը դեռ գտնվում
էր սովորական զորքերի ձեռքում:

Եվ ամեն անգամ Դմիտրի Պավլովիչը, ինչպես քառա-
սուն տարի շարունակ, հագնում էր Հայթուղայինի իր հա-
մազգեստը, վերցնում դրոշակները, իսկ գիշերը՝ լապտեր,
պայթուցիկ ազդանշաններն ու ընդունում—ճանապարհ
դնում զինվորներով ու ուղմամթերքներով լի գնացքները...

Անձրեստ, անթափանց գիշերներից մեկն էր: Նա կանգ-
նած էր կամուրջից քիչ հեռու, իր պոստում, կանաչ լապտե-
րը ձեռքին ու սպասում էր գնացքի դալուն:

Բայց գնացքը շեկավ...

Դմիտրի Պավլովիչը ամբողջ գիշեր լսում էր թնդանունները...

Զեկավ գնացքը. արդեն մեկ ամիս է Վլադիմիրը շէր եկիլ այս ճանապարհով: Ի՞նչ պատահեց, —մտածում էր հայրը:

Դմիտրի Պավլովիչը ինչ-որ վատ բան զգաց:

Պատերազմի առաջին օրից արդեն նա մոալլ էր, բայց սիրտը երբեք այդքան տափնապով շէր խփել...

— Ո՞ւ, ո՞ւ, ո՞ւ, ո՞ւ, ո՞ւ, —լսեց Դմիտրի Պավլովիչը ու քիչ ճետո խավարի մեջ հրավանվեցին շոգեքարշի զույդ աշքերը:

Շոգեքարշը փնչաց, դանդաղեցրեց իր ընթացքը:

— Ողջո՞ւն, հայրի՞կ, —լսեց Դմիտրի Պավլովիչը մեքենավարի ձայնը ու տեսավ թե ինչպես շոգեքարշից մի փոքրիկ կապոց ընկավ նրա ոտքերի մոտ...

— Ողջո՞ւն, որդյա՞կ, —վրա բերեց ծերուկը, հայացքով ճանապարհելով գնացքը, մինչև որ վերջին վագոնի կարմիր լույսերը թաղվեցին խավարում...

Նա վերցրեց կապոցն ու դիմեց տուն:

Կապոցի մեջ դրված էր մի քառածալ նամակ. Վալույայից էր:

«Սիրելի՝ հայրիկ.

Սա վերջին սովորական գնացքն է, որ դու ընդունում և ճանապարհում ես: Այդ բախտը վիճակվեց ընկերոջս՝ Վասյային, որի միջոցով ուղարկում եմ նամակս: Քաղաքը արդեն պաշարված է գերմանացիների կողմից, ինձ հանձնարարված է գեպոն պայթեցնել... Պատրաստ եղիր ամեն մի գործի ու վիրճության:

Համբուրում եմ մամային, քո որդի Վլ.»:

Գերեզմանային սառնություն տիրեց շորս կողմը. ծեր պահակի սիրտը համակվեց անասելի ցավով:

— Սկսվե՞ց, — շշնչաց ծերուկը:



Անցան ծանր ու խորհուրդներով լի օրեր: Մեր պահակը ցերեկներն ստուգում էր գիծը, նայում երկնքին, անցնող սալանակներին, մտամոլոր կանգնում կամուրջի գլխին, մտածում, մտածում ու վերադառնում էր տուն՝ շդիտենալով իր անելիքը առաջիկայում:

Ու մի գիշեր շատ պայթյուններ լսեցին Դմիտրի Պավլովիչն ու Եկատերինա Ալեքսանդրովնան: Տիսրեցին ու երկար խոսեցին վալորյայի, հարսի ու թոռան մասին:

— Դոնե թոռնիկիս այստեղ բերեր,—ասաց Եկատերինա Ալեքսանդրովնան, խոր հոգոց հանելով...

Գիշերն անցավ անհանգիստ ու ահալից:

Առավոտյան վաղ, երբ պահակը դեռ տեղից չէր վեր կացել, աղմուկով մոտեցավ գնացքը կամուրջին ու կանգ տուավ:

Շոգեքարշից իշավ օրեր-լեյտենանտը, երկու զինվորի ժետ: Նրանք դիտեցին կամուրջը, ապա առանց հարցնելու մասն պահակի տունը:

— Ի՞նչ է, շգիտեհի՞ք մեր գալու մասին, այդպե՞ս են դիմավորում գերմանական սպային.— ճշաց սպան:

— Ի՞նչ է, վինի՞ թե դուք էլ չեք ուզում աշխատել մեզ Համար:

— Ազգականներ, զավակներ ունե՞ք բանակում,— իրար հետևից հարցեր էր տալիս սպան՝ առանց սպասելու պատասխանի:

Եկատերինա Ալեքսանդրովնան վախեցած՝ բացատրեց, որ ձերուկը քիչ տկար է, հիմա վեր կկենա ու պատրաստ է հստարել ձեր հրամանները:

Մերուկը ձայն շնանեց, նա լուռ էր քարի նման:

— Այս զինվորները կմնան այստեղ պահպանելու կամուրջն ու գիծը. իսկ դուք,— դառնալով Եկատերինա Ալեքսանդրովնային,— գերմանական մեծ կայսրության ծառաներն եք ու կվայելեք արանից հետո նրա հովանավորությունը, եթե ազնիվ ծառայեք...

— Ուրեմն այսօրվանից մեր գնացքները պետք է անցնեն այս տեղով. տես որ ամեն բան կարդին լինի, թե չէ դլուխտ կթոցնեմ. — ապա դառնալով մեքենավարին՝ կարգադրեց առաջ շարժվել:

Մերուկը լուռ էր Նա նայում էր մեքենավար Օրլովին: — Ինչո՞ւ է խուսափում իմ հայպցքից. Ալին? թե ծառայում է գերմանացիներին: Դավաճա՞ն, — անցավ նրա մտքով. — Չե՞ մի' կարող պատահել, նրա մասին իր Վալոդկան միշտ լավ էր խոսում, — մտածում էր ծեր պահակը...



Խոր գիշեր էր, երբ Հանսը ձայն տվեց պահակին.

— Գնա՞նք, գնացք է անցնելու:

Մերուկը լընդիմացավ, վերցրեց լապտերը ու Հանսի հետ դուրս դալով՝ կանգնեց կամուրջի կողքին:

Կամուրջի ներքեւում շվշացնում էր ժամապահը:

Գնացքը եկավ ու միշոցով կանգ առավ:

Մեքենավար Օրլովը ջղայնացած իջավ շոգեքարշից ու դառնալով դեպի զինվորին ու պահակը՝ նախատանքով գոռաց.

— Զե՞ք նկատում, որ կամուրջի այն կողմը գիծը վլանգված է. — ու առանց սպասելու պատասխանի պահակից վերցնելով լապտերը քայլերն ուղղեց այն կողմ...

Նրան հետեւցին պահակն ու գերմանացի զինվորը, որոնք խավարի մեջ խարիսափելով ոշինչ չեին նկատում:

— Այստեղ շպալները փոտած են, պետք է փոխել, — ասաց Օրլովը:

Երբ զինվորը վերցրեց լապտերը ու մոտենալով ոելսին սկսեց դիտել շպալները, Օրլովը ճարպկորեն մի բան դրեց պահակի գրպանը:

Դմիտրի Պավլովիչի միջով մի տաք հոսանք անցավ. կարծես ջահելության ժամանակների արյունը նորից հոսեց երակներում: Նա հասկացավ անսպասելի ռավարիայի» պատճառը. նամակն ասես այրում էր նրա գրպանը:

— Լավ, մենք կզեկուցենք պետին, — ասաց Քաշիստահան զինվորը մեքենավարին, որն արդեն գործի էր զցում շոգեքարշը:



Վաղուց Եկատերինա Ալեքսանդրովնան այդպիսի ճոխ սեղան չէր պատրաստել. զինին, օդին հոսում էին:

Աշխույժ ծերունին, ասում էր.

— Մենք պատվավոր ժողովուրդ ենք: Այս փոքրիկ խընչույթը կազմակերպել ենք ի պատիվ գերմանական զինվորների, ի պատիվ ձեր գալստյան, պարոն եֆրեյտոր: Հիմա մեր պահակների ընտանիքը մեծացել է: Առաջ միայն ես էի, այսօրվանից արդեն հինգ հոգի ենք ձեր գլխավորությամբ, պարոն եֆրեյտոր...

Եֆրեյտորն իրեն զգում էր յոթերորդ երկնքում. նրան պատվում, հյուրասիրում էին: Դմիտրի Պավլովիչը մորթել էր իր վերջին խոզն ու հավերը, մեջտեղ էր բերել ձմռան ողջ պաշարը ու խմիչքը...

Զինվորները աղմուկով ու ցնծությամբ խմում էին քաջ և ֆրեյտորի, բարի ծերուկի կենացը...

Երբ երեկոն իր թերը փոեց, գնացքին դիմավորեցին՝ միայն պահակն ու զինվորներից մեկը, որը խոստացել էր շհարբել ու մինչև վերջ մրցել «ծեր սուսի» հետ...

Եֆրեյտորը ներսի սենյակում վաղուց խոմփում էր, իսկ զինվորներ Հանսը, Մյուլերն ու Ֆրիցը սեղանի մոտի լայն թախտին թիկնած դեռ խմում էին:

Երբ գիշերը խորանում էր, ոտքի վրա էր մնացել միայն ձերուկը ու իր կյանքի անբաժան ընկերուհին...

Դմիտրի Պավլովիչը նայեց ժամացույցին, այդ նկատեց միայն Եկատերինա Ալեքսանդրովնան...

Կապոցներն զգուշությամբ դուրս բերելով սենյակից, Դմիտրի Պավլովիչը դարձավ կնոշը.

— Եկավ ժամանակը, անզինս. մենք պետք է բաժան-

վենք, դու այստեղ ալլև անելիք շունես, տեսնենք ինչպես
կլինի վերջը...

Մեքենավար Օրլովի մարդիկ վերցնելով իրերը Եկատե-
րինա Ալեքսանդրովնայի հետ անհետացան անտառի խավա-
րում:

— Ոշին՝ նա գյուղում իրեն վատ չի զգա,—մըմնջաց
պահակը—սրբելով իր արցունքները, լապտերը բռնեց
ժամացուցի վրա: Ժամը երեքն էր:

Դեռ գնացքի գալուն մի ժամ կար. նա հանեց նամակը,
որ այն գիշեր իր գրանը դրեց մեքենավար Օրլովը ու նո-
րից լապտերի լույսի տակ կարդաց.

«Միրելի հայր. գրում եմ բանտից ամսի 10-ին. գիշերը
ժամը 4-ին անցնելու է շատ կարեռ մի գնացք, որը պետք
է ուղարկել... դու գիտես որտեղ... ինձ բանտարկել են շաշ-
խատելու համար: Բայց ուրիշ մեքենավար չկա և այդ գնաց-
քը պետք է բերեմ ես:

Կատարիր քո պարտքը հայրենիքի հանդեպ, քո սրբազն
պարտքը. այդ քո որդին է ասում:

Մեր մարդիկ մայրիկին կփոխադրեն գյուղ, թող նա
ուշինչ շիմանա գործի մասին. քեզ կօդնեն իմ ընկերները.

Միշտ քո Վլ.»:

Մերունին քայլերն ուղղեց դեպի կամուրջը:

— Ե՞շ, — լսեց Դմիտրի Պավլովիչը:

— Ամեն ինչ պատրաստ է, — ասաց երիտասարդը:

— Յաշա, կոմսոմոլ, դու՝ ես:

— Մ՛ս, կիմանան:

— Ո՞վ կիմանա, բոլորը հարրած երանավետ քնի մեջ
են. — ասաց ծերուկը մի տեսակ հպարտությամբ:

— Ըերեմն մնում է մի բան, — ասաց մյուսը:

— Սա ո՞վ է, — զարմացած հարցրեց ծերունին, որին
նոր էր տեսնում:

— Զե՞ս ճանաշում կիդային:

— Պա՞հ, տղամարդու տեսք ես ընդունել, տնաշե՞ն, —
ասաց ծերունին անկեղծ կշտամբանքով, ապա մի փոքր
ժտածելուց հետո շարունակեց.

— Ամեն բան տեղի՞ն է:
— Ի հարկե, ի հարկե,—դրեթե միաժամանակ ասացին
Երիտասարդները:

Մերունին ստուգեց լարերը, ապա ասաց.

— Մնացածը իմ գործն է, գնացեք, ձեզ հաջողություն
և երջանկություն,—և ուղում էր ասել, —եթե վլադիմիրին
տեսնեք, ասացեք, որ քո հայրը իր սրբազն պարտքը կա-
տարեց, —բայց հանկարծ հիշեց, որ գնացքը բերելու էր իր
տղան, իր հարազատ, սիրելի, միակ տղան: Սիրտը ասեռ
դաշույնով խոցված լոեց...

Տիրեց ընդհանուր լուսություն:

— Ինչո՞ւ եք կանգնել, կուշանաք. հասեք ձեր ընկեր-
ներին:

— Զէ, հայրիկ, մեր ձեռքով...

— Դուք դեռ ջահել եք, ձեզ սպասում են շատ գործեր,
գնացեք, իրար սիրեցեք, բայց ամենից շատ սիրեցեք հայրե-
նի հողը, որ այսօր պղծում է ուխտազրուժ թշնամին...

Երիտասարդները ջերմորեն դրկախառնվելով բաժանվե-
ցին բարի ծերուկից:

Դմիտրի Պավլովիչը սիրակարութ հայացքով վերջին պն-
դամ նայեց իր տնակին, ուր անց էր կացրել կյանքի մեծ
մասը, հիշեց իր լավ ու վատ օրերը, (որոնք բոլորն էլ լավ՝
քաղցր թվացին). Հիշեց գեղեցկուհի Կատյուշային (Եկա-
տերինա Ալեքսանդրովնային), որին տեսել, ծանոթացել էր
մոտակա գյուղում, ապա ժրաշան Վալոդյային, նրա խաղերն
ու թոթովանքը, նրա պայծառ դեմքը գծագրվեց խավարի մեջ:
Ահա կարծես ասում է, —կատարիր, հայր, սուրբ պարտքը
հայրենի հողի համար:

— Այո, նա չէր բարձրանա շոգեքարշ, եթե վստահ մի-
ներ իր վրա...

Նա նայեց ժամացույցին ու քայլերն ուղղեց դեպի ան-
տառապատ մոտակա բլուրը, ուր եղել էր քիչ առաջ Յաշայի՛
հիտ...

— Տու-տու-տու...

— Վալողյան է, նրա ազդանշանը, որ ազգարարում է, պոշում ինքնազոհության:—Փայլատակեցին ծերունու աշքերը, ու ձեռքերը անվարան գործեցին:

Ահա, ահա գնացքը մոտենում է կամուրջին, ինչ թափով է գալիս, հողը դողում է:

— Ոչ, ոչ մի գերմանական գնացք շպետք է անցնի իմ կամուրջով,—գրեթե բղավեց նա այն ժամանակ, երբ հսկայական պայմաննի հետ, ահռելի հրդեհը բռնկվեց հիմնակործան կամուրջը ու նրա հետ դեպի անդունդը դահավիժող գնացքը...

Սեր պահակը միայն մի պահ տեսավ այդ ահեղ տեսարանը: Դիպուկ մի բեկոր հաջորդ վայրկյանից վերջ տվեց նրա կյանքին...

Մի քանի օր անց պարտիդանները՝ Օբլովի ընկերները, պատել էին Դմիտրի Պավլովիչ Սմելյակովի ու նրա մեքենավարորդու Վլադիմիր Դմիտրիշի դիակները ու թաղել իրենց տնակի առջևի ավել պարտեզում, հորձանուտ գետից ոչ շատ հեռու...

Հասարակ տապանաքարի վրա այժմ անցորդը կարդում է նրանց անուններից վերև գրված հետևյալ խոսքը.

— Սրբազն պարտքի խիզախ զինվորներ...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերադարձ	3
Դարնանամուտ	13
Բաջարան	19
Շիրակի դաշտերում	52
Երջանկություն	58
Մաքառման երգը	71
Ճենինականի զեպոյում	86
Երկրի ընդերթում	91
Արշալույսից առաջ	99
Դիրեկտորը	104
Սըրադան պատը	113

Պատ. խմբագիր ՀՄ. ՍԻՐԱՅ
Տեղ խմբագիր Ա. ՄԱՏԻՆՅԱՆ

Վ. 02430. Պատվեր 566, Տիրաժ 3000.
Տպագր. 7^{3/4} մամուլ, հեղ. մամուլ,
Հանձնված է արտադր. 16/XII 1947 թ.,
Ստորագրվ. է ապ. 15/III 1948 թ.

ՀՍՍՌ Մ. Սովետին կից
Պոլիգր. և Հրատ. Վարչ.
№ 3 տպարան, Ալա-
վերդյան № 65,
Երևան, 1948 թ.

ԱԿԱՏԱԼՈՅԾ ՎՐԻ ՊԱԿԻՆԵՐ

զետք է լիթի

Տաղմած է

ՀՀ 8 ն. առդ 10—աչխարը
> 9 > > 2—աշխարը
> 55 > > 12—սկավուճ են

աչխարը


աշխարը


սկավուճ են

Պատ. իսլամիկ ՀՄ. ՍԻՐԱՆ
Տեխ իսլամիկ Ա. ՄԱՏԻՆՅԱՆ

օպազր. 77/4 սասուլ. յաղ. սասուլ.
Հանձնված է արտազր. 16/XII 1947 թ.
Ստորագրվ. է տպ. 15/III 1948 թ.

ՀՍՍՌ Մ. Սովետին կից
Պոլից. և Հրամ. Վարչ.
№ 3 տպարան, Ալա-
վերդյան № 65,
Երևան, 1948 թ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028222

24389

60

